

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՆԱԴԴԱԼՅԱՆ ՄՀԵՐ ԿԱՐԵՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ատենախոսություն

ԺԹ.00.04 - «Կլինիկական, հատուկ հոգեբանություն» մասնագիտությամբ  
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ հոգ. գիտ. դոկ.,  
պրոֆ. Գ.Մ. Շահվերդյան

ԵՐԵՎԱՆ 2023

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3**

**ԳԼՈՒԽ 1. ԺԱՄԱՆԱԿԻ ԷՌԻԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ..... 10**

1.1 Ժամանակի ընկալման հիմնախնդրի պատմական հիմքերը և դրա հասկացման փիլիսոփայական ասպեկտները.....10

1.2 Ժամանակի հասկացման հոգեբանական հայեցակարգերը.....14

1.3 Ժամանակի ընկալման վրա ազդող հոգեբանական դետերմինանտները.....27

**ԳԼՈՒԽ 2. «ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱԸ ԱՊԱՐԱՏՈՒՄ..... 39**

2.1 Ժամանակին առնչվող հասկացությունների ընդհանրություններն ու տարբերությունները, ժամանակային հեռանկարը.....39

2.2 Ժամանակային հեռանկարի վրա ազդող դետերմինանտները.....41

2.3 Հոգեբանական տրավմայի ազդեցությունը ժամանակային հեռանկարի վրա.....51

**ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ..... 56**

3.1 Հետազոտական ընտրանքի ձևավորումը .....56

3.2 Հետազոտության մեթոդիկաները, նախագծումը և իրականացումը .....59

**ԳԼՈՒԽ 4. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՏՎՅԱԸՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ..... 73**

4.1 Մեթոդիկաներով ստացված տվյալների նախնական վերլուծությունը, փոխակերպումը համեմատելի միավորների .....73

4.2 Ստացված արդյունքների վիճակագրական համեմատությունը և կորելյացիաների անցկացումը.....77

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 96**

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 99**

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 100**

**ՀԱՎԵԼ ՎԱԾ..... 111**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Արդիականությունը:** «Ժամանակային հեռանկար» հասկացությունը համեմատաբար նոր է հոգեբանական գիտության մեջ, սակայն այն արդեն իր ուրույն տեղը և նշանակությունը ունի հոգեբանական բազմաթիվ հետազոտություններում: Արտահայտելով ժամանակի նկատմամբ մարդու վերաբերմունքի առավել ամբողջական մոդելը՝ ժամանակային հեռանկարը կապված է հոգեկան երևույթների մեծ բազմության հետ՝ ազդում է դրանց վրա և ինքնին կրում դրանց ազդեցությունը:

Ժամանակային հեռանկարը, լինելով զգայուն արտաքին ուժեղ ազդեցությունների նկատմամբ, փոփոխությունների է կրում սթրեսային գործոնների ազդեցությամբ և հանգեցնում է անձի հոգեբանական առանձնահատկությունների փոփոխության:

Այս համատեքստում յուրահատուկ արդիականություն և կարևորություն է ստանում մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ ժամանակային հեռանկարների ուսումնասիրությունը, քանի որ անհրաժեշտություն է առաջանում ընթացիկ ժամանակով փոփոխել և բարելավել մարտական գործողությունների մասնակից անձանց մատուցվող հոգեթերապևտիկ ծառայությունների որակը և արդյունավետությունը, իսկ ԺՀ հասկացումը իր կարևոր դերն է խաղում այդ գործընթացում: Բացի սրանից՝ ԺՀ-ն դիտարկվում է նաև անձնային առանձնահատկությունների հետ փոխկապակցվածության շրջանակում, ինչը աշխատանքը դարձնում է առավել արդիական և հնարավորություն է տալիս լույս սփռել ԺՀ մինչ այս չուսումնասիրված յուրահատկությունների վրա:

**Հիմնախնդրի մշակվածությունը:** Տրավմա և դրա արդյունքում առաջացած հետտրավմատիկ սթրեսային խանգարում (ՀՏՄԽ) ունեցող անձանց հետ իրականացվող հոգեթերապևտիկ աշխատանքում մեծ է ժամանակային հեռանկարների ազդեցությունը, ինչը ապացուցվում է Ֆ. Զիմբարդոյի և Զ. Բոյդի աշխատանքներում, ովքեր էլ մեծ ներդրում ունեն «Ժամանակային հեռանկար» հասկացության մշակման և դրա հետ կապված հետազոտություններում:

Միևնույն ժամանակ ՀՏՄԽ կոգնիտիվ տեսությունները ենթադրում են, որ անցյալի բացասական համոզմունքները, այդ թվում՝ նաև բացասական անցյալի

ժամանակային հեռանկարը, գործոններ են, որոնք ամրապնդում են ՀՏԽ փստանիշները:

Պատերազմի վետերանների մոտ փորձարարական հետազոտությունները հաստատում են, որ անցյալի փորձի և նեգատիվ կամ կարճաժամկետ թվացող ապագայի փոխկապակցվածության բարդությունները կորելացվում են ՀՏԽ փստանիշների բարձր մակարդակի հետ, իսկ ճանապարհային պատահարների մասնակիցներից և փախստականներից կազմված հետազոտական խմբերում ՀՏԽ փստանիշները ուղիղ կախվածության մեջ են բացասական անցյալի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարներից: Այս փաստերը հանդիսանում են ՀՏԽ և ժամանակային հեռանկարների փոխկապակցվածության հետազոտման օրինակ, ինչը, սակայն, բացահայտում է արտաքինից ակնհայտ օրինաչափություններ և հիմքեր է ստեղծում երևույթի ավելի մանրամասն ուսումնասիրության համար:

**Հետազոտության օբյեկտը:** Հետազոտության օբյեկտն է ժամանակային հեռանկարը, անձնային գծերը և ՀՏԽ-ն մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ:

**Հետազոտության առարկան:** Հետազոտության առարկան է ժամանակային հեռանկարների, անձնային գծերի և ՀՏԽ կապը մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ:

**Նորույթը:** 1. Իրականացվել է մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում ժամանակային հեռանկարների ուսումնասիրմանն ուղղված հետազոտություն և ինչպես նաև անձնային գծերի հետ դրանց փոխկապակցվածությունների բացահայտում:

2. Փորձ է արվել ցույց տալ, որ մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում, անկախ ՀՏԽ փստանիշների առկայությունից, «բացասական» և «դրական» ժՀ-ների արտահայտվածության ցուցանիշները տարբեր են:

**Տեսական նշանակությունը:** Աշխատանքում մանրամասն վերլուծության են ենթարկվել ժամանակի ընկալման և ժամանակային հեռանկարների տեսությունները և մոդելները: Ժամանակային հեռանկարների՝ Ֆ. Ջիմբարդոյի և Ջ. Բոյդի դասական մոտեցման վրա հիմնվելով՝ իրականացվել է ժամանակային հեռանկարների

ուսումնասիրություն մարտական գործողությունների մասնակից անձանց շրջանում, ինչը բացահայտել է նրանց մոտ «դրական» և «բացասական» ժՀ-ների արտահայտվածության նոր օրինաչափություններ: Սա ընդլայնում և հարստացնում է ժամանակային հեռանկարի հոգեբանական նշանակության մասին պատկերացումները և իր ներդրումն է ունենում առկա տեսական հիմքերի ամբողջականացման գործում, քանի որ ժամանակային հեռանկարը առաջին անգամ դիտարկվում է անձնային առանձնահատկությունների հետ միասին և մարտական գործողությունների մասնակցության համատեքստում:

**Գործնական նշանակությունը:** Իրականացված հետազոտությունը ներդրվել է առկա հոգեթերապևտիկ մարտավարությունների կատարելագործման համար, որոնք առավել արդյունավետ են մարտական գործողությունների մասնակից անձանց հետ աշխատանքում: Բացի այս հետազոտությունը կարող է հիմք դառնալ մարտական գործողությունների մասնակից անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության կազմակերպման և համակարգայնացման համար:

**Տեսամեթոդաբանական հիմքն են կազմում** Զ. Վեարդենի առաջարկված դրոյթները հոգեբանական ժամանակի և դրա ընկալման մասին, ինչպես նաև՝ նրա կողմից «ներքին և քիմիական ժամացույցների» մասին գիտական հայացքների համապարփակ վերլուծությունը: Ժամանակի ընկալման վրա ազդող հոգեբանական դետերմինանտների էության հասկացման համար հիմք են հանդիսացել Ս. Դրոյտ-Վոլբեի, Կ. Ֆորտինի, Ռ. Բրետոնի, Ռ. Ռուսոյի և այլոց հետազոտությունները: Ժամանակային հեռանկարի էության մասին պատկերացումները հիմնվում են Ֆ. Զիմբարդոյի և Զ. Բոյդի առաջարկած ժՀ ընդհանուր սոցիալ-կոգնիտիվ կոնցեպտուալ մոդելի վրա, ինչը գաղափարապես և մեթոդաբանորեն ուղղորդում է ժՀ՝ նրանց կողմից իրականացվող հետազոտությունները, շարունակում և ընդլայնում է Կ. Լևինի ավանդույթները՝ առաջ տանելով ժՀ լայն կոնցեպտուալիզացիան՝ որպես հիմնադիր գործընթաց ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գործառույթների մակարդակում: ԺՀ-ների և տրավմատիկ իրադարձությունների կապի ուսումնասիրությունները հիմնվում են Ֆ. Զիմբարդոյի և Ռ. Սվորդի մոտեցումների վրա:

**Նպատակը:** Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ժամանակային հեռանկարների և անձնային առանձնահատկությունների դրսևորման օրինաչափությունները և փոխակապակցվածությունը մարտական գործողությունների մասնակիցների շրջանում և ՀՏՄ ախտանիշների առկայության պարագայում:

**Խնդիրները:**

1. Սույն աշխատանքի հիմնախնդիրների համատեքստում ուսումնասիրել ժամանակային հեռանկարներին, դրանց վրա անձնային առանձնահատկությունների և ՀՏՄ ազդեցությանը վերաբերող գիտական գրականությունը:
2. Մշակել այս աշխատանքում դիտարկվող հիմնախնդիրներին համապատասխան հետազոտվող հոգեբանական երևույթների չափման մեթոդակազմ, որը թույլ կտա առավելագույնս դիտարկել և բացահայտել դրանք հետազոտական ընտրանքի մոտ:
3. Մշակել հետազոտական նախագիծ և դրան համապատասխան իրագործել հետազոտական մտահաղացումները:
4. Արձանագրել և հավաքագրել ստացված տվյալները, բերել դրանք չափելի և համադրելի միավորների:
5. Վերլուծել և համեմատել հետազոտության միջոցով ստացված տվյալները՝ ըստ վարկածով ձևավորված հետազոտական խմբերի:
6. Համեմատել և համադրել հետազոտության արդյունքում ստացված միավորները միմյանց հետ՝ փորձելով գտնել առկա վիճակագրական փոխակապակցվածությունները և կորելյացիաները:
7. Մշակել առաջարկություններ՝ ուղղված ՀՏՄ ախտանիշների բարձր մակարդակով անձանց տրամադրվող հոգեթերապևտիկ աջակցության բարելավմանը:

**Վարկածը:** Ենթադրվում է, որ մարտական գործողությունների մասնակիցների շրջանում «բացասական» ժամանակային հեռանկարների և որոշ անձնային գծերի արտահայտվածության մակարդակը բարձր է նույնիսկ հետտրավմատիկ սթրեսային խանգարման բացակայության պարագայում, այնուհանդերձ, ՀՏՄ ախտանիշների

բարձր մակարդակը ունի ավելի ուժեղ ազդեցություն նեգատիվ անցյալի, հեղոնիստական և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարների և հիպոմանիայի, դեպրեսիայի ու պարանոյալության անձնային գծերի վրա, քան մասնակցության փաստը:

**Պաշտպանությանը ներկայացվող դրույթներ:**

1. Ի տարբերություն մարտական գործողությունների չմասնակցած անձանց՝ մարտական գործողությունների մասնակցած և ՀՏՄԽ ախտանիշներ ունեցող խմբերում «դրական» ժամանակային հեռանկարների արտահայտվածությունը թույլ է, իսկ «բացասական» ժամանակային հեռանկարների արտահայտվածությունը՝ ուժեղ:
2. Անձնային առանձնահատկությունների արտահայտվածության մակարդակը նորմայից բարձր է մարտական գործողությունների մասնակիցների և ՀՏՄԽ ախտանիշների բարձր մակարդակ ունեցող անձանց շրջանում՝ ի տարբերություն մարտական գործողությունների մասնակցություն չունեցած անձանց:
3. «Դրական» ժամանակային հեռանկարները հակադարձ՝ իսկ «բացասական» ժամանակային հեռանկարները ուղիղ կորելյացիայի մեջ են գտնվում հիպոխոնդրիայի, դեպրեսիայի և պարանոյալության արտահայտվածության ցուցանիշների հետ:
4. Ի տարբերություն ՀՏՄԽ ախտանիշներ չունեցող անձանց՝ ՀՏՄԽ ախտանիշներ ունեցող անձանց շրջանում պարանոյալության, շիզոֆրիզիայի և հիպոմանիայի ցուցանիշների հետ ֆատալիստական ներկայի և նեգատիվ անցյալի կորելյացիան ավելի ուժեղ է արտահայտված:

**Ընտրանքը:** Որպես հետազոտության թիրախ են ընտրվել մարտական գործողությունների մասնակցած անձինք, իսկ մարտական գործողությունների մասնակցության գործոնի ազդեցությունը մնացած այլ գործոններից տարանջատելու համար ընտրվել է նաև նույն տարիքային միջակայքում գտնվող, նույն սեռին

պատկանող, սակայն մարտական գործողությունների երբևէ չմասնացած անձանցինց կազմված ստուգիչ խումբ:

Փորձարարական խումբը փաստացի կազմել են թվով 61 տղամարդիկ (միջին տարիքը՝ մոտ 30), իսկ հետազոտական ստուգիչ խումբը կազմել են 60 տղամարդիկ (միջին տարիքը՝ մոտ 28):

**Գործիքակազմը:** Հետազոտության անցկացման համար ընտրվել են ԱՄՆ կառավարությանն առընթեր գործող «ՀՍՄԽ ազգային կենտրոնի» առաջարկած «Առաջնային օգնության ՀՍՄԽ սքրինինգ թեստը՝ ըստ DSM-5-ի» հարցարանը (PC-PTSD-5) հետազոտվողների մոտ ՀՍՄԽ ախտանիշների մակարդակի բացահայտման համար, Զիմբարդոյի և գործընկերների մշակած «Ժամանակային հեռանկարի հարցարանը» (ZTPI) ընտրվել է ժամանակային հեռանկարների հասկացման համար, իսկ անձնային գծերի և հոգեպաթոլոգիաների բացահայտման համար օգտագործվել է «Մինեսոտայի բազմափուլ անձնային հարցարանի» (MMPI) սեղմ տարբերակը՝ «Մինի մոլտը»:

Տվյալների վերլուծության ընթացքում տարբեր խմբերում ստացված միջին արդյունքների համեմատության դեպքում հավաստիության համար հաշվարկվել է «Սթյուդենտի t գործակիցը»:

Կորելյացիաների դեպքում կիրառվել է «Սպիրմենի ռանգային կորելյացիայի գործակիցը», որը լավագույնս է համապատասխանում տվյալների նման համակազմին, քանի որ համեմատվող արդյունքները ստացվել են չափման «անընդհատ» սանդղակով, ինչպես նաև դրանք «ոչ պարամետրիկ» են, այսինքն՝ չեն հիմնվում արդեն իսկ առկա վիճակագրական տվյալների վրա, այլ չափում են գլխավոր միտումները միջին նշանակությունների նկատմամբ:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախոսությունն ընդգրկում է ներածական, հիմնական և ամփոփիչ հատվածներ: Հիմնական հատվածը կազմված է 4 գլուխներից, որոնցից առաջին երկուսում արտահայտված են ժամանակի՝ որպես հոգեբանական երևույթի նկատմամբ գիտական հայացքների զարգացումը և «Ժամանակային հեռանկար» հասկացության դերի դիտարկումը հոգեբանության կատեգորիալ ապարատում: Երրորդ և չորրորդ գլուխներում նկարագրված են հետազոտական



գործընթացը և տվյալների վերլուծությունը ընգրկող հատվածները: Աշխատանքը ավարտվում է եզրակացություններով, որոնք ամփոփում են այն՝ ըստ դրված խնդիրների լուծման աստիճանի չափանիշի:

Աշխատանքի թեման ներկայացված է հեղինակի կողմից 3 գիտական հոդվածներում, որոնցից մեկը «Սկոպուս» համակարգում գրանցված պարբերականում:

# ԳԼՈՒԽ 1. ԺԱՄԱՆԱԿԻ ԷՌԻԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

## 1.1 Ժամանակի ընկալման հիմնախնդրի պատմական հիմքերը և դրա հասկացման փիլիսոփայական ասպեկտները

Ժամանակի ընկալումը հոգեկան ամենաբարդ գործընթացներից է, որը հասարակ պերցեպտիվ գործընթացից վերաճում է կոգնիտիվ բարդ երևույթի, և որի վրա կարող են ազդել ընկալողի ուշադրությունը, հույզերը, նրա տարիքը, ինչպես նա՝ բուն ընկալվող ժամանակահատվածի տևողությունը, հաջորդականությունը և անընդհատությունը: Ժամանակի սուբյեկտիվ ապրումը թույլ է տալիս կողմնորոշվել ժամանակի մեջ, հասկանալ նրա ընթացքի արագությունը, վերարտադրել և համեմատել առանձին ժամանակահատվածները և այլն [6,7]:

Հաշվի առնելով ուսումնասիրվող երևույթի բարդությունը՝ տվյալ աշխատանքում ժամանակի ընկալման երևույթի՝ գիտական գրականության մեջ արտացոլվածության տեսական ուսումնասիրման համար հիմք է վերցվել Ջ. Վեարդենի «Ժամանակի ընկալման հոգեբանություն» գրքում կիրառված շարադրման հերթականության տրամաբանությունը, սակայն չի սահմանափակվել միայն դրանով [107]: Տվյալ հերթականությունը թույլ է տալիս մոտենալ երևույթի ուսումնասիրմանը և՛ պատմական զարգացման տրամաբանության, և՛ ուսումնասիրվող նյութի կիրառականության տեսանկյուններից:

Ժամանակի ընկալման հարցերը գտնվում են փիլիսոփայական մտքի ուշադրության կենտրոնում դեռևս անտիկ ժամանակներից, սակայն ժամանակակից հիմնախնդիրներին մոտ տեսանկյունից դրանք սկսել են լրջորեն դիտարկվել ավելի ուշ ժամանակաշրջաններում:

Հ. Նիկոլսը նկարագրում է ժամանակի ընկալման՝ 19-րդ դարի վերջում առաջարկված մի շարք փիլիսոփայական մոտեցումներ: Փիլիսոփաներին խմբերի բաժանող և ժամանակի հոգեբանության վրա պրակտիկ հետևանքներ ունեցող հարցն այն է՝ արդյոք ժամանակի ընկալումը բնածին երևույթ է, թե՞ այն հիմնվում է նախկին ինչ-որ փորձի վրա [82]:

Ի. Կանտը «Մաքուր գիտակցության քննադատություն» իր հայտնի աշխատության մեջ ենթադրում է, որ ժամանակի ընկալումը գոյություն ունի ապրիորի (ինքնաբերաբար), ինչպես և տարածության ընկալումը, մի բան, որը բնածին է և կախված չէ փորձից [72]:

Կանտյան մոտեցումը նրան, որ ժամանակը հանդիսանում է «տրվածություն», կտրուկ հակադրվում է Մ. Գյույոյի դիրքորոշման հետ: Վերջինիս «Ժամանակի գաղափարի ծագումը» աշխատության մեջ ուսումնասիրվում են ոչ միայն ժամանակի մասին պատկերացումների զարգացման հարցերը, այլ նաև քննարկվում են ժամանակի ընկալման տարբեր տեսանկյունները, և հաճախ այնպիսի փաստարկներով, որոնք ըստ Վեարդենի՝ թվում են զարմանալիորեն ժամանակակից և հետագայում հայտնվելու են փորձարար-հոգեբանների ուշադրության կենտրոնում: Գյույոն վստահ է, որ ժամանակի ընկալումը չի կարող գոյություն ունենալ ապրիորի և զարգանում է տարբեր աղբյուրներից ստացված փորձին զուգահեռ [107,58]:

Ըստ Գյույոյի՝ տարածության և ժամանակի ընկալումների կապը նույնպես կարևոր է, քանի որ տարածության ընկալումը ուսումնասիրվել է ավելի վաղ, քան ժամանակի ընկալումը: «Նենց տարածության մեջ շարժումն է ստեղծում ժամանակը մարդկային գիտակցության մեջ: Առանց շարժման չկա ժամանակ» [58, էջ 47]:

Գյույոյի գաղափարները հատուկ ազդեցություն են թողել ֆրանկախոս հոգեբանների վրա, որոնք զգալի ներդրում են ունեցել ժամանակի ընկալման ուսումնասիրությունների վրա ինչպես ընդհանուր տեսանկյունից, այնպես էլ ժամանակի ընկալման զարգացման տեսանկյունից մասնավորապես:

Հարցերից մեկը, որը հայտնվել է փիլիսոփաների հատուկ ուշադրության կենտրոնում, վերաբերում է «ներկա պահ»-ին կամ այն երևույթին, որը Ու. Ջեմսը և այլոք անվանել են «հավանական» ներկա [68]: Այս տեքստը կարդալիս անգամ ձեզ մոտ կարող է ստեղծվել ընթացող ներկայի տպավորություն: Տողը, որը կարդում եք հենց այս պահին, ունի ներկայի որոշակի որակներ, միևնույն ժամանակ նախորդ տողերը և պարբերությունները գտնվում են անցյալում, և գոյություն ունի ինչ-որ բան, որը պետք է տեղի ունենա ապագայում: Գոյություն ունեն երկու հարցեր, որոնք զբաղեցնում են

ինչպես փիլիսոփաների, այնպես էլ հոգեբանների մտքերը, և դրանք վերաբերում են այդ ներկա պահի էությանը և նրան, թե ինչքան է այն տևում [107]:

Գյույոն դիտարկում է ներկան՝ որպես անցյալի և ապագայի միջև գտնվող յուրատեսակ փոքր սահման: «Իսկական ներկան պետք է լինի անբաժանելի պահ, անցյալից ապագա անցումի դրվագ, պահ, որը ընկալվում է անվերջ փոքր, ծնվում և մահանում է միաժամանակ» [58, էջ 30]:

Փիլիսոփայական շրջանակներում ազդեցիկ է «հավանական» ներկայի և ժամանակի գիտակցման մեկնաբանությունը, որը մեծ մասամբ փոխառվել է Է. Հուսսերլից [81]:

Հուսսերլը օգտագործում է Ու. Ջեմսի կողմից ներդրված «թամբի» փոխաբերությունը, ըստ որի՝ մարդը գնում է «հավանական» ներկայով, ինչպես ձիու վրա: Ժամանակային «թամբը» ինչ-որ անվերջ սուր դանակի սայր չէ (ի տարբերություն Գյույոյի տեսակետի), այն ունի որոշակի տևողություն, թեև կարճ: Հուսսերլը ենթադրում է, որ ընթացող ներկան իրականում կազմված է երեք մասից: Դրանցից մեկը ներկան է ինքնին, «առաջնային տպավորությունը», այն, ինչ մենք իրապես ապրում ենք ներկա պահին: Երկրորդը ոչ վաղ անցյալն է, որը Հուսսերլը անվանում է «պահում»: Մինչև այս պահը մարդկանց մեծ մասը կհամաձայներ, որ սա հեշտությամբ համաձայնեցվում է առողջ տրամաբանության հետ, սակայն Հուսսերլը ավելացնում է նաև այն, ինչը անվանում է «պրոտենցիա», որը որպես ներկայի մաս ներառված ապագայի ասպեկտ է [68,81]:

Փիլիսոփաները մինչև վերջերս զբաղվում էին նման հարցերով, թեև մի փոքր այլ համատեքստում: Գլխավոր հարցերից մեկը վերաբերում է ֆենոմենային կոնտինուումին՝ նրան, թե ինչպես ենք մենք ընկալում ժամանակի հոսքը նրա ծավալմանը զուգընթաց: Բ. Դեյնթոնը տալիս է փիլիսոփաներին հաճախ հանդիպող սուր հարցերի ներածություններ, որտեղ խոսվում է «ժամանակի մեջ ձգված» ապրումների մասին: Երբ մենք ապրում ենք մի քանի մասից կազմված իրադարձություն, օրինակ, երբ մեկնարկում է խոշոր հրթիռ, ապրման մեջ կան տեսական և լսողական կողմեր, ինչպես նաև կա ժամանակի մեջ իրադարձությունների հաջորդականություն: Այդպիսով առաջանում է

հարց, թե ինչպե՞ս են փոփոխությունները և հերթականությունը արտացոլվում մեր անմիջական փորձում [34]:

Հավանաբար իրադարձության ներկայացման առավել բնական միջոցը, ինչպես պնդում է հենց Դեյնթոնը, «էքստենսիոնալ» մոտեցումն է, ըստ որի՝ հրթիռի տեսքը և ձայնը չեն հանդիսանում վայրկենական, այլ տեղի են ունենում յուրատեսակ ժամանակային պատուհանի մեջ, որը հետո փոխարինվում է (հնարավոր է՝ մասամբ վերածածկվող) ժամանակային պատուհանով: Սակայն առաջարկվել է նաև այլ, հնարավոր է՝ ինտուիտիվ ավելի քիչ գրավիչ մոտեցում՝ «պահման մոդելը»: Այստեղ բոլոր իրադարձությունները ընկալվում են որպես «ապրման վայրկենական դրվագ», որը, այնուամենայնիվ, կարող է ունենալ մի քանի չափումներ, որոնք նրան կտան ընդլայնված սուբյեկտիվ բնույթ, նույն կերպ, ինչպես ֆիզիկայի ժամանակակից մի շարք տեսություններում ենթադրաբար մատերիայի հիմք հանդիսացող տարրական լարերի համար հաստատվում են հավելյալ տարածական չափումներ [34]:

Իհարկե, նման բարդ փաստարկները չափազանց դժվար մեկնաբանելի են տվյալ համատեքստում, սակայն դրանք ավելի մանրամասն կարելի է գտնել Դեյնթոնի աշխատության մեջ:

Մեկ այլ ժամանակակից փիլիսոփա՝ Յ. Ֆիլլիպսը, նույնպես զբաղվում է ժամանակի փիլիսոփայությանն առնչվող հարցերով, որոնցից մի քանիսը փոխկապակցված են ժամանակի ընկալման հոգեբանության հետ: Ժամանակի ընկալման տևականության առանձնահատկություններից մեկը, որը նշվում է շատ փիլիսոփաների կողմից, այն է, որ հենց իր՝ ժամանակի «զգացողությունը» (կամ որակը) ունի ժամանակային ասպեկտներ: Ոչ ոք չի մտածում, որ կանաչ գույնի զգացողությունը հենց կանաչ գույնն է, կամ 200 գրամ քաշի զգացողությունը հենց ինքն իրենով կշռում է 200 գրամ, սակայն, օրինակ, 2 վայրկյանի զգացողությունը իսկապես կարող է ձգվել 2 վայրկյան: Այսպիսով՝ ժամանակի որակները ինքնատիպ են այն իմաստով, որ նրանք թվում են ընկալվող իրի հետ նույնական, ինչը, ըստ Ֆիլլիպսի, հանդիսանում է դրա յուրահատկությունը [92]:

Ֆիլլիպսը բացատրում է դա նրանով, ինչը կոչում է «նախկ» տեսակետ («նախկ» հասկացությունը այստեղ չի օգտագործվում նսեմացնող իմաստով), ըստ որի՝ «մեր

փորձը ժառանգում է իրադարձությունների ժամանակային կառուցվածքը, որը հանդիսանում է նրա բովանդակությունը» [92, էջ 142]:

Վերադառնալով մեր նախորդ օրինակին՝ նրան, որ 2 վայրկյանի զգացողությունը «ժառանգում է» 2 վայրկյան տևելու հատկությունը, որը ուներ դիտարկվող իրադարձությունը՝ կարելի է նկատել, որ «նախ» տեսակետը շատ գրավիչ է նրանց համար, ովքեր չգիտեն ոչինչ փիլիսոփայական փաստարկների մասին: Այն, հավանաբար, թույլ է տալիս խուսափել առողջ մտքին հակասող խնդիրներից, որոնցից է «միաժամանակյա գիտակցման սկզբունքը», ըստ որի, եթե մարդը գիտակցում է տևողություն կամ հաջորդականություն, նա դա գիտակցում է մեկ պահի, և այդպիսով հարց է առաջանում, թե որքանով է հնարավոր ընդլայնված ժամանակային փորձը (տեսակետ, որը հիշեցնում է «ռետենցիոնալ» մոտեցումը): Այնուամենայնիվ, «նախ» մոտեցումը հանդիպում է մի շարք բարդությունների, հատկապես «ժամանակային իյուզհաներին», երբ իրադարձությունների ֆիզիկական տևողությունը կամ անգամ դրանց հերթականությունը կարող են ընկալվել սխալ: Ֆիլիպսը ցույց է տալիս, թե ինչպես նրանցից շատերը կարող են համակերպվել ժամանակի փորձի նկատմամբ «նախ» տեսակետի հետ [92,91]:

## 1.2 Ժամանակի հասկացման հոգեբանական հայեցակարգերը

Փորձարարական հոգեբանությունը, այն տեսքով, որով այն զարգանում էր 19-րդ դարի երկրորդ կեսին, շատ ջանքեր է գործադրել զգայությունների ուսումնասիրությունների ոլորտում՝ հոգեֆիզիոլոգիական հետազոտություններում օգտագործելով պարզագույն ազդակները և ազդակների օբյեկտիվ ցուցանիշները (որոնցից է ուժգնությունը)՝ կապելով դրանց կողմից առաջացող զգայությունների հետ: S. Ֆեխների «Հոգեֆիզիկայի տարրերը»-ը հենց նմանատիպ նշանակալից աշխատություն է [46]:

Տեսողության, լսողության, համի և հոտառության ուսումնասիրությունների հետ միասին տարածված էին նաև ժամանակի տևողության հետազոտությունները, ավելի

շատ, քան դրանք այսօր են տարածված, երբ, օրինակ, տեսողական ընկալման կողմերին ավելի շատ ուշադրություն է դարձվում, քան ժամանակի ընկալմանը:

Հիմնական գաղափարն այն է, որ գոյություն ունի «ժամանակի զգայություն» (Zeitsinn), որը համանման է տեսողության և լսողության զգայություններին, և որի տևողության օբյեկտիվ չափումները, որոնք ստացվել են մեխանիկական և էլեկտրոնային ժամացույցների միջոցով, կարող են կապված լինել տևողության մասին առանձին մարդկանց կողմից արվող դատողությունների հետ: Այդ հետազոտություններում ենթադրվում է, որ ժամանակը հնարավոր է ընկալել անմիջականորեն, և որ ազդակի կամ իրադարձության շարունակականությունը հանդիսանում է իրադարձության ընկալելի հատկություն, ինչպես՝ նրա գույնը կամ նրա հետ կապված ձայները: Այս տեսակետը Ֆիլլիպսի կողմից անվանվում է «ռեալիզմ» [91]:

«Der Zeitsinn» աշխատության հեղինակ Կ.Վիերորդթը և իր աշակերտները ներգրավված էին զգայությունների չափման հետազոտություններում դեռևս 1850-ական թվականներից, իսկ հետագայում նրանք անդրադառնում են նաև տևողության հետազոտություններին: Վիերորդթի աշակերտ Հյորինգի՝ 1864 թվականի ատենախոսությունը համարվում է ժամանակի ընկալման փորձարարական ամենավաղ հետազոտություններից մեկը, եթե ոչ՝ առաջինը: «Der Zeitsinn»-ում անդրադարձ է արվում տևողության ընկալման բազմաթիվ հետազոտությունների, որոնց մեծ մասում հենց Վիերորդթը կամ իր աշակերտները հանդես են գալիս որպես հետազոտվողներ: Վիերորդթի ամենատպալուրիչ հայտնագործություններից մեկը հետագայում ստանում է «Վիերորդթի օրենք» անունը: Պատկերացնենք, որ հետազոտվողը վերարտադրել է որևէ միջակայքի որոշակի ժամանակային հատվածներ. «Վիերորդթի օրենքը» ցույց է տալիս, որ միջակայքում ամենակարճ ժամանակային հատվածները, որպես կանոն, վերարտադրվում են որպես ավելի երկար, քան նրանք կան իրականում, միևնույն ժամանակ ավելի երկար ժամանակային հատվածները վերարտադրվել են որպես ավելի կարճ, քան իրականում: Ինչ-որ տեղ՝ մեջտեղում, գտնվում է «անտարբերության կետը», որտեղ ժամանակային միջակայքը վերարտադրվում է ճշգրիտ կերպով [107]:

Հ. Լեժենը և Ջ. Վեարդենը բերում են «Der Zeitsinn»-ում ներկայացված «Վիերորդթի օրենքի» բազմաթիվ օրինակներ, և Վեարդենի առանձին աշխատության մեջ քննարկվում են «Վիերորդթի օրենքին» վերաբերող այլ տվյալներ [76,112]:

«Վիերորդթի օրենքին» համապատասխանությունը կարճ ժամանակային միջակայքերի վերարտադրման դեպքում ընդհանրություն է [69], թեև այն հանդիպում է ոչ ամենուր, հատկապես առանձին անձանց հետազոտությունների դեպքում [116]:

Վիերորդթը անցկացրել է ավելի բազմազան հետազոտություններ, քան ուղղակի վերարտադրման հետազոտություններն են: Նրա հետազոտություններից մի քանիսը ներառում են մետրոնոմի հարվածների հաճախականության ընկալումը (ոչիմի յուրատեսակ ընկալում). նա նաև ուսումնասիրում է շատ երկար ժամանակային միջակայքերի տևողության խոսքային գնահատումը և առաջիններից է, ով նկատում է, որ ձայնային և տեսողական ազդակների տևողությունները տարբեր են ընկալվում:

Վիերորդթի «անտարբերության կետը» գրավում է նրան հաջորդող, ինչպես նաև ավելի ուշ հայտնի դարձած հոգեբանների երևակայությունը: Հավանաբար, գիտնականներին թվում էր, թե կա որևէ յուրահատկությունը հատվածներում, որոնք ճշգրիտ են արտացոլվում, անգամ այն աստիճան, որ «անտարբերության կետը» կարող էր թվալ ժամանակի ընկալման ինչ-որ հիմնաքարային միավոր: Սակայն, ինչպես ցույց են տալիս Լեժենը և Վեարդենը՝ օգտագործելով Վիերորդթի և այլոց տվյալները, «անտարբերության կետը» չի հանդիսանում ֆիքսված բացարձակ միավոր, այլ հավանաբար կախված է օգտագործվող հատվածների միջակայքերից [76]:

Սա բերում է մտքի, որ «անտարբերության կետը» կարող է կապ ունենալ հետազոտության մեջ օգտագործվող բոլոր հատվածների որոշ կենտրոնական միտումների հետ, ինչպիսիք են, օրինակ, միջինը կամ մերիդիանը: Հ. Հոլլինգվորթը իր հոդվածում [65], որը նախանշում է Հ. Հելսոնի ավելի ուշ արված ադապտացիան, ենթադրում է հենց նման բացատրություն [61]:

Լեժենը և Վեարդենը բերում են օրինակներ, որտեղ այս գաղափարը լավ է աշխատում, քանի որ «անտարբերության կետը», մեծ հավանականությամբ, ճշգրիտ է հետևում օգտագործվող հատվածների միջին արդյունքներին: Սակայն կան դեպքեր, երբ «անտարբերության կետը» հեռու է ցանկացած միջին արդյունքից, և դեպքեր, երբ չի



կարող ձևավորվել կենտրոնական միտում (օրինակ՝ իրավիճակներում, երբ գնահատվում է միայն մեկ միջակայք, կամ օգտագործվում է մեկ փորձ): Թեև «Վիերորդոթի օրենքին» համապատասխանության տարբեր օրինակները կարող են նման լինել միմյանց, թվում է, թե ընդհանուր բացատրություն գտնելը անհնար է: Չնայած սրան՝ «Վիերորդոթի օրենքի» նկատմամբ հետաքրքրությունը պահպանվում է նաև որոշ ժամանակակից հետազոտություններում [56,15]:

Վ. Վունդտը ուսանող էր Թյուրինգենում այն ժամանակ, երբ Վիերորդոթը այնտեղ պրոֆեսոր էր: Չկա նրանց հանդիպման որևէ ապացույց, և դժվար է ասել ազդել են արդյոք Վիերորդոթի գաղափարները Վունդտի վրա. այնուամենայնիվ, Վունդտի՝ Լայպցիգում գտնվող հայտնի լաբորատորիայում նույնպես անց են կացվել ժամանակի ընկալման հետազոտություններ [107]:

Ժամանակի ընկալմանը վերաբերող գլխավոր հարցերից մեկը, որը ուսումնասիրվում էր փորձարարական հոգեբանության սկզբնավորման ժամանակաշրջանում, այն է, թե արդյոք տևողության մասին զգայական դատողությունները ենթարկվում են Վեբերի օրենքին:

Վեբերի օրենքը, որ նաև անվանվում է Վեբեր-Ֆեյսների օրենք, պատմականորեն կարևոր հոգեբանական օրենք է, որը քանակապես արձանագրում է տրված ազդակում փոփոխությունների ընկալումը: Ըստ այս օրենքի՝ ազդակի նվազագույն փոփոխությունը, որը կլինի նկատելի, հանդիսանում է նախնական ազդակի մշտական համեմատականը [70]:

Այս օրենքը հնարավոր է հեշտությամբ կապել ինչպես լաբորատոր պայմաններում, այնպես էլ իրական կյանքում առկա զգայական դատողությունների հետ: Եթե ներկայացված աղմուկի երկու աղբյուրները ցածր են, ապա նրանց միջև առկա փոքր տարբերությունը անգամ հեշտ կլինի նկատելի, սակայն եթե նրանք լինեն ավելի բարձր, ապա ազդակների ուժգնության տարբերությունը կարող է բավարար չլինել դա նկատելու համար:

«Վեբերի մասնիկը» կարելի է դիտարկել որպես զգայական տարբերակման նրբության չափանիշ՝ անկախ նրանից՝ համապատասխանում են պնդումները ամբողջությամբ Վեբերի օրենքին, թե ոչ: Եթե «Վեբերի մասնիկը» փոքր է, ապա

բացահայտվում են ազդակների միջև ոչ մեծ տարբերությունները, իսկ եթե այն մեծ է, ապա երկու ազդակների ուժգնությունների հարաբերական տարբերությունը պետք է լինի ավելի մեծ, որպեսզի այն հնարավոր լինի հայտնաբերել:

Վերերի օրենքին համապատասխանությունը հանդիսանում է ժամանակային դիսկրիմինացիայի մի շարք տեսությունների տարբերակիչ գիծը, որտեղ օգտագործվում են ժամանակի գնահատման զգայունության համեմատության ֆրակցիաներ, որոնք նման են Վերերի առաջարկածին [107]:

Ժամանակի ընկալման հետազոտությունները դիտարկելիս հաճախ նշվում է, որ ժամանակի ընկալման ուսումնասիրությունները դժվարանում են այն պատճառով, որ չկա դրա համար ակնհայտորեն պատասխանատու ինչ-որ օրգան: Եթե, օրինակ, տեսողության և լսողության մասին գիտակարգերի մեջ կարելի է սկսել համապատասխան զգայարանների ֆիզիկական հատկությունների ուսումնասիրություններից, ապա ժամանակի ընկալմամբ զբաղվող գիտնականը զուրկ է այս հնարավորությունից: Այնուամենայնիվ, այս ոլորտում գերակայող գաղափարներից մեկը եղել է այն, որ գոյություն ունի «ներքին ժամացույցի» տեսքով յուրատեսակ «օրգան», որը որոշում է ժամանակը:

Անգլալեզու գրականության մեջ Հադսոն Հոգլենդի անունը սովորաբար ասոցացվում է կոնցեպցիայի հետ, որ մարդիկ ունեն յուրատեսակ «քիմիական ժամացույցներ»: Այս կոնցեպցիան իր հերթին հանդիսանում է 1960-ականներին մշակված «ներքին ժամացույցների» մոդելներին նախորդող տեսությունը: Սակայն այս հարցում պատմական առաջնահերթությունը իրականում պատկանում է Մ. Ֆրանսուային, ով հայտնի ֆրանսիացի հոգեբան Հ. Պյերոնի աշակերտն էր: Պյերոնը 1927 թվականին հրապարակում է հետազոտություն, որում օգտագործվում է դիաթերմիան (բարձր հաճախականությամբ էլեկտրական հոսանքի անցկացումը մարմնի միջով), որպեսզի առաջացնի մարմնի տաքացում, և ուսումնասիրում է դրա ազդեցությունը ժամանակի մասին դատողությունների վրա [107]:

Հիմնական դատողությունը, որն ընկած է մարմնի ջերմաստիճանի և ժամանակի գնահատման ուսումնասիրությունների հիմքում, այն է, որ քիմիական օրենքներով քիմիական ռեակցիաները արագանում են տաքացման դեպքում, և հետևաբար

ցանկացած քիմիական ռեակցիա, որն ընկած է «քիմիական ժամացույցների» հիմքում, պետք է ընթանա ավելի արագ՝ ջերմաստիճանի բարձրացման և ավելի դանդաղ՝ նրա նվազման դեպքում՝ այդպիսով ունենալով որոշակի ազդեցություն ժամանակի մասին դատողությունների վրա:

Մ. Ֆրանսուան անց է կացրել մի շարք հետազոտություններ, որոնց մի մասը ամբողջովին նկարագրված չէ իր հոդվածում, սակայն տվյալներ մեծ մասը ստացվել է իրավիճակներից, երբ մարդկանց խնդրել են թխկթխկացնել սեղանի վրա որոշակի ռիթմով (օրինակ՝ երեք հարված մեկ վայրկյանում): Երբ ջերմաստիճանը բարձրանում էր, հարվածների արագությունը սովորաբար մեծանում էր, այսինքն՝ հարվածների միջև ժամանակային միջակայքերը կարճանում էին [52]:

Հ. Հոգլենդի աշխատությունը, որը մեր օրերին ավելի հայտնի է, քան Ֆրանսուայի աշխատությունը, ի սկզբանե ոգեշնչված է եղել իրական դեպքով: Հոգլենդի կինը վարակվում է գրիպով, ինչի պատճառով վերջինիս մարմնի ջերմաստիճանը բարձրանում է: Մինչ Հոգլենդը հոգ էր տանում կնոջ մասին և որոշ ժամանակով հեռանում էր, կինը մտածում էր, որ անցել է ավելի շատ ժամանակ, քան դա կար իրականում: Հոգլենդը ենթադրում է, որ հիվանդությունը բարձրացրել է կնոջ մարմնի ջերմաստիճանը՝ այդպիսով արագացնելով նաև «քիմիական ժամացույցների» աշխատանքը, որոնք սկսել են ընթանալ ավելի արագ: Այդպիսով՝ կուտակվում են մեծ քանակությամբ «տկտկոցներ», քան լինում է սովորաբար ինչ-որ ֆիքսված ժամանակահատվածում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է նրան, որ ապրվող ժամանակահատվածները Հոգլենդի կնոջը թվացել են անսովոր երկար: Այնուհետև նա հավաքում է իր կնոջ մասին տվյալներ՝ խնդրելով վերջինիս մարմնի տարբեր ջերմաստիճանների պայմաններում հաշվել մինչև 60-ը այն արագությամբ, որը նա ընկալում էր որպես 1 վայրկյան: Արդյունքները ցույց են տալիս, որ որքան բարձր է մարմնի ջերմաստիճանը, այնքան արագ է նա հաշվում [63]:

Հոգլենդի վերոնշյալ հետազոտության արդյունքում ստացված տվյալները արտացոլում են Ֆրանսուայի հետազոտություններում ստացված արդյունքները և ամբողջովին համապատասխանում են «արագացված ժամացույցների» օգտագործման դեպքում սպասվող արդյունքներին. արտաքին ազդակները և իրադարձությունները

ընկալվում են նորմայից երկար տևող, քանի որ կուտակվում են ավելի մեծ քանակի «տկտկոցներ», քան սովորաբար: Միևնույն ժամանակ միջակայքերը կարճանում են, որովհետև ինչ-որ տևողության համար անհրաժեշտ «տկտկոցները» կուտակվում են ավելի կարճ ժամանակահատվածում [52]:

Ֆրանսուայի և Հոգլենդի աշխատությունները սկիզբ են դնում հետազոտությունների ամենատարօրինակ տեսակին, որը երբևէ նախաձեռնվել է փորձարարական հոգեբանությամբ լրջորեն զբաղվող մասնագետների կողմից: Խոսքը գնում է ժամանակի ընկալման վրա ջերմաստիճանի ազդեցության հետազոտությունների մասին: Մարդու մարմնի հիմնական ջերմաստիճանի փոփոխությունը բարդ է, և օգտագործվում են տարբեր մեթոդներ ու գործիքներ՝ տաքացվող սենյակներ, տաքացվող սաղավարտներ, ջերմություն առաջացնող բնական հիվանդություններ և մարմնի ջերմաստիճանի օրական տատանումները [63,20,60,8,89]:

Ջ. Վեարդենի և Ի. Պենթոն-Վոակի կողմից դիտարկվել է այս ժամանակաշրջանում հրապարակված հետազոտությունների մեծ մասը: Շատ հոդվածներում չի անցկացվում պրոսպեկտիվ և ռետրոսպեկտիվ ժամանակային հաշվարկի հստակ տարբերակում, քանի որ հետազոտությունները անց են կացվել, նախքան այս տարբերակումը սկսել է լայնորեն կիրառվել: Այդ պատճառով հեղինակները դիտարկում են միայն այն հետազոտությունները, որոնք կրում են պրոսպեկտիվ բնույթ, որտեղ մասնակիցները նախօրոք տեղյակ են, որ ժամանակահատվածները հանդիսանում են իրենց կողմից իրականացվող աշխատանքի կարևոր մասը [113]:

Վեարդենը և Պենթոն-Վոակը նաև համապատասխանեցրել են տվյալ հետազոտություններում առկա նախնական գնահատողական տվյալները սուբյեկտիվ ժամանակի արագության ընդհանուր մետրիկային՝ բացահայտելով կապը մարմնի ջերմաստիճանի նորմայի նկատմամբ փոփոխության և սուբյեկտիվ ժամանակի արագության միջև. մարմնի ջերմաստիճանի բարձրացումը նորմայից մեծացնում է սուբյեկտիվ ժամանակի արագությունը, իսկ մարմնի ջերմաստիճանի նվազումը փոքրացնում է այն: Ընդ որում՝ մարմնի ջերմաստիճանի նվազման հետ կապված

հետազոտությունները շատ ավելի հազվադեպ են հանդիպում՝ մասնավորապես Ա. Բադդելեյի և Կ. Բելլի աշխատանքներում [13,15]:

Այսպիսով՝ մարմնի ջերմաստիճանի հետազոտությունների արդյունքները ընդհանուր առմամբ հաստատում են դրանց հիմքում ընկած մարմնի ջերմաստիճանի կամ դրա ինչ-որ կորրեկցիայի նկատմամբ զգայուն «քիմիական կամ կենսաբանական ժամացույցների» գոյության մասին գաղափարը: Սակայն «ներքին ժամացույցների» բնույթը և ճշգրիտ մեխանիզմը, որի միջոցով նրանց տվյալները ձևափոխվում են վարքի, չեն մեկնաբանվում հետազոտությունների այս տեսակում:

Չնայած նրան, որ Հոգլենդը և Ֆրանսուան համարվում են «ներքին ժամացույցների» տեսության «հիմնադիր-հայրերը»՝ նրանից և ոչ մեկը չի ձեռնարկել փորձեր՝ ստեղծելու ժամանակի ընթացքի հոգեբանական մոդել, կամ առավել ևս մոդել, որը կունենա ինչ-որ մեխանիկական դետալներ: Իրականում նրանց հետաքրքրությունները տարբերվում են ավելի ուշ ժամանակների հոգեբանների հետաքրքրություններից նրանով, որ Հոգլենդը և Ֆրանսուան հետաքրքրված էին ֆիզիկական քիմիայի մեխանիզմների օգնությամբ վարքային տվյալների օգտագործմամբ՝ որոշելու համար քիմիական ռեակցիայի տիպը, որն ընկած է «քիմիական ժամացույցների» հիմքում:

Ջերմաստիճանի և քիմիական ռեակցիաների արագության միջև կապը նկարագրվում է հավասարումներով, որոնք ստացվել են Հոֆֆի (օգտագործում է Ֆրանսուան) և Արհենիուսի (օգտագործում է Հոգլենդը) կողմից: Այս հավասարումները կարող են համադրվել տվյալների հետ, որպեսզի ստացվի «ակտիվացման հաստատունը», որը բնորոշ է որոշակի քիմիական ռեակցիայի. այսպիսով՝ հաստատունի իմացումը տալիս է ռեակցիայի բնույթի հասկացման բանալին, իսկ հետազոտությունները կարելի է համեմատել՝ որոշելու համար, թե համապատասխանում է արդյոք հաստատունի արժեքը բոլոր հետազոտություններում [107]:

Հոգլենդը բերում է մի քանի օրինակներ, որոնք ցույց են տալիս ակտիվացման ակնհայտ հաստատուն արժեքներ՝ այդպիսով հանգեցնել եզրակացության, որ «այս արդյունքները միանշանակորեն ենթադրում են մեկ ընդհանուր քիմիական գործընթացի

գոյությունը, որը ծառայում է որպես ժամանակի սուբյեկտիվ սանդղակի հիմք» [64] էջ 111-112]:

4. Բելլը հանդես է եկել՝ որպես «քիմիական ժամացույցների» գաղափարի մոլի քննադատ, սակայն, ինչպես ցույց են տալիս Վեարդենը և Պենթոն-Վոակը, Բելլի ստացած տվյալներում նկատելի է ջերմաստիճանի նկատմամբ զգայուն ինչ-որ «ներքին թայմերի» մասին գաղափարի ամբողջական կամ մասնակի առկայություն. նույնը կարելի է տեսնել Տ. Գրինի և Ա. Սիմփսոնի աշխատանքներում [19,17,18,113,54]: Նրա առարկությունները Հոգլենդի գաղափարի վերաբերյալ երկուսն են: Առաջինը՝ մարմնի ջերմաստիճանի ազդեցությունը ժամանակի վրա պետք է նույնը լինի տարբեր մարդկանց մոտ: Ոչ ոքի մոտ չպետք է լինի այնպես, որ ջերմաստիճանի բարձրացման կամ նվազման դեպքում սուբյեկտիվ ժամանակի արագությունը մնա նույնը: Երկրորդը՝ «ակտիվացման հաստատունը» պետք է լինի արժեքով հավանական և հետևողական տարբեր հետազոտությունների և տարբեր մարդկանց համար: Այս վերջին պահանջի խախտումը կարելի է նկատել Բելլի մի շարք հետազոտություններում: Օրինակ՝ 1966 թվականի հետազոտության մեջ բացահայտվում են տարբեր մարդկանց մոտ «ակտիվացման հաստատունի» զգալի տարբերություններ (մարդկանց միջև՝ տարբերություն մինչև 15 անգամ) [18]: Սակայն նրա հետազոտության մեջ, ինչպես և Ֆրանսուայի և Հոգլենդի աշխատանքներում, դիտարկվում է մարմնի ջերմաստիճանի բարձրացման հետ սեղանի վրա թմբկահարումների հաճախականության զգալի ավելացում: Այդ պատճառով նրա ստացած վարքային տվյալները, ըստ Վեարդենի, փաստացի հաստատում են ջերմաստիճանի նկատմամբ զգայուն «ներքին թայմերի» գոյությունը [107]:

Ինչ վերաբերում է Բելլի առաջին առարկությանը, ապա, ըստ Վեարդենի, ամենայն հավանականությամբ օգտագործվել է կոշտ չափանիշ, որը կիրառելի կլիներ կոգնիտիվ հոգեբանության ոչ շատ հետազոտությունների դեպքում, եթե դրանք այդ ժամանակ առհասարակ գոյություն ունենային: Հեղինակի մոտ հռետորական հարց է առաջանում, թե հիշողության մեջ ընկալման ազդեցությունից ինչպիսի հետք կմնար, եթե յուրաքանչյուր առանձին հետազոտվողից պահանջվեր փորձարարական միջամտության նկատմամբ նույնանման ռեակցիա [107]:

Այսպիսով՝ Հոգևնդի և Ֆրանսուայի աշխատանքի կարևորությունը մեծ մասամբ կայանում է ոգեշնչման մեջ, որն այն տվել է «ներքին ժամացույցների» տեսությանը» 1960-ականներին, այլ ոչ թե՛ եզրակացություններում, որոնք ստացվել են հոգեբանական հետազոտությունների միջոցով ֆիզիկական քիմիայի կոնստանտի որոշման հավակնոտ փորձերի ընթացքում:

1960-ականների սկզբին հրապարակվում է երկու հոդված, որոնք դնում են նրա հիմքը, ինչը հետագայում ստանում է «ներքին ժամացույցների տեսություն» անվանումը. դրանք Կ. Քրիլմանի և Մ. Թրեյսմանի աշխատություններն էին [32,104]:

Քրիլմանի կողմից հետազոտական գործընթացում ներգրավվել են բարձր որակավորմամբ մասնակիցներ, որոնք, որպես կանոն, տարբերակում էին ականջակալների միջոցով տրվող շարունակական ձայնային ազդակների ոչ մեծ տարբերությունները: Հետազոտության մեջ օգտագործված առաջադրանքը հոդվածում հստակ արտացոլված չէ, սակայն կարելի է ենթադրել, որ առաջադրանքը եղել է տարբերակել՝ առաջի՞ն ազդակն է ավելի երկար տևողությամբ, թե՛ երկրորդը: Տարբեր հետազոտություններում կիրառվել են տարբեր փոփոխականներ, ինչպիսիք են, օրինակ, ազդակների տևողության միջակայքը (թեև դրանք չեն եղել 1 վայրկյանից պակաս) և ազդակների միջև տարբերության աստիճանը [36]:

Պատմական տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում Քրիլմանի ստացած տվյալները «ժամանակային դիսկրիմինացիայի տեսությամբ» բացատրելու մոտեցումը: Նա առաջարկում է ժամացույց, որը ներառում է ազդակների աղբյուրի ընդգրկման, ինչպես նաև այդ ազդակների հաշվարկման այնպիսի մեխանիզմ, որով տարբեր տևողության երկու ազդակների ներկայացման դեպքում կհաշվարկվեն տարբեր քանակի իմպուլսներ, և հետագայում այդ թվերը կներդրվեն որոշումների կայացման մեխանիզմում: Սա ապահովվում է բազային «խթանիչ-հաշվիչ-որոշում ժամացույցի» միջոցով, սակայն Քրիլմանը նշում է նաև, որ գործնականում այլ պատկերացումներ էլ են կարող են ազդել մարդու կողմից ժամանակի գնահատման վրա: Օրինակ՝ մասնակիցը պետք է ֆիքսի յուրաքանչյուր ազդակի սկզբնական և ավարտական կետերը, ինչպես նաև պետք է հիշի ազդակների քանակը: Քրիլմանը մշակել է հավասարումներ, որոնք հաշվի են առնում հիշողության գործոնները և

հավանականությունը, որ ազդակների սկզբի և վերջի հայտնաբերումը (որոնք ներկայացվել են աղմուկի ֆոնին) չի լինի մշտական մեկ հետազոտվողից հաջորդին անցնելիս: Ընդհանուր առմամբ՝ նրա առաջարկած մոդելի և ստացված տվյալների միջև առկա է համապատասխանության ողջամիտ մակարդակ: Քրիլմանի մոտեցումը «ներքին ժամացույցների» գործընթացի առաջին քիչ թե շատ ամբողջական մշակված մոդելն էր և ենթադրում էր, որ նման մոդելը, որը ընդգրկում է խթանիչի կողմից ստեղծվող ազդակների կուտակումը, կարող է ապահովել ժամանակային վարքի մասին որակական հաշվետվությունների մշակման կենսունակ ելակետ (համենայն դեպս՝ առնվազն պարզ դեպքերում) [36]:


Եթե Քրիլմանի աշխատանքը հող է նախապատրաստում ժամանակի տևողության ժամացուցային մոդելների ստեղծման համար, ապա հետագայում Մ. Թրեյսմանի՝ 1963 թվականի հոդվածում ներկայացված է ավելի մանրամասն հաշվետվություն, թե ինչպես են ներքին ժամացույցները մի քանի հավելյալ մեխանիզմների ուղեկցությամբ կարողանում ապահովել ընդհանուր հաշվետվություն՝ տևողության առաջադրանքներում արդյունավետության մասին [104]:

Թրեյսմանը, ճակատագրի հեգնանքով, ի սկզբանե չի հետաքրքրվել ժամանակի ընկալմամբ, այլ զբաղվել է տեսողական ընկալման երևույթով, մասնավորապես՝ «էլեկտրական ֆոսֆեններով»՝ իրավիճակով, երբ թույլ էլեկտրական հոսանքի անցումը աչքի ցանցաթաղանթով (գլխի շուրջը պտտվող մետաղական ժապավենի միջոցով) առաջացնում է լույսի բռնկման ընկալում: Նա բացահայտում է, որ ազդակի (կամ լույսի բռնկում, կամ ձայն), ազդեցությունը փոփոխում է ֆոսֆենի բացահայտման շեմը՝ կախված ժամանակից. Ինչքան շատ ժամանակ է անցել ազդակի գործողության պահից, այնքան ցածր է ֆոսֆենի բացահայտման շեմը էլեկտրական հոսանքի հաջորդ կիրառման դեպքում: Նա նկարագրում է սա որպես «նախազգուշացման էֆեկտ և որպես այն բանի մշակումը, ինչը հետագայում դառնալու է «ներքին ժամացույցի» մոդել: Սա շահադրված է հասկանալու ցանկությամբ, թե ինչպես կարող են մարդկանց դատողությունները զգայունակ լինել ազդակների ժամանակային հարաբերակցության նկատմամբ՝ տվյալ դեպքում ազդանշանի և էլեկտրական ազդակի միջև [104,105]:



Թրեյսմանի մոդելը ներկայացված է հետևյալ գծապատկերում (Գծապատկեր 1): Ի լրացում «ներքին ժամացույցներին»՝ Թրեյսմանը ներկայացնում է նաև այն, ինչն ավելի ուշ անվանել է «ժամացուցային մեխանիզմ», ինչը թույլ է տալիս ժամանակի՝ ժամացույցի կողմից գեներացվող պատկերացումները մի շարք տարբեր առաջադրանքներում վերափոխել ժամանակի մասին դատողությունների [104,105]:

Գծապատկեր 1. Ներքին ժամացույցի՝ Մ. Թրեյսմանի մոդելը



Կարդիոսիմուլյատորը, որի հաճախականության վրա ազդում է գրգռման որոշակի կենտրոնի ակտիվացման մակարդակը, արտադրում է կանոնավոր ազդակներ, որոնք հաշվվում են հաշվիչ մեխանիզմում և կարող են պահպանվել երկարաժամկետ պահեստում: Հաշվիչի պարունակությունը և պահեստից դուրս բերված արժեքները կարող են համեմատվել համեմատման մեխանիզմում, և այդ համեմատության արդյունքները օգտագործվում են վարքային արձագանքի գեներացման համար:

Թրեյսմանի մոդելը բաղկացած է երեք մասից: Առաջինը հենց կարդիոսիմուլյատորի հաշվիչի «ներքին ժամացույցն» է: Կարդիոսիմուլյատորը, որում, ըստ գրգռման ներկա մակարդակի, որոշվում է զարկերակի հաճախականությունը, ստեղծում է կանոնավոր ազդակներ, որոնք հոսում են ուղիով և կարող են միացվել հաշվիչին: Օրինակ՝ երբ սկսվում է իրադարձությունը, ազդակները սկսում են կուտակվել հաշվիչում, իսկ երբ իրադարձությունը ավարտվում է, կուտակումը դադարում է: Հաշվիչի ելքային տվյալները նույնպես կարող են պահպանվել (օրինակ՝ նախկինում ներկայացված ազդակին համապատասխանող հաշվարկների քանակը): Վերջապես, հաշվիչի պարունակությունը և «հաշվումը» պահեստից ներմուծվում են համեմատման մեխանիզմ, որտեղ որոշման կայացման որոշակի գործընթաց դրդում է նրանց տալ բաց արձագանք:

Հեշտ է հասկանալ, թե ինչպես կարող է այս մեխանիզմը կատարել ճանաչողության առաջադրանք՝ նման այն մեխանիզմին, որը նկարագրվել է Քրիլմանի կողմից [36]:

Երկու ներկայացվող ազդակներից առաջինի մեկնարկից հետո հաշվումների քանակը սկսում է կուտակվել, իսկ երբ ազդակը վերջանում է, կուտակումը դադարում է, և հաշվումների քանակը փոխանցվում է պահեստ: Այնուհետև հաշվիչը զրոյացվում է և սկսում է կուտակել երկրորդ ազդակի «տկտկոցները»: Վերջնարդյունքում առաջին ազդակի հաշվումները պահեստից և երկրորդ ազդակի հաշվումները հաշվիչից ներմուծվում են համեմատող մեխանիզմ, և արդեն կարող է կայացվել որոշում, թե որ ազդակն է ավելի երկար:

1963 թվականի իր հոդվածում Թրեյսմանը հայտնում է 7 տարբեր հետազոտությունների մասին, որտեղ օգտագործվել են վերարտադրման, արտադրման և տարբերակման մեթոդները: Հետազոտությունները հետևյալ բնույթի են. օրինակ՝ հետազոտվողներին ներկայացվում են երկու հաջորդական ազդակներ, և նրանք պետք է որոշեն, թե որ մեկն է ավելի երկար տևում՝ համանման Քրիլմանի 1962 թվականի հետազոտություններին [36,104]: Բոլոր հետազոտություններում առկա է մասնակիցների ոչ մեծ քանակ, որոնց հետ, սակայն, իրականացվում են հարյուրավոր փորձարարական միջամտություններ: Ազդակների տևողությունը տատանվում է 0.25-ից մինչև 9

վայրկյան, թեև 0.5-ից 3 վայրկյան միջակայքը ընդհանուր է հետազոտությունների մեծ խմբի համար: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ մինչև այս քննարկված Վիերորդոթի օրենքը մեծամասամբ ստանում է իր հաստատումը: Ընդհանուր առմամբ՝ հետազոտվողները տևողության տեսանկյունից ստեղծում և վերարտադրում են ամենակարճ ժամանակային միջակայքերը որպես ավելի երկարատև, քան դրանք կան իրականում, իսկ ամենաերկար միջակայքերը՝ որպես ավելի կարճատև, քան դրանց իրական տևողությունն է: Թրեյսմանի մյուս բացահայտումը այն է, որ վերարտադրվող միջակայքերը, որպես կանոն, սկսում են ընկալվել ավելի երկարատև՝ հետազոտության տևողությանը զուգընթաց [104]:

Հետագայում մշակվում են «ներքին ժամացույցների» բազմաթիվ մոդելներ, որոնք հիմնվում են «SET» մոդելի վրա, իսկ վերջինս ծագում է Թրեյսմանի առաջարկած «ներքին ժամացույցի» մոդելից: Տվյալ աշխատանքի շրջանակներում բարդ կլինի ներկայացնել այս բոլոր գաղափարները, իսկ դրանց ամբողջական հասկացման ապահովման տեսանկյունից դա կլինի իրապես անհնար, քանի որ հակիրճ նկարագրությունները ավելի կխճճեն ընթերցողին, իսկ խորը դիտարկումները կշեղեն այս աշխատանքը բուն թեմայից: Այնպես որ, ավելի նպատակահարմար է նշել մի քանի աշխատություններ և հետազոտություններ, որոնց ծանոթանալով՝ ընթերցողը կկարողանա մանրամասն պատկերացում կազմել ներքին ժամացույցների մոդելների մասին [108,109,111,110,9,73]:

### 1.3 Ժամանակի ընկալման վրա ազդող հոգեբանական դետերմինանտները

Ժամանակի ընկալման և ուշադրության ուսումնասիրություններում է. Թոմասից և Վ. Ուիլերից հետո հետազոտությունների մեծ մասը հիմնվում է այն նախադրյալի վրա, որ ժամանակային և ոչ ժամանակային գործընթացները մրցակցության մեջ են. այնպես որ, մրցակցող ոչ ժամանակային տեղեկատվությունը հանգեցնում է նրան, որ տևողության մասին դատողությունները ավելի կարճատև են, քան այն դեպքերում, երբ չկա տեղեկատվության մրցակցություն [102]:

Այս երևույթի հետազոտման առավել տարածված սխեման, այսպես կոչված, «երկակի խնդրի պրոցեդուրան» է: Գոյություն ունեն բազմաթիվ տարբերակներ, սակայն ամենապարզերից մեկը ներառում է ժամանակահատվածի գնահատման ընթացքում ոչ ժամանակային խնդրի առաջարկումը [48]: Ս. Սթերնբերգի աշխատության մեջ ժամանակի որոշման խնդիրը կայանում է 2 վայրկյան տևողության դիտարկման մեջ, և մասնակիցները անցնում են նախնական պատրաստություն՝ բավական ճշգրիտ պատասխաններ ստանալու համար, իսկ թեստի պայմանը հիշողության մեջ փնտրման խնդրի միաժամանակյա իրականացումն է [97]:

Բուն հետազոտական գործընթացից առաջ մասնակիցներին ներկայացվում է 1-6 թվանշան պարունակող թվերի խումբ, որոնք կազմված են 1-9 թվանշաններից: Այնուհետև կոճակի սեղմումով տրվում է ժամանակային միջակայքի սկիզբը: 500 միլիվայրկյան հետո ներկայացվում է թիվը, և մասնակիցներին առաջարկվում է ավարտել միջակայքը աջ կոճակի սեղմումով, եթե թիվը եղել է նախօրոք ներկայացված ցուցակում, և ավարտել ձախ կոճակի սեղմումով, եթե այն չի եղել այդ ցուցակում: Ստացված միջակայքը համակարգայնորեն երկարում է 2 վայրկայնից՝ թվերի խմբի մեծացմանը զուգընթաց, ինչպես նաև այն ավելի երկար է այն դեպքերում, երբ թիվը նախօրոք ներկայացված շարքից չէ: Երբ թիվը պատկերվում է միջակայքի ընթացքում, ուշադրությունը միջակայքի հաշվման գործընթացից շեղվում է թվի վերհիշման գործընթացի վրա: Այդ ընթացքում ազդակները բաց են թողնվում, և ստեղծվող միջակայքը երկարում է, քանի որ ավելանում է ժամանակը, որի ընթացքում անհրաժեշտ է կուտակել ազդակների համապատասխան քանակը, ինչը արդեն մասնակիցը սովորել էր 2 վայրկյանի համար անհրաժեշտ ազդակներ կուտակելով [48]:

Հետագայում անց է կացվում նաև Կ. Ֆորտենի և Ռ. Ռուսոյի հետազոտության մեկ այլ տարբերակ, որտեղ օգտագործվում են տարբեր ոչ ժամանակային առաջադրանքներ (օրինակ՝ տեսողական որոնումը): Այս գիտափորձերում մասնակիցներից պահանջվում է էկրանի վրա որոնել թիրախները, որոնք հիմնվում էին հակադրության վրա և իրենցից ներկայացնում էին ընդհանուր պատկերների խմբից տարբերվող պատկերներ. օրինակ՝ ուղղահայաց գծով շրջան՝ սովորական շրջանների շարքում, կամ կանաչ T տառը՝ կապույտ T և X տառերի շարքում և այլն: Շեղող

գործոնների ավելացմանը զուգընթաց՝ ավելանում է նաև թիրախային օբյեկտի որոնման ժամանակահատվածը, սակայն դեպքերից մեկում միջակայքը, ինչ-որ պահից սկսած (գիտափորձերից մեկում՝ 3.2 վայրկյան), այլևս սկսում է չավելանալ, թեև շեղող գործոնները շարունակում են շատանալ: Ակնհայտ է, որ ժամանակային և ոչ ժամանակային առաջադրանքների միջև փոխազդեցությունը կախված է կոգնիտիվ գործընթացներից, որոնք օգտագործվում են ոչ ժամանակային առաջադրանքի իրականացման համար: Երբ ծանրաբեռնվում է կարճաժամկետ հիշողությունը, ինչպես վերոնշյալ հետազոտության դեպքում, ավելի բարձր ծանրաբեռնվածությունը հանգեցնում է առավել տևական ժամանակահատվածների առաջացման, սակայն տեսողական որոնումը, որը, ամենայն հավանականությամբ, չի պահանջում կարճաժամկետ հիշողության ծանրաբեռնվածություն, հանգեցնում է տևողության ընկալման այնպիսի ավելացման, ինչը քննարկվել է ավելի վաղ [50]:

Իրավիճակը ավելի է բարդանում Կ. Ֆորտինի և Ռ. Բրետոնի ստացած հետազոտական արդյունքներից հետո: Նրանք կրկին օգտագործում են Սթերնբերգի վերոհիշյալ առաջադրանքը, սակայն այս դեպքում առկա է պոտենցիալ տարրերի հավաքածու, որը ներկայացվում է ժամանակահատվածի ստեղծման ընթացքում: Թիրախային ազդակը, որի մասին պետք էր կայացնել որոշում, ներկայացվում է նրանից հետո, երբ ստեղծվում է ժամանակահատվածը: Այդ դեպքում տարրերի խմբի չափը չի ազդում ժամանակահատվածի ստեղծման վրա, սակայն ժամանակի ընկալման չափումը ցույց է տալիս սովորական արդյունք [47]: Այս հողվածում նկարագրված այլ գիտափորձերը ցույց են տալիս, որ վանկերի քանակը տևողության չափման գիտափորձերում օգտագործվող բառերում կամ աստիճանը, որ անհրաժեշտ է լինում բարդ պատկերները պատելու համար, ավելացնում են ժամանակահատվածի տևողությունը: Իսկ ինչ վերաբերում է կարճաժամկետ հիշողության առաջադրանքներին, Ֆորտինը և Բրետոնը գալիս են եզրակացության, որ ժամանակահատվածի տևողության ավելացման մեջ որոշիչ գործոնը ժամանակն է, որ ծախսվում է տարրի՝ հավաքածուի մեջ լինել-չլինելու որոշման կայացման վրա, այլ ոչ թե ուղղակի ծանրաբեռնվածությունը, որն առաջանում է ինքնին հավաքածուի չափից, թեև

կարճաժամկետ հիշողության հետ կապ չունեցող առաջադրանքների դեպքում էլ ակնհայտորեն երկարում են տևողությունները [49]:

Օգտագործելով Ֆորտինի, Ռուսոյի կողմից արդեն իսկ նկարագրված պրոցեդուրան՝ Ֆորտինը, Ռուսոն և Մ. Դաչեթը ներկայացնում են թիրախային տարրերի 2 վայրկյան միջակայքով 17 հետևողական սեղմումներ ու ստանում հավաքածուի մեծացմանը զուգընթաց ժամանակահատվածների մեծացման մասին տվյալներ [49]:

Այլ գիտափորձերը, որոնցում տևողության ֆիքսման ընթացքում մանիպուլիացիայի է ենթարկվում ուշադրությունը, ավելի վատ են համապատասխանեցվում «մեկանգամյա շեղման» գաղափարի հետ և հիմնականում ենթադրում են ուշադրության «անընդհատ բաժանում» երկու առաջադրանքների միջև, այլ ոչ թե ժամանակահատվածի տևողության ընթացքում դրա հետ կապ չունեցող առաջադրանքով «մեկանգամյա շեղում»: Նմանատիպ գիտափորձերի առավել հայտնի շարքից են Ս. Բրաունի՝ 1997 թվականին իրականացված գիտափորձերը: Այստեղ ժամանակի ընկալման խնդիրն է ստեղծել 2 և 5 վայրկյան տևողությամբ ժամանակահատվածների անընդհատ հաջորդականություն, որոնց ընթացքում գիտափորձի մասնակիցները պետք է կատարեն ժամանակի հետ կապ չունեցող առաջադրանք: Տարբեր գիտափորձերում կիրառվում են տեսողական որոնման կամ մտավոր հաշվարկների հետ կապված, բարդության երկու մակարդակ ունեցող առաջադրանքներ: Տվյալները ցույց են տալիս, որ ժամանակահատվածների տևողությունը մասնակիցների համար երկարում է, ընդ որում՝ որքան բարդանում է առաջադրանքը, այնքան ավելի երկար է թվում տվյալ ժամանակահատվածը [25]:

Տեսություններից մեկը, որը հաճախ առաջարկվում է կոգնիտիվ առաջադրանքների ինտերֆերենցիայի բացատրության համար, ենթադրում է, որ կոգնիտիվ առաջադրանքները մրցակցում են ռեսուրսների ընդհանուր քանակի համար: Առաջադրանքները, որոնք շատ են խանգարում միմյանց, ենթադրաբար մրցակցում են շատ նման կամ նույն ռեսուրսների համար, իսկ այն դեպքերում, երբ առաջադրանքները բացարձակապես իրար չեն խանգարում, հավանաբար իրականացվում են տարբեր կոգնիտիվ համակարգերի կողմից: Գիտափորձերի մի շարք տվյալներում երկու

ուղղությամբ խոչընդոտների բացակայությունը նույնպես ենթադրում է, որ գոյություն ունի ժամանակային և ոչ ժամանակային առաջադրանքների միջև մրցակցություն ինչ-որ ռեսուրսի համար, և այդ ռեսուրսը մեծ մասամբ օգտագործվում է ժամանակային առաջադրանքի կատարման, քան թե ոչ ժամանակային առաջադրանքի կատարման համար, և այդպիսով խախտվում է ժամանակային առաջադրանքի կատարումը:

Մեկ այլ իրավիճակ, որտեղ ուշադրության ուժեղացումը մեծացնում է սուբյեկտիվ տևողությունը, վերաբերում է «տարօրինակության պարադիգմային», երբ ազդակի տևողությունը թվում է ավելի երկար, եթե այն անսպասելիորեն ինչ-որ կերպ տարբերվում է ազդակների հաջորդականությունից, որում ներդրված է: Պ. Ծեն և այլք 2004թ. Հետազոտության մեջ, որտեղ մասնակիցներին ներակայացվում են տարօրինակ ազդակներ, դիտարկել են այն, ինչը իրենք անվանել են «ժամանակի սուբյեկտիվ լայնացում»: Նրանց գիտափորձերից մեկում ստանդարտ ազդակները սև շրջաններն են, իսկ տարօրինակ ազդակը լայնացող սև շրջանն է: Տարօրինակ ազդակը գնահատվում է միջինում 25%-ով ավելի տևական բոլոր ազդակների դեպքում (որոնք տատանվում են 75-ից 2100 միլիվայրկյան միջակայքում), բացի ամենակարճ միջակայքից, որի դեպքում ազդակը գնահատվում է ավելի կարճատև, քան կա իրականում: Հեղինակները անց են կացնում մի շարք այլ գիտափորձեր, որտեղ ուսումնասիրվում են պայմանները, որոնք ազդում են տարօրինակության ազդեցության վրա, և ընդհանուր առմամբ գալիս են եզրակացության, որ հիմնականում տարօրինակ ազդակի նկատմամբ ուշադրության հարաբերական մեծացումը ավելացնում է ազդակի սուբյեկտիվ տևողությունը [106]:

Տարօրինակության ազդեցության հետ կապված ավելի խորը հետազոտություններ կարելի է գտնել S. Բիրնգուբերի և այլոց աշխատության մեջ [21]:

Տևողության ընկալման վրա սադրող հույզերի ազդեցության Ս. Դրոյտ-Վոյեի և իր գործընկերների կողմից իրականացված հետազոտությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում գիտական շրջանակներում, սակայն հույզերի և ժամանակի կապը ուսումնասիրող հետազոտությունները ունեն ավելի վաղ պատմություն: Սովորական հետազոտության մեջ, որը կարելի է դասել արդեն իսկ մեր կողմից դիտարկված հետազոտությունների շարքին, Զ. Լանգերը և իր գործընկերները դիտարկում են ժամանակի դատողության վրա վտանգի ազդեցությունը մասնակիցներից մեկի մոտ, ով,

ըստ գիտափորձի պայմանների, սայլակը պետք է վարեր կապված աչքերով: Առաջադրանքը կայանում է 5 վայրկյանանոց միջակայքի ստացման մեջ: Մասնակիցը պետք է վարեր սայլակը երկու իրավիճակում. առաջին դեպքում, երբ չկար վտանգ, նա վարում էր ուղղակի միջանցքով, իսկ երկրորդ դեպքում, երբ կար վտանգ, նա պետք է վարեր աստիճանների եզրով դեպի ենթադրյալ անկումը: Տվյալները ցույց են տալիս, որ ժամանակի 5 վայրկյան հատվածը «կա վտանգ»-ի դեպքում կազմում է 3.5 վայրկյան, իսկ «չկա վտանգ»-ի դեպքում՝ 4.11 վայրկյան : Այսպիսով՝ 5 վայրկյան ժամանակը կարճանում է, և ենթադրվում է, որ դրա պատճառը վախն է, որը զգում էր մասնակիցը նման վտանգավոր իրավիճակում [75]:

Ա. Անգրիլլիի և իր գործընկերների կողմից իրականացված ավելի ժամանակակից հետազոտության ընթացքում օգտագործվում է ավելի ավանդական մեթոդիկա, որի դեպքում մասնակիցները գնահատում են ժամանակը և դիտում IAPS-ից վերցված պատկերներ (IAPS-ը աֆֆեկտիվ պատկերների միջազգային համակարգ է) [74]: IAPS-ը պատկերների մեծ հավաքածու է, որոնք գնահատված են ըստ գրգռման և վալենտականության, այսինքն՝ հաճելիության և տհաճության աստիճանի: Մասնակիցները պետք է գնահատեն պատկերները համանման սանդղակով կամ վերարտադրեն 2,4 և 6 վայրկյան տևողությամբ ժամանակահատվածները: Պատկերները տարբերվում են վալենտականության և գրգռման մակարդակներով, ընդ որում՝ երկու արժեքների բարձր և ցածր ցուցանիշները օգտագործվում են 4 նկարներից կազմված խմբերի ստեղծման համար: Երկու մեթոդներն էլ հանգեցնում են տևողությունների նվազման՝ ի համեմատություն նրանց իրական արժեքների, սակայն վերարտադրման մեթոդի դեպքում նվազումը ավելի քիչ է: Հետազոտության արդյունքները բավականին բարդ են, քանի որ երբ ցույց են տալիս բարձր գրգռմամբ պատկերներ, բացասական վալենտականությամբ պատկերները թերագնահատվում են ավելի քիչ, քան այն պատկերները, որոնք դրական են: Իսկ ցածր գրգռմամբ պատկերների ցուցադրման դեպքում ավելի քիչ են թերագնահատվել դրական վալենտականությամբ պատկերները: Հեղինակների կարծիքով՝ սա բացատրվում է երկու մեխանիզմով. առաջինը ղեկավարվում է գրգռմամբ և գործում է բարձր



գրգռվածության դեպքում, իսկ երկրորդը ղեկավարվում է ուշադրությամբ և գործում է ցածր գրգռվածության դեպքում [12]:

Հույզերի և ժամանակի ընկալման՝ վերջին տարիների հետազոտությունները ավելի շատ հիմնվում են Ս. Դրոյտ-Վոյեի և իր գործընկերների կողմից 2004 թ. հրապարակված հաշվետվության վրա: Տվյալ աշխատանքում նրանց կողմից օգտագործվում են 400/1600 մվ տևողությամբ ստանդարտ ժամանակահատվածներ և չեզոք օվալներ, որոնց՝ էկրանին հայտնվելու միջոցով տրվում են այս ստանդարտները, և Դրոյտ-Վոյեն այստեղ որպես ազդակ օգտագործում է հույզեր արտահայտող մարդկային դեմքեր: Ընդհանուր առմամբ՝ արդյունքները ցույց են տալիս, որ բարկացած դեմքերի առկայության դեպքում ներքին ժամացուցային մեխանիզմները սկսում են ավելի արագ աշխատել [41]:

Դրոյտ-Վոյեի և իր գործընկերների կողմից իրականացվել են նման տասնյակ գիտափորձեր, որոնք իրենցից ներկայացնում են մեծ արժեք, սակայն չեն կարող տեղավորվել նման սեղմ աշխատանքում, ինչպիսին ատենախոսությունն է: Այդ իսկ պատճառով հետաքրքրված ընթերցողը կարող է, հետևելով հաջորդիվ ներկայացվող հղումներին, գտնել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները [42,37,36,38,44,43,39,40]:

Ընդհանուր առմամբ՝ հույզերի և ժամանակի ընկալման հետազոտությունները ենթադրում են, որ հաջորդաբար ներկայացվող սադրող պատկերների միջոցով հուզական վիճակի ինդուկցիան կարող է ազդել տևողության մասին դատողությունների վրա: Սակայն անհրաժեշտ է այս հարցում պահպանել որոշակի զգուշավորություն: Առաջինը՝ ազդեցությունները հաճախ շատ փոքր են, ինչը ցույց է տալիս, որ տևողության մասին դատողությունները փոփոխվում են առավելագույնը մի քանի տոկոսային կետով: Բացի դրանից՝ առավել ուժեղ ազդեցությունները, որպես կանոն, առաջանում են գրգռիչների պատճառով, որոնք կարող են առաջացնել այնպիսի բացասական հույզեր, ինչպիսիք են վախը և զայրույթը, իսկ այլ հույզերի՝ հատկապես դրական, ազդեցության ապացույցները շատ ավելի քիչ են: Ազդեցությունները կարող են նաև չդրսևորվել այն ազդակների դեպքում, որոնք տևում են մի քանի վայրկյանից ավելի: Անգամ բացասական հույզերի ազդեցությունը, ամենայն հավանականությամբ, կախված է

պատճառներից, որոնք ամբողջովին պարզ չեն դառնում դրանց ստուգման համար օգտագործված գիտափորձերի արդյունքում: Առավել արդյունավետ մեթոդը Դրոյտ-Վոլլեի և գործընկերների՝ ժամանակի կիսման մեթոդն է, որտեղ որպես էտալոն օգտագործված ազդակները չեզոք են, իսկ թեստային ազդակները առաջացնում են հույզեր [41]:

Վերջապես, նաև ազդեցությունների մեկնաբանումն է մնում խնդրային: Ինչ-որ մասով պատճառը տրամաբանական է. ընկալվող տևողությունը ավելանում է գրգռման ազդեցություններից, այն դեպքում, երբ տևողությունը ուշադրության ազդեցության պատճառով թվում է կարճ:

Վերոնշյալ դրվագի ցուցադրման համար կարելի է դիտարկել Ջ. Տիպպլեսի կողմից ստացված հետազոտական տվյալները: Նա բացահայտում է, որ արգելված բառերի ներկայացման ժամանակահատվածը գնահատվում է ավելի կարճատև, քան չեզոք բառերի ներկայացման ժամանակահատվածը: Այս երևույթի պատճառը հավանաբար բառերի բովանդակության տարբերակված մշակումն է. արգելված բառերի բովանդակության մշակումը պահանջում է ավելի շատ ուշադրություն, քան չեզոք բառերինը [103]:

Վեարդենը փորձում է ենթադրել այն դեպքը, եթե Տիպպլեսը ստանար ամբողջովին հակառակ արդյունքներ, և արգելված բառերը գնահատվեին որպես ավելի երկարատև: Այդ դեպքում էֆեկտը հնարավոր կլիներ բացատրել բարձր գրգռվածությամբ, որն առաջանում է տաբու բառերի դեպքում՝ ի տարբերություն չեզոք բառերի: Այս բացատրությունը հանդիսանում է բավականին ճշմարտանման՝ հաշվի առնելով այլ հետազոտություններում բացասական հույզերի սադրման ազդեցությունները [107]:

Երկար ժամանակ համարվում էր, որ ուշադրությունը խաղում է գլխավոր դերը ժամանակային դատողություններում՝ հաճախ օգտագործելով այն գաղափարը, որ կարդիոսիմուլյատորի նմանությամբ ազդակների կուտակումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե ուշադրություն դարձվի ժամանակին: Բազմաթիվ հետազոտություններում ուսումնասիրվում են ոչ ժամանակային առաջադրանքների ազդեցությունները այն դեպքում, երբ միևնույն ժամանակ գնահատվում է նաև

տևողությունը, և գրեթե բոլոր դեպքերում այն ունենում է տևողության գնահատականի նվազում՝ ենթադրելով, որ ուշադրության շեղումը հանգեցնում է «ներքին ժամացույցի մեխանիզմում» ազդակների «կորստի»: Սակայն էֆեկտը, ամենայն հավանականությամբ, կախված է պատճառներից, որոնք մինչև վերջ պարզ չեն: Այլ հետազոտություններում օգտագործվում են ուշադրության բաժանման հրահանգներ, և համանման կերպով փոքրանում է տևողության գնահատականը: Ավելի փոքր թվով հետազոտություններում արվում են տևողության ընկալումը ուսումնասիրելու փորձեր, երբ մասնակիցները կատարում են դրա հետ կապ չունեցող այլ կոգնիտիվ առաջադրանքներ: Ստացված արդյունքները բարդ են և միշտ չեն միանշանակորեն ցույց տալիս նույն ազդեցությունները, սակայն բացահայտվել է, որ գործնական հիշողությունը, ուշադրությունը, տեղեկատվության մշակման արագությունը և գործառութային կողմերը ազդում են ժամանակի ընկալման վրա:

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ ազդակները, որոնք հրահրում են հույզեր (հատկապես՝ բացասական), ամենայն հավանականությամբ գործում են ավելի երկար, քան չեզոք ազդակները, թեև ազդեցությունները կարող են լինել ոչ էական, կախված լինել չափման մեթոդից և դրսևորվել միայն կարճ ժամանակահատվածում [107]:

Ռ. Հիքսը իր գործընկերների հետ 1976թ. ներմուծում է տարբերակում, որը մինչ օրս հանդիսանում է ժամանակի հոգեբանական ուսումնասիրություններում գլխավոր հասկացություններից մեկը: Այդ հասկացությունը ռետրոսպեկտիվ և պրոսպեկտիվ ժամանակային գնահատումների տարբերակումն է: Պրոսպեկտիվ ժամանակային գնահատումը իրավիճակն է, երբ հետազոտվողները նախօրոք տեղեկացվում են, որ ժամանակի գնահատումը գտնվում է դրված առաջադրանքի ուշադրության կենտրոնում: Ռետրոսպեկտիվ ժամանակային գնահատումը իրավիճակն է, երբ տրվում են ժամանակի մասին անսպասելի հարցեր. օրինակ՝ «որքա՞ն ժամանակ է անցել այն պահից, երբ Դուք սկսեցիք կարդալ այս պարբերությունը»: Տրամաբանորեն ենթադրվում է, որ բացի մարդկանցից՝ բոլոր կենդանիների մոտ առկա է ժամանակի միայն պրոսպեկտիվ հաշվարկ [62]:

Ժամանակակից գրեթե բոլոր հետազոտողները դիտարկում են պրոսպեկտիվ և ռետրոսպեկտիվ ժամանակային ընկալումները տարբեր՝ այն իմաստով, որ տարբեր են մեխանիզմները, որոնք պատասխանատու են դրանց համար: Ռ. Իլվին և Ռ. Հազելթայնը հրաշալի կերպով ի մի են բերում սա՝ ենթադրելով, որ պրոսպեկտիվ տևողությունը տևողությունն է «թայմերով», իսկ ռետրոսպեկտիվ տևողությունը տևողությունն է առանց «թայմերի» [67]:

Կարելի է ենթադրել, որ պրոսպեկտիվ տևողությունը իրականանում է ինչ-որ որոշակի մեխանիզմով. օրինակ՝ «SET» տեսակի «ներքին ժամացույցով»: Երբ մարդկանց տեղեկացնում են, որ տևողության գնահատումը իրենց առաջադրանքի գլխավոր առանձնահատկությունն է, նրանք հավանաբար «միտումնավոր» ակտիվացնում են ժամանակի չափման մեխանիզմը, որն առկա է իրենց մոտ: Ընդհակառակը՝ եթե անսպասելիորեն անհրաժեշտ են լինում ռետրոսպեկտիվ գնահատումներ, շատ հավանական է, որ նրանք հոգ չեն տանում ժամանակային որևէ հաշվարկի մասին, և այդ պատճառով պետք է հիմնվեն մեկ այլ աղբյուրից ստացված տեղեկատվության վրա [107]:

Ռետրոսպեկտիվ և պրոսպեկտիվ ժամանակների մասին խոսելիս հարց է ծագում, թե որոնք են դրանց տարբեր լինելու ապացույցները: Հնարավոր է, որ ինչ-որ «ներքին ժամացույցներ», որոնք օգտագործվում են ժամանակի պրոսպեկտիվ հաշվարկի համար, անգիտակցական ձևով աշխատում են նաև ռետրոսպեկտիվ հաշվարկի դեպքում, և արդյունքում ստացվում է, որ երկու ձևերը հոգեբանական առումով նման են, անգամ եթե տարբերվում են գործընթացներով: Ժամանակակից կարծիքների մեծ մասը չի համընկնում այս տեսակետի հետ, և դրա ապացույցներից մեկը ելնում է ռետրոսպեկտիվ կամ պրոսպեկտիվ հաշվարկված իրադարձության ընթացքում տեղեկատվության հետ արված մանիպուլյացիայից: Հետազոտությունները ցույց են տալիս, որ միևնույն մանիպուլյացիան, որը փոփոխում է տեղեկատվության բարդությունը, ունենում է հակառակ ազդեցություն տևողության երկու տեսակների վրա, ինչն էլ իր հերթին ենթադրում է դրանց հիմքում ընկած տարբեր մեխանիզմների առկայությունը: Հետազոտություններից մեկի ընթացքում մասնակիցներին տրվում են էկրաններ, որոնք պարունակում են 0-ից 9-ը թվանշանները՝ 3x3 կադրապարում դրված:

Ընդ որում՝ թվերից մեկը բացակայում է, և առաջադրանքն է բացահայտել, թե որ թիվն է դա: Մի դեպքում (պարզ) թվերը տողերում պատկերված են հերթականությամբ՝ այնպես, որ պակասող թիվը գտնելը դժվարություն չի ներկայացնում, իսկ մյուս դեպքում (բարդ) թվերը դրված են պատահականության սկզբունքով, այսինքն՝ որոնման խնդիրը ավելի բարդ է: Բազմաթիվ անգամներ կրկնվել են ցուցադրումները, և մասնակիցներին հարցրել են, թե որքան երկար է տևել առաջադրանքը՝ օգտագործելով կամ ռետրոսպեկտիվ, կամ պրոսպեկտիվ պարադիգմաները: Որոնման ավելի բարդ առաջադրանքի դեպքում տևողությունը գնահատվել է ավելի երկար՝ ռետրոսպեկտիվ պարադիգմայի պարագայում, սակայն՝ կարճ, երբ այն եղել է պրոսպեկտիվ պարադիգմայում [114]:

Ինչպես նշվել է արդեն, բազմաթիվ հետազոտություններ հաստատում են այն գաղափարը, որ ժամանակահատվածում տեղեկատվության մշակման ծավալի մեծացումը ավելացնում է ռետրոսպեկտիվայի տևողությունը, սակայն այս գաղափարը միշտ չէ, որ աշխատում է [114]: Մասնավորապես՝ տեղեկատվության մշակման փոփոխությունը մակերեսայինից ավելի խորի (օրինակ՝ բառերի տեսակավորումը ըստ դրանց տառատեսակի կամ սեմանտիկ նշանակության) պարտադիր չէ, որ ավելացնի տևողության գնահատումը, թեև հոգեբանների մեծ մասը կհամաձայներ այն մտքին, որ խոր վերլուծությունը պահանջում է ավելի շատ «մտավոր աշխատանք», քան մակերեսայինը [22]:

Կարևոր է նաև իրադարձությունների հաշվարկման և տարբերակման խնդիրը: Կարճ ժամանակահատվածում մարդը կարող է ընկած թղթադրամը վերցնել գետնից կամ տեսողական կոնտակտ հաստատել մեկ այլ մարդու հետ և անգամ սիրահարվել: Մեկ ժամվա ընթացքում մարդը կարող է ֆիլմ դիտել, որի նկատմամբ չունի իրական հետաքրքրվածություն, կամ կարող է հետևել իր երեխաներից մեկի ծնունդին: Այստեղ հակադրված իրադարձությունները հատուկ են ընտրված, որպեսզի ցուցադրվի հնարավոր կարևորությունների տարբերությունը: Մինչ այս քննարկված մեթոդաբանական խնդիրներից բացի՝ բարդություն է ներկայացնում ռետրոսպեկտիվ ժամանակային բնութագրիչներ պարունակող մոդելների ստեղծումը: Բացի սրանից՝ որպես կանոն, տևողության ռետրոսպեկտիվ գնահատականները ավելի փոփոխական

են և պակաս ճշգրիտ, քան արդյունքները, որոնք ստացվում են տևողության պրոսպեկտիվ հետազոտությունների ընթացքում, թեև կան մի քանի հետազոտություններ, որոնց արդյունքները պնդում են հակառակը: Այս և այլ պատճառներով տևողության պրոսպեկտիվ կողմը շարունակում է մնալ ավելի ուսումնասիրված, այն դեպքում, երբ ռետրոսպեկտիվ տևողության հետազոտությունները թույլ են տալի են միայն հուսալ, որ կգտնվեն ավելի լավ լուծումներ [107]:

ԳԼՈՒԽ 2. «ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ  
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱԼ ԱՊԱՐԱՏՈՒՄ

2.1 Ժամանակին առնչվող հասկացությունների ընդհանրություններն ու տարբերությունները, ժամանակային հեռանկարը

Ինչպես այս աշխատանքում, այնպես էլ ժամանակը այս կամ այն կերպ շոշափող ցանկացած գիտակարգում բազմաթիվ են հետազոտական տեսանկյունները, և դրա հետ մեկտեղ շատ են նաև հասկացությունները, որոնց միջոցով ուսումնասիրվում է ժամանակը: Սույն աշխատանքի տրամաբանությունը հուշում է, որ ավելի հետաքրքիր են ժամանակին վերաբերող հասկացությունները, որոնք ծագում են հոգեբանությունից կամ գիտության՝ հոգեբանությանը հարակից բնագավառներից:

Հոգեբանության մեջ ժամանակը շոշափող առաջին և հիմնական հասկացությունը ժամանակի ընկալումն է: Այն ներկայացնում է ինչպես առանձին ժամանակահատվածների ընկալման օրինաչափությունները մարդկանց և կենդանիների կողմից, այնպես էլ արտացոլում է ժամանակ ֆիզիկական երևույթի՝ հոգեկան աշխարհում արտացոլման մեխանիզմների, օրինաչափությունների և ազդեցությունների ողջ սպեկտրումը: Հաճախ «ժամանակի ընկալում» հասկացության տակ ենթադրվում է ինչպես զուտ առանձին ժամանակահատվածների ընկալումը, այնպես էլ ժամանակային վեկտորի բոլոր հատվածների ազդեցությունը անհատի և հասարակության կյանքի, հոգեկան աշխարհների վրա: Այդ է պատճառը, որ մի ողջ գլուխ այս աշխատանքում նվիրված է տվյալ հասկացության ուսումնասիրման պատմությունը և ներկա վիճակի հասկացմանը: Փաստացի ժամանակին վերաբերող հասկացությունները ծագում և «սնվում» են «ժամանակի ընկալում» հասկացության շուրջը ժողովված հետազոտությունների և տեսությունների հսկայական համախմբից:

Հաջորդ հասկացությունը, որի առաջացումը գրեթե համընկնում է ժամանակի ընկալման ուսումնասիրությունների մեկնարկի ժամանակաշրջանին, սուբյեկտիվ կամ հոգեբանական ժամանակն է: Ժամանակը հոգեբանության կամ առհասարակ անձի տեսանկյունից ուսումնասիրելու համար հարկ է տարանջատել օբյեկտիվ և սուբյեկտիվ ժամանակները: Օբյեկտիվ ժամանակը՝ անկախ մարդու և առհասարակ ընկալողի

առկայությունից, ինքնին ընթացող գործընթաց կամ երևույթ է (անգամ այսօր գիտության մեջ ժամանակի սահմանման հարցը մնում է բաց և անընդհատ փոփոխվում է), որը առաջանում և անհետանում է, ինչպես տարրական մասնիկներն են անվերջ փոքր ժամանակահատվածի ընթացքում անհետանում և ծնվում նորից: Այսինքն՝ օբյեկտիվ ժամանակը չունի անցյալ կամ ապագա, այն չի կրում տեղեկատվություն և այլն: Այլ է իրավիճակը մարդու և կենդանիների նյարդաուղեղային կառուցվածքում, որոնց համար ընդհանուր է տեղեկատվական չափման անհրաժեշտությունը, ինչը կդնի օբյեկտիվ ֆիզիկական ժամանակը դեպի ապագան ուղղված վեկտորի ժամանակային մոդելում: Սա թույլ է տալիս կանխորոշել հնարավոր ապագան՝ օգտագործելով անցյալի փորձը՝ ցանկալի ապագային հասնելու համար [4]: Սուբյեկտիվ կամ հոգեբանական ժամանակը, բացի սրանից, մեծ դեր է խաղում առհասարակ մարդու և կենդանիների կոգնիտիվ և հուզական համակարգերի ձևավորման, առհասարակ հոգեկան բազմաթիվ գործընթացների իրականացման մեջ:

Կարելի է ասել, որ ժամանակի ընկալման միջոցով օբյեկտիվ ֆիզիկական ժամանակը դառնում է հոգեկանի մաս՝ սուբյեկտիվ ժամանակի տեսքով: Հոգեբանության մեջ, խոսելով ժամանակի մասին, մենք պետք է ընդունենք, որը խոսքը վերաբերում է սուբյեկտիվ ժամանակին:

Անհնար է շրջանցել «ժամանակ» բառն ընդգրկող և այսօր գրեթե ոչ մի ոլորտ չշրջանցող «ժամանակի կառավարում» հասկացությունը: Ժամանակի կառավարումը ժամանակի գիտակցական վերահսկման գործողություն է, որը թույլ է տալիս այն ծախսել գործողությունների որոշակի ընտրված տեսակի վրա, ընդ որում՝ նպատակաուղղված կերպով բարձրացվում է արդյունավետությունը: Այստեղ հարկ է պարզաբանել, որ խոսքը, իհարկե, բուն ժամանակի կառավարման մասին չէ, քանի որ դա, ըստ այսօրվա գիտության, անհնար է ինքնիրեն, այլ խոսքը վերաբերում է ժամանակահատվածում իրականացվող գործողությունների վերահսկմանը և ընտրմանը: Այս հասկացությունը առավելապես գտնվում է այլ հասարակագիտական գիտակարգերի ուսումնասիրության ներքո, սակայն այստեղ հիմնվում են ժամանակի ընկալման և հատկապես ժամանակի նկատմամբ վերաբերմունքին առնչվող հոգեբանական հետազոտությունների վրա:



Ի տարբերություն ֆիզիկական ժամանակը արձանագրող մեխանիկական սարքերի՝ մարդուն (հավանաբար զարգացած կենտրոնական նյարդային համակարգ ունեցող կենդանիներին նույնպես) բնորոշ է վերաբերմունքը ժամանակի նկատմամբ, ռեակցիան դրա օբյեկտիվ գոյությանը թե՛ այս պահին, թե՛ նախկինում եղած և թե՛ ապագայում սպասվող վիճակներում: Սա, ըստ ժամանակակից շատ հետազոտողների, ում անդրադարձ կկատարվի հետագայում, ժամանակի ամենակարևոր ազդեցություններից մեկն է անհատի կյանքի վրա: Ժամանակի նկատմամբ վերաբերմունքը արտացոլող այս հասկացությունը ժամանակային հեռանկարն է: Այն փաստացի ժամանակի մասին պատկերացումների կոգնիտիվ և հուզական բաղադրիչների ամբողջությունն է, որտեղ արտացոլվում է ժամանակի և անձի հոգեկանի փոխհարաբերության՝ մարդու վրա ամենաազդեցիկ կողմը: Այն արդեն ոչ միայն ժամանակային վեկտորի (անցյալ, ներկա, ապագա) որևէ հատվածի ուղղակի ընկալումն է և գիտակցումը, այլ դրանց մասին պատկերացումների առավել ընդգրկուն ամբողջությունը:

Սա հիմք է դառնում, որ ժամանակային հեռանկարը դառնա այսօրվա հոգեբանության և, մասնավորապես, այս աշխատանքի հետազոտական հետաքրքրությունների առանցքներից մեկը, և փորձ արվի նվազեցնել «սպիտակ բծերի» քանակը այս հասկացության շուրջ:

## 2.2 Ժամանակային հեռանկարի վրա ազդող դետերմինանտները

«Ժամանակային հեռանկար» հասկացության առաջացումը կապվում է Կ. Լևինի անվան հետ: Նա առաջիններից մեկն է, ով դիտարկում է ժամանակը և դրա ընկալումը մարդու կյանքի ու փորձի հետ համատեղ: Կարելի է ասել, որ Լևինի գաղափարները մոտ են էքզիստենցիալ փիլիսոփաների գաղափարներին [78]: Կենսական տարածության՝ Լևինի առաջարկած մոդելը իր մեջ ներառում է ինչպես անցյալի, այնպես էլ ապագայի ազդեցությունը ներկա վարքի վրա: 1951թ. Լևինը սահմանում է ժամանակային հեռանկարը՝ որպես «անհատի՝ իր սեփական հոգեբանական ապագայի և ներկայի

նկատմամբ ժամանակի տվյալ պահին գոյություն ունեցող տեսակետների ամբողջություն» [79 էջ 75]:

Ներկա պահի շրջանակներում բոլոր ժամանակային կաղապարների նկատմամբ այս ներառական տեսակետը նման է ժամանակի մասին արևելյան «ձեներին» (dzjen) որոնք ավելի ցիկլային են, և սա հակասում է ավանդական արևմտյան մոտեցմանը, որտեղ ժամանակը հոսում է մշտական գծային հոսքով, և այն հետ պտտել հնարավոր չէ [86]:

Ջ. Նատտինը պաշտպանում է լեինյան կենսական տարածությունը, որը լցված է ժամանակով, որտեղ ապագայի և անցյալի իրադարձությունները ազդում են ներկա վարքի վրա այն չափով, որքանով դրանք իրապես առկա են վարքային գործառույթների կոգնիտիվ մակարդակում [84,85]:

Սոցիալ-կոգնիտիվ մտածողությունը, որը ներկայացված է նաև Ա. Բանդուրայի ինքնաարդյունավետության տեսության մեջ, հավաստում է վարքային ինքնակարգավորման վրա ժամանակի եռակողմ ազդեցությունը: Դա առաջանում է անցյալի փորձի, ներկայի գնահատականների և ապագայի տարբերակների մասին մտքերի արդյունավետության նկատմամբ վստահության հիման վրա [14]:

Լ. Կարստենսենը իր գործընկերների հետ ենթադրում է, որ ժամանակի հեռանկարը առանցքային դեր է խաղում սոցիալական նպատակների ընտրման և իրագործման հարցում, ինչը ունենում է կարևոր հետևանքներ հուզական, ճանաչողական և մոտիվացիոն գործընթացների վրա [26]:

Ժամանակային հեռանկարի ուսումնասիրություններում մեծ է Ֆ. Զիմբարդոյի դերը, որի հետազոտությունների և գաղափարների վրա էլ մեծ մասամբ հիմնվում են այս աշխատանքը և հետազոտությունները: Ժամանակային հեռանկարին առնչվող տեսական հատվածը հիմնվում է Զիմբարդոյի և Ջ. Բոյդի՝ 1999թ. լույս տեսած հոդվածի վրա, որտեղ ամբողջությամբ ներկայացված են տեսության հիմնական գաղափարները և ZTPI (Zimbardo Time Perspective Inventory) մեթոդիկայի առանձնահատկությունները [119]:

Քանի որ «ժամանակային հեռանկար» հասկացությունը բազմիցս կրկնվելու է տեքստի հետագա հատվածներում, հենց Զիմբարդոյի օրինակով հարկ է ներմուծել «ԺՀ»

հապավումը, որի կիրառությունը այս աշխատանքի շրջանակներում ամբողջությամբ համարժեք է «ժամանակային հեռանկար» հասկացության նշանակությանը, թեև այն չի սահմանափակում հենց ամբողջական հասկացության կիրառումը ևս:

Ըստ Զիմբարդոյի՝ ժամանակային ընկալման հետազոտությունները և ինքնին ԺՀ-ը բավարար ուշադրության չեն արժանանում հոգեբանական գիտության՝ 2000-ականներին գերակայող տեսությունների կողմից: Նրա հետազոտության նպատակն է ուղղել իր գիտական ջանքերը հոգեբանության շատ ոլորտներում ԺՀ առանցքային դերի ճանաչմանը, ինչպես նաև՝ ԺՀ կարևորության մեծացմանը հետազոտական պարադիգմաներում՝ որպես անկախ, կախյալ կամ չեզոք փոփոխականի:

Զիմբարդոյի և Բոյդի առաջարկած ԺՀ ընդհանուր կոնցեպտուալ մոդելը, որը գաղափարապես և մեթոդաբանական առումով ուղղորդում է ԺՀ նրանց կողմից իրականացվող հետազոտությունները, շարունակում և ընդլայնում է լեինյան ավանդույթները՝ առաջ տանելով ԺՀ լայն կոնցեպտուալիզացիան՝ որպես հիմնադիր գործընթաց ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գործառույթների մակարդակում [119]:

ԺՀ-ը հաճախ անգիտակցական գործընթաց է, որի միջոցով անձնական և սոցիալական փորձի անընդհատ հոսքերը բաշխվում են ժամանակային դասերում և կաղապարներում, որոնք օգնում են այդ իրադարձություններին տալ կարգ ու կանոն, համաձայնեցվածություն և իմաստ: Այս կոգնիտիվ կաղապարները կարող են արտացոլել ցիկլային, կրկնվող ժամանակային պատտեռները կամ մարդկանց կյանքից յուրահատուկ, չկրկնվող գծային իրադարձություններ [59]:

ԺՀ-ները օգտագործվում են սպրված իրադարձությունների գաղտնագրման, պահպանման և վերհիշման համար, ինչպես նաև օգտագործվում են սպասումների, նպատակների, անկանխատեսելի իրադարձությունների և երևակայական սցենարների ձևավորման նպատակով: Նախորդող անցյալի վերացական կառուցվածքների և սպասելի ապագա իրադարձությունների միջև ընկած է որոշակի՝ էմպիրիկորեն կենտրոնացած ներկայի պատկերացումը:

Զիմբարդոն պնդում է, որ այս յուրացված ԺՀ-ները ունենում են դինամիկ ազդեցություն բազմաթիվ կարևոր դատողությունների, որոշումների և

գործողությունների վրա: Օրինակ՝ ինչպե՞ս կարող է ինչ-որ գործողության նախաձեռնման մասին որոշումը ազդվել ժամանակային կադապարների կողմից ընդգծված անձնային միտումներից: Որոշ մարդկանց համար գերակայող ազդեցությունը ելնում է անցյալից, նախորդող իրավիճակներում համանման հիշողություններից, կորուստների և շահի մասին հիշողությունից, որոնցով ուղեկցվել են այդ որոշումները: Նրանց հիշողությունները կարող են լինել կարոտալի և դրական կամ մտահոգ, տրավմատիզացնող, զզվելի և բացասական և կարող են ճշտությամբ վերհիշվել կամ խեղաթյուրվել: Անցյալի վրա նման կենտրոնացումը կարող է ազդել որոշման կայացման ներկա իրավիճակի մեկնաբանմանը և դրա նկատմամբ արձագանքմանը՝ անգամ գերակայելով որոշման կայացման ներքին խթանող ուժի նկատմամբ: Այլ մարդկանց համար հիպոթետիկ որոշման վրա ազդող էական ուժերը ծագում են սպասումներից, որոնք կառուցվածքավորվում են ապագայի մեջ ներկայի ներդրման իրականացման նպատակով, երբ ներկա գործողության համար հաշվված ծախսերը կմարվեն, և կընդունվեն պարգևները: Նրանց որոշումների ընդունման գործընթացը իր մեջ կարող է ներառել նպատակի այլընտրանքային վիճակների և միջոցների կապի և նախընտրելի բաղադրիչների հավանականության գնահատման ստեղծումը, ինչպես նաև կարող է ներառել երկարաժամկետ գնահատելի ծախսերի համեմատ կանխատեսելի բարենպաստ հետևանքների մասին կշռադատությունները [119]:

Երկու դեպքում էլ անցյալի վերակառուցվածքավորման և ապագայի կառուցվածքավորման վերացական կոգնիտիվ գործընթացները ազդում են ընթացիկ որոշումների կայացման վրա՝ մարդուն թույլ տալով հաղթահարել անմիջական կենսական տարածության մեջ առկա անհաղթահարելի խոչընդոտները և մի կողմ դնել հաճույքի ակնհայտ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել անցանկալի հետևանքների: Սրա հետ ակնհայտ հակադրության մեջ են երկու անձինք՝ նա, ով որոշումները կայացնում է «վերևից ներքև», և նա, ում որոշումները սովորաբար «ներքևից վերև» են, և որոնց վրա ազդում են զգայական, կենսաբանական և սոցիալական որակները՝ կապված ընթացիկ միջավայրի տարրերի հետ: Նրանց գործողությունները հանդիսանում են իրավիճակային ճնշման, ազդակի ուժգնության

կամ որակի, գերակա կենսաբանական վիճակի կամ իրավիճակի սոցիալական կողմերի արդյունք: Երբ որոշումների կայացման դեպքում զարգանում է ըստ սովորության ժամանակային երեք կաղապարներից որևէ մեկին չափազանց մեծ նշանակություն տալու միտում, դա ծառայում է որպես ժամանակային կոգնիտիվ «թեքում» դեպի անցյալի, ներկայի կամ ապագայի կողմնորոշումներ: Քրոնիկական դրսևորման դեպքում այս նախատրամադրվածությունը վերածվում է դիսպոզիցիոն ոճի կամ անհատական առանձնահատկությունների փոփոխականի, որը հանդիսանում է բնորոշ և կանխատեսող նրա համար, թե ինչպես կարծազանքի անհատը բազմաթիվ առօրյա կենսական որոշումների կայացման ժամանակ: Իհարկե, մարդիկ օգտագործում են այս ժամանակային կողմնորոշումները տարբեր աստիճաններով, և յուրաքանչյուր կողմնորոշում կարող է որոշակի իրավիճակներում հանգեցնել լավագույն որոշումների:

Ժամանակայի թեքումը կարող է ներառել ժամանակային կաղապարներից որևէ մեկի՝ կամ սովորականի համեմատ չափազանց օգտագործում, կամ, ընդհակառակը, սովորականի համեմատ ոչ բավարար օգտագործում: Նման սահամանափակող նախապաշարմունքները հակադրության մեջ են դրվում «ժամանակի մեջ հավասարակշռված կողմնորոշման»՝ իդեալական մտավոր կառուցվածքի հետ, որն անհատներին թույլ է տալիս ճկունությամբ փոփոխել ժամանակային կաղապարները անցյալի, ներկայի և ապագայի միջև՝ կախված իրավիճակի պահանջներից, ռեսուրսներից կամ անձնական և սոցիալական գնահատականներից: Ժամանակի մեջ նման կողմնորոշմամբ մարդկանց վարքը միջինում կորոշվեր համաձայնությամբ կամ անցյալի փորձի մասին մետակառուցվածքային պատկերացումների բովանդակությունների, ներկա ցանկությունների և ապագա հետևանքների միջև հավասարակշռմամբ [119]:

Այսպիսով՝ ԺՀ-ը դիտարկվում է՝ որպես անհատական առանձնահատկություններով, իրավիճակով պայմանավորված և համեմատաբար կայուն գործընթաց: Ժամանակային որևէ կաղապարից չափազանց ուժեղ կախվածությունը մեծ մասամբ պայմանավորվում է բազմաթիվ հետազոտված գործոններով, որոնց մեջ առավել նկատելի են մշակութային, կրթական, կրոնական, սոցիալական, դասային և ընտանեկան մոդելները: ԺՀ-ը ազդեցությունը այնքան

տարածված է մարդկանց կյանքում և բազմակի անգամ պատճառականացված, որ մարդիկ հազվադեպ են գիտակցում նրա նուրբ գործողությունը, ազդեցությունը և շեղման ուժը: Զիմբարդոն պնդում է, որ ԺՀ կառույցը ապահովում է հիմքը, որի վրա ստեղծվում կամ ներդրվում են շատ այլ տեսանելի կառույցներ, ինչպիսիք են՝ նպատակադրումը և այդ նպատակներին հասնելը, ռիսկի ընդունումը, զգայությունների որոնումը, կախվածությունը, մտորումները, մեղքի զգացումը և այլն [119]:

Հաշվի առնելով ԺՀ կառույցի բարդությունը՝ անկախ հետազոտողները ԺՀ-ը չափել և օպերատիվ կերպով սահմանել են բազմաթիվ տարբեր միջոցներով: Հետազոտությունների մեծ մասում փորձ է արվում կապել ապագա կամ ներկա կողմնորոշումները այլ հոգեբանական կառույցների և վարքի ընտրված ձևերի վրա նրանց ազդեցության հետ՝ քիչ ուշադրություն դարձնելով դեպի անցյալը կողմնորոշմանը: Ընդհանուր առմամբ՝ արևմտյան հասարակության մեջ մարդկանց համար դեպի ապագան կողմնորոշումը կապված է բազմաթիվ դրական հետևանքների հետ, ինչպիսիք են՝ ավելի բարձր սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ավելի բարձր ակադեմիական նվաճումները, ավելի քիչ ձգտումը զգայություններին և առողջության համար ավելի քիչ ռիսկային վարքը: Հակառակը արդար է այն մարդկանց համար, որոնց մոտ գերակայողը դեպի ներկան կողմնորոշումն է: Այդ մարդիկ դիտարկվում են որպես կյանքի բազմաթիվ բացասական հետևանքների ռիսկին հակված, այդ թվում՝ նաև հոգեկան առողջության, դեռահասային հանցագործությունների և կախվածությունների ռիսկերին, բայց այս ամենը այն պայմանի դեպքում, երբ նրանք ապրում են մեծ մասամբ դեպի ապագան կողմնորոշված հասարակությունում [84,35,51,77,100,117]:

Զիմբարդոյի կարծիքով՝ պատճառը, որ մարդկային փորձի նման առանցքային թվացող կողմը չի ներառվել հոգեբանության ժամանակակից ոլորտներում, այն է, որ նախկին հետազոտությունները ունեն տարանջատված, ոչ կոմույատիվ բնույթ, գոյություն չունի մեկ ընդհանուր տեսություն, ինչպես նաև առկա չեն ԺՀ գնահատման կայուն և վալիդ մեթոդներ [119]: ԺՀ բարդության արտացոլման և գնահատման համար օգտագործվել են «Թեմատիկ ապերցեպտիվ թեստը» [115], «Էմպիրիկ ինվենտերիզացիան» [30], «Շրջանների թեստը» [31], «Մոտիվացիոն ինդուկցիայի մեթոդը» [85], հարցարաններ [23,95] և «Ժամանակային գծերը» [94]:

Սակայն այդ մեթոդներից և ոչ մեկը չի ստացել լայն ճանաչում՝ ոչ հուսալի լինելու կամ արդյունքների հաշվարկի բարդության պատճառով: Քանի որ ԺՀ արժեքները պետք է որ սերտորեն կապված լինեն ստանդարտիզացված գործողությունների հետ, որոնք օգտագործվում են նրանց արդյունավետ գնահատման համար, նման տարանջատված սահմանումները և մեթոդները խոչընդոտում են հոգեբանական հետազոտությունների այս ոլորտի ավելի ամբողջական զարգացմանը [119]:

Կոնցեպտուալ պարզեցման փորձերը, որպես կանոն, կենտրոնանում են միայն մեկ չափման վրա, ինչպիսիք են ներկան կամ ապագան՝ այդպիսով ազատվելով այլ ժամանակային չափումների բարդացնող ազդեցությունից: Վառ օրինակներ են «Ապագայի մասին անհանգստության սանդղակը» [118], «Ապագա հետևանքների սանդղակը» [100] և «Զգայությունների փնտրման» հայտնի սանդղակը, որոնց առանձնահատկությունները ընդգծում են դեպի ներկան կողմնորոշված գործառույթը [123]:

Թեև այս սանդղակները բարելավված են՝ ի համեմատ մինչև այս հիշատակված ԺՀ չափման գրաֆիկական մեթոդիկաների, սակայն նրանք միաչափ են: Բացի դրանից՝ այս սանդղակներում ենթադրվում է, որ, օրինակ, ապագայի նկատմամբ կողմնորոշման սանդղակի ցածր միավորը համարժեք է դեպի ներկան կողմնորոշման սանդղակի բարձր միավորին, կամ ցածր միավորը ներկայի սանդղակով համարժեք է դեպի ապագան կողմնորոշմանը: Հատկանշական է, որ այս սանդղակներում բացակայում է անցյալի մասին որևէ պատկերացում: Այս բացը ակնառու է դառնում հատկապես նոր ժամանակներում, երբ առկա են բանավեճեր հոգեբանության և հոգեբուժության միջև՝ կապված արտամղված հիշողությունների բնույթի և դերի հետ, ինչպես նաև բացը տեսանելի է դառնում հետտրավմատիկ սթրեսային խանգարման ավելի լայն ուսումնասիրությունների դեպքում: Այս հակասությունները ենթադրում են, որ անցյալը՝ որպես անձնային վերակառուցում, վճռորոշ դեր է խաղում անհատական և խմբային վարքի շատ կողմերում [27]:

Զիմբարդոյի և իր գործընկերների ջանքերով մշակվել է ԺՀ չափման հարցարան՝ ZTPI-ը (Zimbardo Time Perspective Inventory), որը մինչև օրս հանդիսանում է ԺՀ արտացոլման լավագույն մեթոդիկաներից մեկը, եթե ոչ լավագույնը: Հենց այս

մեթոդիկան էլ օգտագործվելու է սույն աշխատանքի հետազոտական մասում ԺՀ-ների գնահատման համար:

Զիմբարդոյի ժամանակային հեռանկարի հարցարանը (ZTPI) վերացնում է նախկին սանդղակներում առկա թերի կողմերը: Այն հեշտ է կառավարել և գնահատել՝ շնորհիվ վերարտադրելի գործոնային կառուցվածքի, սուբսանդղակների ողջամիտ հուսալիության և ցուցադրված վալիդության: Մեթոդիկան ապահովում է բազմաթիվ ժամանակային կադապարների գնահատումը անհատական ժամանակային պրոֆիլների տեսքով, չափում է ԺՀ լայն կողմերը և հիմնվում է տեսական հենքի վրա, որը միավորում է մոտիվացիոն, հուզական, կոգնիտիվ և սոցիալական գործընթացները, որոնք, ինչպես ենթադրվում է, նպաստում են ԺՀ-ների գործունեությանը և իրենց հերթին գտնվում են նրա ազդեցության տակ: Զիմբարդոյի և գործընկերների հետազոտություններից մի քանիսը ցույց են տալիս, թե ԺՀ-ները ինչ աստիճանով են կապված հոգեբանական կառույցների և անձնային սանդղակների մեծ ու բազմաթիվ խմբերի հետ: Կոնցեպտուալ մակարդակում ԺՀ-ները կարելի է միավորել կամ ներառել տարբեր կառույցների մեջ նախկինում ոչ հայտնի մեթոդներով, և ZTPI-ի օգտագործումը կարող է ծառայել որպես ԺՀ հետազոտությունների ոլորտի կարգավորման խթան [119]:

Զիմբարդոյի կողմից առանձնացվում են 6 հիմնական ժամանակային հեռանկարներ, որոնք բնորոշ են առնվազն արևմտյան հասարակությանը՝ պոզիտիվ անցյալ, նեգատիվ անցյալ, հեղոնսիստական ներկա, ֆատալիստական ներկա, ապագա և տրանսցենդենտալ ապագա (այստեղ տերմինների հայերեն թարգմանությունն չի իրականացվել, քանի որ ուղիղ թարգմանությունը ամբողջովին չի արտահայտում դրանց իմաստը, իսկ երբեմն էլ առաջացնում է շփոթություն):

Պոզիտիվ անցյալի ժամանակային հեռանկարի դեպքում անցյալը չի հանդիսանում հաճելի և տհաճ իրադարձությունների պարզ ձայնագրություն: Անցյալի նկատմամբ դրական վերաբերմունքը կարող է արտահայտել հաճելի իրադարձությունները, որոնք մարդն իրականում ապրել է, կամ վկայել դրական վերաբերմունքի մասին, որը թույլ է տալիս մարդկանց քաղել լավագույնը բարդ իրավիճակներից: Հոգեբանության տեսանկյունից այն, ինչ մտածում են մարդիկ իրենց անցյալի մասին, ազդում է ներկա մտքերի, զգացմունքների և վարքի վրա ավելի շատ,



քան այն, ինչ տեղի է ունեցել իրականում: Ֆ. Նիցշեի հայտնի արտահայտությունը՝ «Այն, ինչ չի սպանում մեզ, դարձնում է ավելի ուժեղ», լավ է արտահայտում այս դիրքորոշումը [83]: Մարդիկ, ովքեր վերապրել են բացասական իրադարձություններ, բայց վերհիշում են դրանք դրականորեն, կարող են դառնալ կենսախինդ և լավատես:

Նեգատիվ անցյալի ժամանակային հեռանկարը, ինչպես և պոզիտիվ անցյալի դեպքում, գնահատում է մեր վերաբերմունքը տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Իհարկե, բացասական վերաբերմունքը կարող է կապված լինել իրական բացասական փորձի հետ, սակայն այն նաև կարող է կապված լինել ի սկզբանե բարենպաստ իրադարձությունների բացասական վերակառուցման հետ: Ոչ ոք չի կարող փոխել իր անցյալը, սակայն յուրաքանչյուրը կարող է փոխել իր վերաբերմունքը և համոզմունքները՝ կապված այդ անցյալի հետ: Ժամանակի նկատմամբ վերաբերմունքը կարելի է համեմատել գետի հոսքի ուղղության փոփոխության հետ, երբ ափին կատարած մանր փոփոխություններով կարելի է փոխել անգամ ամենաջրառատ գետի ընթացքը: Սա նշանակում է, որ անցյալի նկատմամբ վերաբերմունքի պարագայում էլ փոքր փոփոխություններն անգամ կարող են ունենալ մեծ դրական ազդեցություն հետագայում [121]:

Հեղոնիստական ներկայի ժամանակային հեռանկարի հասկացման համար Զիմբարդոն բերում է «Հենրիի օրինակը», ով ZTPI-ի «Ես գործում եմ իմպուլսիվ», «Ես կարծում եմ, որ ընկերների հետ ուրախ ժամանակ անցկացնելը կյանքի կարևոր հաճույքներից մեկն է» պնդումներին տվել է դրական պատասխան: Հենրին ակնհայտորեն առաջնորդվում է Ֆրեյդի կողմից նշված «հաճույքի սկզբունքով» [53]: Նա գործում է պահի ազդեցությամբ, արագորեն նոր ծանոթություններ է հաստատում, շփվող է: Նրա համար հաճելի զբաղմունքներ են մաստուրբացիան, չպաշտպանված սեռական հարաբերությունները, ակոհոլի և թմրանյութերի օգտագործումը, ինչպես նաև սիրում է մեծ արագությամբ մեքենա վարել: Սնվում է «արագ սննդով» և անում է թանկ գնումներ, որոնց համար բացարձակապես գումար չունի: Ընդ որում՝ այս ամենով նա զբաղվում է շատ հաճախ [96,10,90]:

Ֆատալիստական ներկայի ԺՀ-ը բնորոշվում է ներկայի նկատմամբ անտարբեր վերաբերմունքով, քանի որ նման ԺՀ-ով մարդը ZTPI-ի «Ճակատագիրն է շատ բան

որոշում իմ կյանքում», «Այն, ինչ որ պետք է տեղի ունենա, տեղի կունենա՝ անկախ նրանից, թե ինչ կանեն ես դրա համար» պնդումներին տալիս է դրական պատասխաններ: Ֆատալիստական ներկա ԺՀ-ով մարդիկ ունենում են նույն «անպատասխանատու» վարքը, ինչպես հեդոնիստական ներկայի ԺՀ-ով մարդիկ, սակայն լրիվ այլ մոտիվացիայով: Նրանք կարող են օգտագործել թմրանյութեր, զբաղվել չպաշտպանված սեռական հարաբերություններով ոչ թե այն պատճառով, որ դա նրանց հաճույք է պատճառում, այլ նրանք ուղղակի անտարբեր են նման գործողությունների հետևանքների նկատմամբ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ֆատալիստական ներկայի ԺՀ-ով մարդիկ, ովքեր օգտագործում են թմրանյութեր, ավելի են հակված այլ մարդու կողմից արդեն օգտագործված ներարկիչը գործածելու, քան այն մարդիկ, ում մոտ այս սանդղակը թույլ է արտահայտված [66]:

Ապագայի ԺՀ-ով մարդիկ առաջնորդվում են «իրականության սկզբունքով», երբ ունենում են անմիջական հաճույք ստանալու պահանջմունք, սակայն, ի տարբերություն հեդոնիստական ներկայի ԺՀ-ով մարդկանց, մանրամասնորեն կշռադատում են այդ անմիջական հաճույքի առավելությունները և գինը, որը ստիպված են լինելու վճարել դրա համար ապագայում: Նրանք հաճախ հրաժարվում են ներկա հաճույքներից, քանի որ գտնում են, որ ապագայում կստանան ավելի մեծ պարգևատրություն: Աշխատանքում և ուսման մեջ նրանք տեղավորվում են ժամկետներում, պլանավորում և իրականացնում են աշխատանքները նախատեսված ժամկետներում: Ինչպես նաև՝ նրանք մեծ մասամբ կարծում են, որ թմրանյութերի ընդունման կամ չպաշտպանված սեռական հարաբերություններով զբաղվելու ռիսկը արդարացված չէ, քանի որ կարող է խախտել ապագայի իրենց պլանները և թույլ չտալ հասնել նրան, ինչի մասին իրենք երազում են [77,57]:

Զիմբարդոյի կողմից դիտարկվում է նաև տրանսցենդենտալ ապագայի ԺՀ-ը, որը բնորոշում է նաև մահից հետո ապագայի կամ դրա լինելիության նկատմամբ վերաբերմունքը: Տրանսցենդենտալ ապագայի ԺՀ-ով մարդիկ ZTPI-ի «Մահը միայն նոր սկիզբ է» կամ «Կարող է մահանալ միայն ֆիզիկական մարմինը» պնդումներին տալիս են դրական պատասխան: Նրանք այդքան էլ չեն կարևորում ներկա հաճույքները,

ղեկավարում են իրենց իմպուլսիվ ռեակցիաները և հաշվի են առնում իրենց գործողությունների հետևանքները [121]:

### 2.3 Հոգեբանական տրավմայի ազդեցությունը ժամանակային հեռանկարի վրա

Հայ հոգեբաններից Վ. Միքայելյանը նշում է, որ անձի գլխավոր հասկացումներից մեկը դրա դիտարկումն է ժամանակային շարունակականության մեջ: Այս տեսանկյունից հոգեսոմատիկորեն առողջ մարդը (պայմանական իմաստով) ինտեգրացիոն համակարգ է, որը ներառում է անցյալը, ներկան և ապագան: Եթե մարդն օժտված չէ պայմանական հոգեսոմատիկ առողջությամբ, ապա այդ ժամանակավոր համակարգը (անցյալ, ներկա, ապագա) չի կարող ներառված համարվել [5]:

Ժամանակակից և առհասարակ հոգեբանության կենտրոնական հասկացություններից մեկը հոգեբանական տրավման է, որը մեծ ազդեցություն է թողնում մարդու հոգեկանի վրա, ազդում նրա կենսական իրացման, կյանքի որակի, իսկ երբեմն՝ նաև ողջ կյանքի ընթացքի վրա: Այս տեսանկյունից ժամանակի ընկալումը և ժամանակային հեռանկարը բացառություն չեն և ենթարկվում են հոգեբանական տրավմաների ազդեցությանը: Տրավմատիկ իրադարձության առաջացրած հոգեբանական հետևանքներից է հետտրավմատիկ սթրեսային խանգարումը (ՀՏՄԽ), որը մինչ օրս էլ ենթարկվում է լուրջ հետազոտությունների, սակայն լիարժեք բացահայտման և հասկացման մասին խոսելը շատ վաղ է:

Ըստ DSM-5-ի (Հոգեկան խանգարումների ախտորոշիչ և վիճակագրական ուղեցույց, 5-րդ հրատարակություն)՝ ՀՏՄԽ էական առանձնահատկությունը մեկ կամ մի քանի տրավմատիկ իրադարձությունների ազդեցությունից հետո բնորոշ ախտանիշների զարգացումն է: DSM-5-ում կարելի է գտնել ՀՏՄԽ ախտորոշման ժամանակակից «ամենաթարմ» չափանիշները, սակայն աշխատանքի տվյալ հատվածում դրանց մանրամասն շարադրման անհրաժեշտությունը բացակայում է, և ավելի նպատակահարմար է ՀՏՄԽ-ին առնչվող ավելի ընդհանրական երևույթների քննարկումը: Հետաքրքրված ընթերցողը կարող է գտնել չափանիշների մանրամասն նկարագրությունները այստեղ [11]:

ՀՏՄԽ կլինիկական պատկերը կարող է տարբեր լինել. որոշ մարդկանց մոտ կարող են գերակշռել վախի վրա հիմնված կրկնվող ապրումները, հուզական և վարքային ախտանիշները, այլոց մոտ կարող են անհանգստացնող լինել տրամադրության անհեղինակ կամ դիսֆորիկ վիճակները և կոգնիտիվ ունակությունների մակարդակի նվազումը, որոշ մարդկանց մոտ կարող են նկատվել գրգռման և ռեակտիվ-էքստերնալիզացնող ախտանիշներ, երբ միևնույն ժամանակ այլ մարդկանց մոտ գերակայում են դիսոցատիվ ախտանիշները, իսկ շատերի մոտ կարող է դիտարկվել այս ախտանիշային պատտերնների համակցություն [11]:

Անկախ կլինիկական պատկերից՝ ՀՏՄԽ դեպքերում ընդհանուր է տրավմատիկ մեկանգամյա կամ շարունակական իրադարձությունների առկայությունը, որին մարդը կամ ունեցել է անմիջական մասնակցություն, կամ եղել է դրա ականատեսը: Այսինքն՝ ՀՏՄԽ կարող է ունենալ ինչպես պատերազմի երկարատև ընթացքին մասնակցած զինձառայողը, այնպես էլ բուժքույրը, ով ընդամենը մեկ անգամ տեսել կամ բուժօգնություն է ցույց տվել արյունաքամ լինող զինվորի:

Անկախ այն բանից, թե ինչն է հանդիսացել ՀՏՄԽ պատճառը՝ այն ճնշում է առօրյա կյանքի խնդիրների լուծման ունակությունը, կարող է հանգեցնել անվստահության, բարձր զգոնության և բարձր գրգռվողականության ախտանիշների: Զիմբարդոն գտնում է, որ ախտանիշները միայն փոքր մասն են այն ամենի, ինչը տեղի է ունենում ՀՏՄԽ ունեցող մարդկանց հետ: Իրենց ներսում նրանք վերապրում են տրավմատիկ իրադարձությունը կրկին ու կրկին՝ ունենալով միևնույն հույզերը և վախերը: Նրանք ներդնում են այդ հույզերը և վախերը՝ «ներկելով» թե՛ անցյալը, թե՛ ներկան և ապագան միևնույն «գույներով» [122]:

«Հետտրավմատիկ» տերմինը խոսում է ինքն իր մասին. Այսինքն՝ տրավման մնացել է անցյալում, սակայն ՀՏՄԽ ունեցող անձը ունակ չէ այն թողնել ետևում և շարժվել առաջ: ՀՏՄԽ առանցքային երևույթները կապված են ժամանակային վեկտորի այս կամ այն մասի հետ: ՀՏՄՍ ունեցող մարդիկ վերապրում են տրավմատիկ իրադարձությունները կրկին և կրկին գիշերային սարսափներում, հիշողություններում, որոնք ստիպում են վերադառնալ անցյալի սարսափելի պահին, բացասական մտքերում, որոնք կանգնեցնելը անհնար է թվում: Այս արթմնի սարսափները թողնում են նրանց

ժամանակի մեջ «խրված»՝ դարձնելով տրավմայից անընդհատ փախչող, սակայն փախչել՝ անկարող: Զիմբարդոն բերում է այցելուի օրինակ, ով ասում է. «Դու լքում ես պատերազմը, սակայն պատերազմը չի լքում քեզ» [122]:

Զարմանալի չէ, որ ՀՍՄԽ-ով մարդիկ հուսահատորեն փորձում են իրենց ներկա կյանքում փախչել այն ամենից, ինչը կարող է հիշեցնել անցյալի տրավմայի մասին: ՀՍՄԽ շարունակական վիճակը մարդկանց ուղեղում ակտիվացնում է ադրենալինի կանոնավոր «ներարկումները», ինչը աղբյուր է դառնում մշտական լարվածության, և մարդիկ կախվածություն են ձեռք բերում իրենց մշտական լարված վիճակից ու ադրենալինից, իսկ ՀՍՄԽ-ը դառնում է կյանքի բնական մաս:

Մինչ ՀՍՄԽ առաջացումը՝ աղետների ազդեցությանը ենթարկված մարդկանց մոտ հակազդեցությունը տրավմային տեղի է ունենում փուլային ձևով. տուժածները ապրում են շոկ, ուժեղ հույզեր և փորձում են վերակառուցել իրենց կյանքը [16]: Փրկվածները սովորաբար անցնում են հինգ փուլերի միջով.

1. Հոգեկան ընդարմացում: Անմիջապես իրադարձությունից հետո տուժածները ապրում են հոգեկան ընդարմացում՝ ներառված շոկը և շփոթությունը, և որոշ ժամանակ՝ անգամ օրեր անց, կարող են ամբողջովին չգիտակցել տեղի ունեցածը: Անսպասելի, կտրուկ և բռնի աղետները խախտում են աշխարհի գործունեության մասին նրանց պատկերացումները:
2. Ավտոմատ գործողություններ: Այս փուլում տուժածները լավ չեն գիտակցում իրենց ապրումները և ավելի ուշ ցույց են տալիս աղետի մանրամասների վատ վերհիշում:
3. Համատեղ ջանքեր: Այս փուլում տուժողը և նրան աջակցող մարդիկ միավորում են իրենց ռեսուրսները իրավիճակից դուրս գալու համար, սակայն նաև հոգնում են և վատնում էներգիայի պաշարները:
4. Հիասթափություն: Այնուհետև տուժողները կարող են զգալ հիասթափություն, քանի որ էներգիան սպառված է, աղետի բոլոր հետևանքների գիտակցումը ավելի պարզ է դառնում, շրջապատի հետաքրքրությունը նվազում է, և տուժողը կարող է իրեն միայնակ զգալ:

5. Վերականգնում: Վերոնշյալ փուլերին հետևում է վերականգնման երկարատև ժամանակահատվածը, քանի որ տուժողը սկսում է հարմարվել փոփոխություններին, որոնք առաջացել են աղետի հետևանքով [28]:

Այս փուլերը անվերապահորեն կիրառելի չեն բոլոր նրանց նկատմամբ, ովքեր ապրել են տրավմա, սակայն նրանք ամփոփում են տրավմայի անհատական ապրումների ընդհանուր գծերը: Նրանք արտացոլում են խորը փոփոխությունների տեսակները, որոնք նպաստում են ՀՏՄՍ զարգացմանը [120]:

Զիմբարդոյի և Բոյդի հետազոտությունները ցույց են տալիս, որ անցյալի «դրական» ժամանակային հեռանկարները դրականորեն են կապված սուբյեկտիվ բարեկեցության հետ, իսկ ժամանակային «բացասական» հեռանկարները բացասական կախվածության մեջ են սուբյեկտիվ բարեկեցության աստիճանից [121]:

Հեղինիստական ներկա ԺՀ-ը դրական կախվածության մեջ է կյանքից բավարարվածության և երջանկության զգացումների հետ, միևնույն ժամանակ ֆատալիստական ներկա ԺՀ-ը դրական կախվածության մեջ է ափսոսանքի, դեպրեսիայի և տագնապի մեծ քանակի ախտանիշների հետ, իսկ ապագայի ԺՀ-ը կապված է դեպրեսիայի և տագնապի ավելի քիչ ախտանիշների հետ [99,55,33]:

ՀՏՄՍ կոգնիտիվ տեսությունները ենթադրում են, որ անցյալի բացասական համոզմունքները, այդ թվում՝ նաև բացասական անցյալի ԺՀ-ը, գործոններ են, որոնք ամրապանդում են ՀՏՄՍ ախտանիշները [45]:

Պատերազմի վետերանների մոտ փորձարարական հետազոտությունները հաստատում են, որ անցյալի փորձի և բացասական կամ կարճաժամկետ թվացող ապագայի փոխկապակցվածության բարդությունները կապված են ՀՏՄՍ ախտանիշների բարձր մակարդակի հետ [24]:

Բացի սրանից՝ ՀՏՄՍ ախտանիշները ուղիղ կախվածության մեջ են բացասական անցյալի և ֆատալիստական ներկայի ԺՀ-ների հետ ճանապարհային պատահարների մասնակիցներից և փախստականներից կազմված հետազոտական խմբերում [99,88]:

Ինչպես նաև՝ նախկին հետազոտությունները հաստատում են ապագայի ԺՀ դրական դերը ՀՏՄՍ վերականգնման մեջ և ցույց են տալիս, որ նեգատիվ անցյալի

ցածր մակարդակը կապված է ժամանակի ընթացքում ՀՏԽ զարգացման ավելի քիչ հավանականության հետ [71,101]:

Թեև ԺՀ կիրառմամբ թերապիան խոստումնալից արդյունքներ է ցույց տալիս ՀՏԽ բուժման ընթացքում, այնուամենայնիվ, Մ. Քորնելիան իր գործընկերների հետ միասին հետազոտության մեջ գտնում է, որ ՀՏԽ և ԺՀ կապի մասին փորձարարական տվյալները բավարար չեն: Նրանք փորձում են հետազոտել ԺՀ և ՀՏԽ ախտանիշները ճանապարհատրանսպորտային պատահարների ենթարկված անձանցից կազմված հետազոտական խմբի մոտ [29]:

Նրանց հետազոտության մեջ բացի ԺՀ-ից և ՀՏԽ ախտանիշներից դիտարկվում է նաև «լոկուս կոնտրոլը», մասնավորապես՝ այսպես կոչված «ճանապարհային լոկուս կոնտրոլը», որը իրենից ներկայացնում է ճանապարհին տեղի ունեցած բացասական իրադարձությունները սեփական անձին կամ արտաքին հանգամանքներին (այլ վարորդներ, արտաքին միջավայր և այլն) վերագրելու ընդհանուր միտումը: Հետաքրքրված ընթերցողը «լոկուս կոնտրոլի» մասին ավելի մանրամասն կարող է տեղեկանալ հաջորդող հղումով [87]:

Վերոնշյալ հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ նեգատիվ անցյալի և ֆատալիստական ներկայի ԺՀ-ները դրականորեն են կապված ՀՏԽ ախտանիշների հետ. դրականորեն է կապված ՀՏԽ ախտանիշների հետ նաև հեղոնիստական ներկայի ԺՀ-ը, ինչը անսպասելի արդյունք է հանդիսացել հետազոտողների համար: Այս արդյունքները կարող են նշանակություն ունենալ ՀՏԽ թերապիայի համար, քանի որ թույլ են տալիս բացահայտել ՀՏԽ բուժման համար ոչ ադապտատիվ ԺՀ-ները և մշակել դրանց փոփոխման թերապևտիկ մարտավարություններ [87]:

ՀՀ-ում նույնպես անց է կացվել ԺՀ-ների հետազոտություն, սակայն այստեղ դիտարկվել է դրա կապը անձի գործունեության հետ [2]:

Մարտական գործողությունների մասնակից անձանց հետ աշխատանքում նմանատիպ բացահայտումների և փոփոխությունների նպատակ է հետապնդում նաև այս աշխատանքը, սակայն չի սահմանափակվում միայն դրանով:

### ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

#### 3.1 Հետազոտական ընտրանքի ձևավորումը

Այս աշխատանքի հիմնական նպատակն է հետազոտել մարտական գործողությունների մասնակից և ՀՏՄԽ ունեցող անձանց մոտ ժամանակային հեռանկարների, անձնային արտահայտված գծերի և տարբեր հոգեպաթոլոգիաների միջև հնարավոր կապերը, ինչպես նաև հասկանալ՝ տարբերվում են արդյոք, և եթե տարբերվում են, ապա՝ ինչպես, մարտական գործողությունների մասնակցած անձանց և մարտական գործողությունների երբևէ չմասնակցած անձանց մոտ ժամանակային այս կամ այն հեռանկարների, անձնային գծերի և հոգեպաթոլոգիաների արտահայտվածության մակարդակները: Ելնելով այս ընդհանրացված, սակայն բավարար չափով հստակ նպատակից՝ որպես հետազոտության թիրախ են ընտրվել մարտական գործողությունների մասնակցած անձինք, իսկ մարտական գործողությունների մասնակցության գործոնի ազդեցությունը մնացած այլ գործոններից տարանջատելու համար ընտրվել է նաև նույն տարիքային միջակայքում գտնվող, նույն սեռին պատկանող, սակայն մարտական գործողությունների երբևէ չմասնակցած անձանցին կազմված ստուգիչ խումբ:

Փորձարարական խմբի անդամների ընտրության համար սահմանվել են ներառման և բացառման հետևյալ չափանիշները.

- հետազոտության պոտենցիալ մասնակիցը պետք է ունենա 2020 թվականի սեպտեմբերին սկսված «44-օրյա» հայ-ադրբեջանական պատերազմում մասնակցություն մարտական գործողություններին (մարտական գործողությունների մասնակցությունը ենթադրում է առաջնագծում և/կամ թիկունքում որևէ զինատեսակով հակառակորդի հետ մարտ վարելը, և/կամ ենթարկվելը հակառակորդի կողմից կիրառված որևէ զինատեսակի ազդեցության՝ այդ պահին հանդիսանալով մարտական գործողության կողմ)



- ներկա պահին չգտնվի զինձառայության մեջ
- չունենա մասնակցություն 2020 թվականից հետո տեղի ունեցած որևէ մարտական գործողության
- լինի արական սեռի 18-60 տարեկան ներկայացուցիչ

Հետազոտական ստուգիչ խմբի անդամների ընտրության համար սահմանվել են ներառման և բացառման հետևյալ չափանիշները.

- հետազոտության ստուգիչ խմբի պոտենցիալ մասնակիցը չպետք է ունենա մասնակցություն որևէ մարտական գործողության
- ներկա պահին չգտնվի զինձառայության մեջ
- լինի արական սեռի 18-60 տարեկան ներկայացուցիչ

Փորձարարական խմբի անդամներին ներկայացվել է 2020 թվականի սեպտեմբերին սկսված «44-օրյա» հայ-ադրբեջանական պատերազմում մարտական գործողությունների մասնակցության պահանջը՝ հաշվի առնելով տվյալ ռազմական կոնֆլիկտի տեղի ունենալու ժամկետը, ինչը թույլ է տալիս միաժամանակ և նվազեցնել ռետրամատիզացիայի ռիսկերը, և մեծ հավանականությամբ ենթադրել ակտուալ հոգետրավմայի հնարավոր առկայությունը նրանց մոտ:

Ներկա պահին զինձառայության մեջ չգտնվելու պահանջը թույլ է տալիս բացառել ձառայության կողմից ենթադրվող գործոնների ամբողջությունը, որոնք կարող են լրջորեն ազդել անձի հոգեկան աշխարհի վրա՝ խեղաթյուրելով հետազոտության արդյունքները:

Նույն նպատակին ծառայում է նաև 2020-ից հետո տեղի ունեցած որևէ մարտական գործողության մասնակցության փաստի բացառումը պոտենցիալ հետազոտվողների մոտ, սակայն սա նաև թույլ է տալիս խուսափել «թարմ» հոգետրավմայով անձանց ներառումից: Այս կետը հատկանշական է այն տեսանկյունից, որ հետազոտության անցկացման ժամանակահատվածը համընկնում է 2022-ի սեպտեմբերին հայ-ադրբեջանական կոնֆլիկտի հերթական սրման դեպքից («44-օրյա» պատերազմից հետո ամենախոշոր ընդհարումը) մոտ մեկ ամիս հետո ընկած ժամանակահատվածին:

18-60 տարեկան, արական սեռի չափանիշներով սահմանափակումը հիմնվում է ՀՀ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի վրա, որում սահմանված է զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը բարձրագույն սպայական կազմի «գեներալ-մայոր» և «գեներալ-լեյտենանտ» զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 60 տարեկանը, իսկ պարտադիր զինծառայության անցնելու տարիքը՝ 18 տարեկանից սկսած [1]: Սեռային սահմանափակումը պայմանավորված է պատերազմում մարտական գործողություններին իգական սեռի անձանց մասնակցության համամասնորեն փոքր տոկոսով, ինչը թույլ կտար հետազոտական խմբում լավագույն դեպքում ունենալ մի քանի արդյունք, որոնք բավարար չէին լինի կորեյացիների և եզրահանգումների համար:

Հետազոտական ստուգիչ խմբի անդամների ընտրության մեջ ներառման և բացառման չափանիշներից՝ որևէ մարտական գործողության մասնակցած չլինելու պահանջը, հենց այն չափորոշիչն է, որը սկզբունքայնորեն և արմատապես տարբերում է հետազոտական ստուգիչ խումբը փորձարարական խմբից: 18-60 տարեկան, արական սեռի ներկայացուցիչ լինելու պահանջը հիմնավորվում է նույն կերպ, ինչպես հիմնավորվել էր փորձարարական խմբի դեպքում: Նմանապես՝ այս պահին զինծառայության մեջ չգտնվելու պահանջը թույլ է տալիս բացառել ծառայությամբ ենթադրվող գործոնների ամբողջությունը, որոնք կարող են լրջորեն ազդել անձի հոգեկան աշխարհի վրա՝ խեղաթյուրելով հետազոտության արդյունքները:

Փորձարարական խմբի անդամների փնտրումը իրականացվել է ՀՀ-ում գործող բուժհաստատություններում բուժում ստացող կամ ստացած զինծառայողների շրջանում, և ընտրությունը կանգ է առել առավել մեծ թվով շահառուներ ունեցող հաստատություններից մեկի վրա: Ստուգիչ խմբի անդամները ընտրվել են պատահականության սկզբունքով, առցանց հարթակներում անվերահսկելի տարածման միջոցով: Ստեղծվել է առցանց հարցաթերթ, որում առկա ներառման չափանիշներին համապատասխանելու դեպքում միայն հետազոտվողները ստացել են հասանելիություն՝ մասնակցելու բուն հետազոտությանը:

Փորձարարական խումբը փաստացի կազմել են թվով 61 տղամարդիկ՝ 18-52 տարեկան միջակայքում (միջին տարիքը՝ մոտ 30), իսկ հետազոտական ստուգիչ խումբը կազմել են 60 տղամարդիկ՝ 19-52 տարեկան միջակայքում (միջին տարիքը՝ մոտ 28):

Հետազոտության մասնակիցները հետազոտությունից առաջ բանավոր և/կամ տեքստային ձևով տեղեկացվել են հետազոտության նպատակների, իրականացնողների և արդյունքների օգտագործման հարթակների մասին: Անցնելով հետազոտությանը՝ նրանք իրենց համաձայնությունն են տվել հետազոտողների հայեցողությամբ ստացված տվյալների օգտագործմանը:

Հետազոտության անցկացման ընթացքում չի հավաքագրվել որևէ անձնային նույնականացնող տվյալ, ինչպես նաև հնարավորության և իրավասության չափով ապահովվել են հետազոտվողների ֆիզիկական և հոգեկան առողջությանը չվնասող պայմաններ:

### 3.2 Հետազոտության մեթոդիկաները, նախագծումը և իրականացումը

Հետազոտական առաջադրված խնդիրների լուծման համար հարկ է ընտրել մեթոդիկաներ, որոնք թույլ կտան չափել հետազոտվողների մոտ ԺՀ-ների, անձնային գծերի արտահայտվածությունների մակարդակը և նրանց մոտ մարտական գործողությունների մասնակցությամբ պայմանավորված ՀՏՄԽ առկայությունը: Հետազոտության անցկացման համար ընտրվել են ԱՄՆ կառավարությանն առընթեր գործող ՀՏՄԽ ազգային կենտրոնի առաջարկած «Առաջնային օգնության ՀՏՄԽ սքրինինգ թեստ ըստ DSM-5-ի» հարցարանը (PC-PTSD-5) հետազոտվողների հետ հնարավոր ՀՏՄԽ բացահայտման համար, Զիմբարդոյի և գործընկերների մշակած «Ժամանակային հեռանկարի հարցարանը» (ZTPI)՝ ժամանակային հեռանկարների հասկացման համար, իսկ անձնային գծերի և հոգեպաթոլոգիաների բացահայտման համար օգտագործվել է «Մինեսոտայի բազմափուլ անձնային հարցարանի» (MMPI) սեղմ տարբերակը՝ «Մինի մուլտը» [119,93,3]:

ՀՏՄԽ սքրինինգ թեստի ընտրությունը պայմանավորված է դրա պարզության և գործնական դաշտում կիրառելիության գործոններով, քանի որ հետազոտական

խմբերը, որոնք ունեն տրավմաներ, հաճախ ունեն նաև ուշադրության կենտրոնացման խնդիրներ և/կամ հեշտությամբ են հոգնում նմանատիպ գործողությունների կատարումից: Առհասարակ, հետազոտության ողջ ընթացքը կառուցվել է հետազոտվողների բարեկեցությանը նվազագույն վնաս հասցնելու հիմնական սկզբունքի շուրջ, այդ իսկ պատճառով բոլոր մեթոդիկաների ընտրության հարցում առաջնային է եղել նաև դրանց պարզությունը և խելամիտ կարճատևությունը: Վերոնշյալ մեթոդիկան ամբողջովին համապատասխանում է նշված պահանջներին, ինչպես նաև հանդիսանում է կիրառական գործիք, որով այժմ էլ աշխատում են ԱՄՆ մեր գործընկերները:

ZTPI հարցարանի ընտրությունը հիմնավորվում է նաև համանման գործիքների բացակայությամբ, սակայն չի սահմանափակվում միայն դրանով: Այս հարցարանը փորձարարական և տեսական ճանապարհներով բազմիցս ապացուցել է իր հուսալիությունը, և կարելի է ասել, որ Ջիմբարդոյի առաջարկած ժամանակային հեռանկարների մոդելը հիմնվում է այս մեթոդիկայով ստացված արդյունքների վրա, իսկ մեթոդիկան ինքնին հանդիսանում է տեսության կարևոր մասը և արդյունքը: Այս աշխատանքում հիմք են վերցվել Ջիմբարդոյի և գործընկերների առաջարկած տեսական նյութերը և անցկացրած հետազոտությունները՝ կապված ժամանակային ընկալման հետ, և ZTPI հարցարանի օգտագործումը հանդիսանում է այդ ամենի տրամաբանական շարունակությունը:

«Մինի մուլտ» հարցարանի ընտրությունը պայմանավորվել է կրկին դրանում առկա պնդումների հարաբերականորեն ոչ մեծ քանակով (71 պնդում), ինչը, սակայն, հնարավորություն է տալիս ստանալ տեղեկատվություն 8 հիմնական սանդղակներով:

Երևույթները, որոնք հետազոտվում են այս աշխատանքի շրջանակներում, հանդիսանում են մինչ այս պահը քիչ ուսումնասիրված կամ ուսումնասիրված այլ տրավմաների համատեքստում, այդ իսկ պատճառով հնարավորինս բազմազան տեղեկատվության բացահայտումը թույլ է տալիս գտնել նոր կապեր և կորելյացիաներ, որոնք կօգնեն նաև հետազոտողներին հետազայում:

ՀՏՄԽ ազգային կենտրոնի առաջարկած «Առաջնային օգնության ՀՏՄԽ սքրինինգ թեստ ըստ DSM-5-ի» հարցարանը (PC-PTSD-5) կազմված է 5 հիմնական

հարցերից և մշակվել է մարդկանց մոտ առաջնային բուժօգնության ընթացքում հնարավոր ՀՏՄԽ բացահայտման համար: Չափումը սկսվում է հարցից, որը չափում է մարդու մոտ փորձի առկայությունը՝ կապված տրավմատիկ իրադարձությունների հետ: Եթե հետազոտվողը հերքում է նման փորձը, PC-PTSD-5-ը ավարտվում է «զրո» գնահատմամբ, սակայն եթե հետազոտվողը նշում է, որ իր մոտ եղել է տրավմայի կենսական փորձ, ապա նրան առաջարկվում է պատասխանել հինգ հավելյալ հարցերի այն մասին, թե ինչպես է տրավմայի այդ փորձը ազդել նրա կյանքի վրա վերջին մեկ ամսվա ընթացքում:

Հարկ է նշել՝ քանի որ այս մեթոդիկան մշակվել է հնարավոր ՀՏՄԽ բացահայտման համար հետազոտվողների մոտ, ովքեր ցույց են տվել դրական արդյունք, անհրաժեշտ են հավելյալ հետազոտություններ՝ ընդհուպ մինչև կլինիկական հարցազրույց և ախտորոշում՝ վստահաբար պնդելու համար, որ տվյալ հետազոտվողի մոտ առկա է ՀՏՄԽ: Սակայն սա ոչ միշտ է հնարավոր՝ կապված հետազոտվողների առողջական վիճակի, ժամանակի և բուժանձնակազմի ռեսուրսների սահմանափակության հետ:

PC-PTSD-ում արվել են մի շարք կարևոր փոփոխություններ, երբ տեղի է ունեցել անցում DSM-5-ին: Սկզբնական տարբերակում հետազոտվողներին առաջարկվում էր պատասխանել ախտանիշների մասին հարցերին՝ փորձի համատեքստում, որը եղել է «սասրսափելի կամ վշտացնող», ինչը կարող էր հանգեցնել նրան, որ հետազոտվողները նշեն իրադարձություններ, որոնք թեև եղել են սթրեսային, սակայն չեն հանդիսանում առաջին կարգի տրավմաներ (օրինակ՝ բաժանումը): Սրանից խուսափելու համար PC-PTSD-5-ում հետազոտվողներին հարց է ուղղվում, թե ապրել են նրանք նախկինում տրավմատիկ իրադարձություններ, և բերվում են իրադարձությունների օրինակներ, որոնք կարող են դասակարգվել որպես այդպիսին (օրինակ՝ սեռական բռնություն, պատերազմ և այլն): Եթե հետազոտվողները չեն ենթարկվել տրավմատիկ իրադարձությունների, նրանք չեն անցնում PC-PTSD-5-ի մնացած հատվածին: Եթե նրան հաստատում են նախկինում տրավմայի ազդեցության ենթարկվելը, նրանք պատասխանում են PC-PTSD-5-ի՝ այդ տրավմային առնչվող հարցերին:

Եթե մեթոդիկայի սկզբնական տարբերակում եղել է 4 հարց DSM-4-ի ՀՏՄԽ ախտանիշների մասին, ապա նոր տարբերակում ավելացվում է 5-րդը, որը թույլ է տալիս գնահատել այն, թե ունեցե՞լ է հետազոտվողը տրավմայի հետ կապված մեղքի և/կամ մեղքի աղավաղված զգացում: Այս հավելյալ հարցը մեթոդիկան դարձնում է ավելի համապատասխան DSM-5-ում նկարագրված ՀՏՄԽ ախտորոշման նոր գիտելիքներին:

PC-PTSD-5-ում գնահատումը իրականացվում է հետևյալ կերպ. եթե հետազոտվողը հաստատում է տրավմատիկ փորձի առկայությունը, ապա նա կարող է ստանալ 0-5 միավոր, ինչը չափվում է 5 հարցերին տրված «այո» պատասխաններով՝ այն մասին, թե տրավման ինչպես է ազդել նրանց կյանքի վրա վերջին ամսվա ընթացքում:

Առաջնային օգնություն ստացած բուժառուների մեծ քանակի հետ հետազոտությունները ցույց են տալիս, որ տղամարդկանց ընդհանրական ընտրանքի համար օպտիմալ է համարվում 4 միավորի սահմանային ցուցանիշը, ինչը կատարյալ բալանսավորում է և կեղծ դրական, և կեղծ բացասական արդյունքները, սակայն կանանց ընտրանքի դեպքում 4 միավորի սահմանային ցուցանիշը հանգեցնում է կեղծ բացասական պատասխանների մեծ քանակի: Որոշ դեպքերում մասնագետները կարող են կանանց դեպքում օգտագործել ավելի ցածր սահմանային ցուցանիշ, եթե առկա են լրացուցիչ հետազոտման հավելյալ ռեսուրսներ:

Վերոնշյալ ցուցանիշները կարող են փոփոխության ենթարկվել՝ կախված ընտրանքից, այդ իսկ պատճառով մասնագետները պետք է հաշվի առնեն խմբի առանձնահատկությունները և մեծ ընտրանքի հնարավորության դեպքում ուղղեն սահմանային ցուցանիշը՝ հարմարեցնելով իրենց ընտրանքին [92]:

Ժամանակային հեռանկարների չափմանն ուղղված ZPTI հարցարանը, ինչպես արդեն նշվել է, մշակվել է Ֆ. Զիմբարդոյի և նրա գործընկերների կողմից: Այն ուղղված է ժամանակային կոնտիննումի նկատմամբ անձի վերաբերմունքային համակարգի ախտորոշմանը: Նախորդ գլուխներում մանրամասն քննարկվել և բացատրվել է ժամանակային հեռանկար հասկացությունը, քննարկվել են նաև հետազոտությունները, որոնք նախորդել են ինչպես ԺՀ հասկացության, այնպես էլ այն չափող մեթոդիկայի առաջացմանը:

Մեթոդիկայի հեղինակների կողմից հետազոտվել են 12000 մասնակիցներ, և առանձնացվել են 7 ժամանակային գործոններ, որոնց քանակը հետագա վիճակագրական վերլուծության արդյունքում կրճատվել է մինչև 5: Այս 5-գործոնային կառուցվածքը հանդիսանում է կայուն և վերարտադրվող, ինչը հաստատվում է հետագա հետազոտություններում: Բացի այս գործոններից՝ հեղինակների կողմից առանձնացվում է նաև տրանսցենդենտալ ապագայի ժամանակային հեռանկարը, որը լրացնում է մեթոդիկան:

ZTPI հարցարանի օրիգինալ տարբերակը կազմված է 56 կետերից, որոնց տրվող պատասխանները բաշխվում են Լայկերտի 5-միավորանոց սանդղակով: Սանդղակը իրենից ներկայացնում է պնդումներին տրվող հետևյալ պատասխանները՝ ըստ միավորներիի աճման.

1. Միանշանակ սխալ է
2. Հավանաբար սխալ է
3. Չեզոք
4. Հավանաբար ճիշտ է
5. Միանշանակ ճիշտ է

Վերոնշյալ 56 կետերին ավելանում են նաև 10 կետեր, որոնք վերաբերում են տրանսցենդենտալ ապագայի ժամանակային հեռանկարին, և այս պնդումներին տրված պատասխանները նույնպես բաշխվում են Լայկերտի 5-միավորանոց վերոնշյալ սանդղակով [80]: Արդյունքները հաշվարկվում են երկու դեպքում էլ հետևյալ ձևով՝ գումարվում են բոլոր միավորները և բաժանվում դրանց ընդհանուր քանակին:

Հարցարանից կարելի է դուրս բերել 5 ցուցանիշներ.

1. Նեգատիվ անցյալի ընկալման գործոն: Այն արտահայտում է սեփական անցյալի չընդունման աստիճանը, անցյալի, որն առաջացնում է զզվանքի, ուժեղ ցավի և հիասթափության զգացողություններ: Արտահայտում է անցյալի նկատմամբ ընդհանուր հոռետեսական, բացասական կամ զզվանքի հետ խառնված վերաբերմունք: Այս ժամանակային հեռանկարի բարձր ցուցանիշը ենթադրում է անցյալում տեղի ունեցած տրավմա, ցավ կամ զղջում: Նման վերաբերմունքը կարող է լինել ինչպես իրական տհաճ և տրավմատիկ իրադարձությունների,

- այնպես էլ անցյալի դրական իրադարձությունների բացասական վերակառուցման արդյունք, կամ էլ կարող է լինել միաժամանակ երկուսի արդյունքը:
2. Պոզիտիվ անցյալի ընկալման գործոն: Այն արտահայտում է սեփական անցյալի ընդունման աստիճանը, որի դեպքում ցանկացած փորձ հանդիսանում է անհատի զարգացմանը նպաստող և ներկա իրավիճակին հանգեցնող գործոն: Այստեղ առկա է անցյալի նկատմամբ ջերմ, հուզական վերաբերմունք: Պոզիտիվ անցյալի ընկալման գործոնը բնութագրվում է անցյալի դրական, նուստալգիկ վերակառուցմամբ, որտեղ այն ներկայացվում է գունավոր երանգներով:
  3. Հեղոնիստական ներկայի ընկալման գործոն: Այս դեպքում ներկան թվում է կտրված անցյալից և ապագայից, նրա հիմնական նպատակն է հաճույքի ստացումը: Ժամանակային այս հեռանկարը արտացոլում է կենսական ժամանակի նկատմամբ հեղոնիստական, ոչսկային, անտարբեր վերաբերմունքը: Այն ենթադրում է կողմնորոշում դեպի հաճույքը, հուզմունքը, գրգռումը, վայելքը ներկայում: Հեղոնիստական ներկայի ընկալման գործոնով հետազոտվողները հոգ չեն տանում ապագա հետևանքների մասին և պատրաստ չեն գնալ զոհողությունների ներկայում՝ հանուն ապագա նվաճումների:
  4. Ֆատալիստական ներկայի ընկալման գործոն: Այս ժամանակային կողմնորոշման դեպքում կյանքը թվում է անհատի կամքից անկախ, նախապես կանխորոշված, իսկ անհատը թվում է ճակատագրից կախված: Առկա է ֆատալիստական, անօգնական և անհույս վերաբերմունք ապագայի և կյանքի նկատմամբ: Այս գործոնը արտացոլում է կենտրոնացված ժամանակային հեռանկարի բացակայություն: Ֆատալիստական ներկայի ընկալման գործոնով անձանց մոտ կենտրոնացվածությունը չի բավարարում դեպի ապագան կողմնորոշված նպատակների համար, առկա չէ միտում դեպի հուզմունքը, ինչպես դա հեղոնիստների մոտ է, առկա չէ նուստալգիա կամ տխրություն, ի տարբերություն այն մարդկանց, ովքեր ունեն անցյալի երկու սանդղակներով էլ բարձր արդյունքներ: Այս հեռանկարով մարդիկ գտնում են, որ իրենց ապագան կանխորոշված է, նրա վրա անհնար է ազդել անհատական գործողություններով.



ներկան պետք է ապրվի հնազանդությամբ և համակերպմամբ, այսինքն՝ մարդիկ գտնվում են «կամակոր» ճակատագրի իշխանության ներքո:

5. Ապագայի նկատմամբ կողմնորոշում: Այն արտահայտում է անհատների մոտ ապագայի նպատակների և պլանների առկայությունը, արտացոլում է դեպի ապագան ընդհանուր կողմնորոշվածությունը, ենթադրում է, որ վարքը մեծ մասամբ պայմանավորվում է ապագայի նպատակներին և պարզևատրումներին ձգտումով: Ապագայի նկատմամբ կողմնորոշումը բնորոշվում է հետագա նպատակների նախագծմամբ և դրան հասնելու ձգտումով:

Այս 5 կողմնորոշումներին ավելանում է նաև տրանսցենդենտալ ապագայի սանդղակը, որը բնորոշում է նաև մահից հետո հնարավոր ապագայի նկատմամբ վերաբերմունքը:

Ներկա պահին էլ այս մեթոդիկան կատարելագործվում է և ենթարկվում կառուցվածքային փոփոխությունների: Ենթադրվում է, որ ժամանակային հեռանկարի օպտիմալ պրոֆիլը համապատասխանում է հիմնական սանդղակների ցուցանիշների հետևյալ համակցությանը՝ բարձր միավոր «Պոզիտիվ անցյալ» սանդղակով, բավականին բարձր միավոր «Ապագա» սանդղակով, միջին միավոր «Հեղոնիստական ներկա» սանդղակով և ցածր միավորներ «Նեգատիվ անցյալ» և «Ֆատալիստական ներկա» սանդղակներով [119]:

«Մինի մուլտ» հարցարանը, որը հանդիսանում է «Մինեսոտայի բազմափուլ անձնային հարցարանի» (MMPI) սեղմ տարբերակը, պարունակում է 71 հարց, որոնք համապատասխանում են 11 սանդղակների: Սանդղակներից 3-ը գնահատողական են, իսկ մնացած 8-ը՝ հիմնական: Առաջին 3 գնահատողական սանդղակները չափում են հետազոտվողների անկեղծությունը, թեստավորման արդյունքների հավաստիության աստիճանը և շտկման մեծությունը, որը մտցվում է հետազոտվողների զգուշավորության աստիճանից ելնելով: Մնացած 8 սանդղակները հիմնական են և գնահատում են անձնային գծերը:

Ստի սանդղակը (L) գնահատում է հետազոտվողի անկեղծությունը հետազոտության ընթացքում: Սանդղակի ցածր արդյունքներով հետազոտվողները անհատներ են, ովքեր բաց են, չեն թաքցնում իրենց դժվարությունները, թուլությունները

և հոգեպաթոլոգիաները: Լավ գիտակցելով սեփական դժվարությունները՝ հակված են ավելի շատ գերազնահատել, քան թերազնահատել միջանձնային կոնֆլիկտների մակարդակը, դիտարկվող ախտանիշների ծանրությունը, անձնային անադեկվատության աստիճանը:

Սանդղակով ստացված բարձր արդյունքները ցույց են տալիս հետազոտվողի՝ իրեն ավելի բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու ցանկությունը, որտեղ ցուցադրվում է հասարակական կանոնների խիստ պահպանումը: Այս ձգտումը կարող է պայմանավորված լինել հետազոտվողի աշխարհայացքի սահմանափակությամբ, իրավիճակով, պաթոլոգիայի հետևանքով, որոշակի մասնագիտական խմբի պատկանելությամբ, որտեղ առկա է կանոնների պահպանման ծայրահեղ բարձր ստանդարտ:

Հավաստիության սանդղակը (F), համապատասխան իր անվանը, բացահայտում է ոչ հավաստի պատասխանները, և որքան բարձր են սանդղակով ստացված արդյունքները, այնքան ոչ հավաստի են արդյունքները: Սանդղակով բարձր ցուցանիշները հնարավոր են հետևյալ դեպքերում՝

1. Անձի ոչ հարմարվող լինելու դեպքում, ինչը իր հերթին կապված է ընկալման և տրամաբանության յուրօրինակությունների հետ
2. Աուտոտիպային անձնային գծերի դեպքում, երբ հետազոտվողն ունի դժվարություններ միջանձնային շփման ընթացքում
3. Չկարգավորած վարքի ցուցադրման հակման կամ կանոնների դեմ բողոքի վառ արտահայտվածության պարագայում
4. Դեռահասների մոտ՝ անձի ձևավորման փուլում, որտեղ գերակայում է ինքնարտահայտման ձգտումը
5. Արտահայտված տագնապայնության դեպքում

Շտկման սանդղակը (K) ուղղված է թեստավորման ընթացքում հետազոտվողի կողմից չափազանց զգուշավորությամբ և վերահսկողությամբ պայմանավորված շեղումների հարթեցմանը, և սանդղակի միավորները օգտագործվում են հիմնական սանդղակների շտկման համար: Այս սանդղակով բարձր միավորները խոսում են վարքի չգիտակցված վերահսկողության մասին: Ստացված ցածր արդյունքներով

հետազոտվողները, ավելի հավանական է, որ բարեհամբույր և շփվող են, ունեն միջանձնային հարաբերությունների փորձ և կարողանում են այդտեղ գտնել վարքի ճշգրիտ գիծ:

Սանդղակով ստացված բարձր միավորները խոսում են այն մասին, որ, հավանաբար, անձն իր վարքը որոշում է հասարակական խրախուսման միջոցով և անհանգստանում է իր հասարակական կարգավիճակի համար: Նա հերքում է միջանձնային հարաբերություններում կամ իր սեփական վարքի մեջ ինչ-որ դժվարությունների առկայությունը:

Հիմնական սանդղակներից առաջինը հիպոխոնդրիայի սանդղակն է (Hs), որի բարձր միավորները խոսում են այն մասին, որ հետազոտվողները մոտ են ասթենոնևրոտիկ տեսակին, դանդաղկոտ են, պասիվ, հեշտությամբ են հավատում, հակված են իշխանության և դժվար են հարմարվում, հեշտությամբ են կորցնում հավասարակշռությունը սոցիալական կոնֆլիկտների ընթացքում: Բարձր ցուցանիշները խոսում են նաև տագնապի հնարավոր բարձր աստիճանի մասին, սակայն այդ տագնապը առաջանում է ոչ թե արտաքին հասարակական պատճառներով, այլ սեփական առողջության մասին անհանգստություններից:

Հիպոխոնդրիայի սանդղակով ցածր արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտվողը անհանգիստ չէ՝ սեփական առողջության հետ կապված, ավելի գործունյա է, էներգիայով լի և ավելի հաջող է լուծում իր դժվարությունները՝ օգտագործելով վարքի ավելի հարմարվողական ձևեր:

Դեպրեսիայի սանդղակով (D) ստացված բարձր արդյունքներ են գրանցվում այն հետազոտվողների մոտ, ովքեր զգայուն են, հակված են տագնապների, ամաչկոտ են և անհամարձակ: Գործունեության մեջ նրանք ջանասեր են, բարեխիղճ, պարտաճանաչ, սակայն ընդունակ չեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, ինքնավստահ չեն, ամենափոքր անհաջողություններից անգամ հուսահատության են մատնվում: Սանդղակով ստացված բարձր միավորը խոսում է այն մասին, որ հետազոտվողի մոտ ավելի շատ առկա է բարձր տագնապ, քան դեպրեսիա: Առկա է անորոշ վտանգի զգացողություն, որի առաջացման բնույթը և ժամանակը չեն ենթարկվում

կանխատեսման: Շրջապատի աչքերում նման մարդը թվում է հոռետես, լռակյաց և ամաչկոտ, սակայն իրականում նա ունի սոցիալական կապերի և աջակցության կարիք:

Սանդղակով ստացված ցածր միավորները խոսում են տագնապի ցածր մակարդակի, ակտիվության, շփվողականության, սեփական նշանակալիության զգացման գիտակցման մասին:

Հիստերիայի սանդղակը (Hy) բացահայտում է մարդկանց, ովքեր հակված են կոնվերսիոն տեսակի նյարդաբանական պաշտպանական ռեակցիաների: Նրանք կարող են օգտագործել սոմատիկ հիվանդության ախտանիշները՝ որպես պատասխանատվությունից փախչելու միջոց, իսկ բոլոր խնդիրները լուծվում են հիվանդության հեռանալու հետ: Այս սանդղակով բարձր միավորներ ունեցող հետազոտվողների մոտ նկատվում է տագնապ առաջացնող գործոնների արտամղում, մարմնական անբարեկեցության ցուցադրական ընդգծում, որում առկա է սոցիալական հարմարման դժվարությունների բացառման միտում: Արտամղման լավ ունակությունը, որը թույլ է տալիս արդյունավետ վերացնել տագնապը, միևնույն ժամանակ բարդացնում է բավարար կայուն վարքի ձևավորումը, մշտապես առաջանում են նոր դերեր, խնդիրներ և գնահատականներ: Սանդղակով ստացված ցածր արդյունքը խոսում է ինտրովերսիայի, կասկածամտության, հասարակական կապերում ոչ բավարար սպոնտանության մասին:

Հոգեպաթիայի սանդղակով (Pd) ստացված բարձր արդյունքները վկայում են սոցիալական չհարմարման մասին. նման արդյունքներով մարդիկ ագրեսիվ են, կոնֆլիկտային, անտեսում են սոցիալական արժեքները և կանոնները: Նրանց մոտ կարող են առկա լինել հոգեպաթանման վարք, ասոցիալական արարքների հակում: Վարքը բնորոշվում է էթիկական արժեքների, բարոյական նորմերի անտեսմամբ, որը կարող է սահմանափակվել մոտ մարդկանց հետ հարաբերություններով, սակայն կարող է նաև ունենալ ընդհանրացված բնույթ:

Սանդղակով ստացված ցածր արդյունքները մատնանշում են կոնվենցիոնալությունը, սեփական հասարակական դիրքի հետ նույնականացման բարձր մակարդակը, հիմնական հետաքրքրությունների, նպատակների պահպանման միտումը:

Պարանոյալուրջայան սանդղակի (Pa) բարձր միավորներով անձանց գլխավոր գիծը հակումն է՝ ստեղծելու գերարժեք գաղափարներ: Նրանց մոտ հնարավոր է կուտակված փորձի կառուցվածքավորման միտում, կասկածամտություն, նեղացկոտություն, նպատակին հասնելու համառություն, բժախնդրություն, այլ մարդկանց անբարյացակամության մեջ մեղադրելու միտում, սեփական հույզերի ռիզիկոսություն: Անձնային գծերում առկա զգայունակությունը և նեղացկոտությունը շրջապատողների թերություններից բողոքելու միտման հետ ուղեկցվում են կոնցեպցիայի ուժգին ձևավորմամբ, որը կոչված է բացատրելու հույզերի առաջացումը, սակայն նաև կոչված է պահպանելու սեփական անձի մասին ընդունելի պատկերացումը:

Պարանոյալուրջայան սանդղակով ստացված ցածր միավորները կարող են լինել երկու դեպքում՝ առաջին, երբ հետազոտվողը չվստահող է և զգույշ, վախենում է իր գործողությունների տիպի հետևանքներից, և երկրորդ, երբ հետազոտվողը ունի ճկուն մտածողություն և հարկ եղած դեպքում հեշտությամբ է փոխում իր տեսակետը:

Հոգեասթենիայի սանդղակով (Pt) ստացված բարձր արդյունքները կարող են խոսել տազնապային ռեակցիաների առաջացման կոնստիտուցիոնալ նախատրամադրվածության մասին, ընդ որում՝ այս տազնապի հաղթահարմանը անհատը հասնում է սահմանափակված վարքի ձևավորման միջոցով: Նման հետազոտվողներին կարող են բնորոշ լինել զգայունակությունը, վախը, տազնապը, անհիմն մտավախությունները, ցածր ինքնագնահատականը, կպչունությունը: Նրանք սովորաբար ունեն տազնապային-կասկածամիտ անձնային տեսակ, ֆրուստրացիայի ցածր շեմ, լարվածություն և ուժեղ ինքնաքննադատություն:

Սանդղակով ստացված ցածր արդյունքները խոսում են վճառականության, վարքի ճկունության, տազնապայնության ցածր մակարդակի, որոշումների կայացման ընթացքում վստահության մասին:

Շիզոֆրոզայան սանդղակով (Sc) բարձր միավորներ ունեցող հետազոտվողների մոտ անգամ չնչին ֆրուստրացիաները հանգեցնում են կայուն և երկարատև բացասական հույզերի առաջացման, իսկ փոխհատուցումը կատարվում է արտաքին միջավայրից դեպի ներքին աշխարհի անցմամբ: Նրանց բնորոշ են հուզական սառնությունը, ընկալման և եզրահանգումների յուրօրինակությունը, շփումների ընտրողականությունը

կամ մակերեսայնությունը: Կարող են նկատվել կողմնորոշում դեպի ներքին չափանիշները, շրջապատողների ինտուիտիվ հասկացման ընդունակության կորուստ և ադեկվատ հուզական հակազդման խախտումներ:

Ցածր ցուցանիշները խոսում են հակառակի մասին, այսինքն՝ բնավորության շիզոիդ գծերի բացակայություն՝ հուզական սառնություն և օտարվածություն:

Հիպոմանիայի սանդղակով (Ma) ստացված բարձր միավորներով հետազոտվողներին բնորոշ է բարձր տրամադրությունը՝ անկախ հանգամանքներից: Նրանք ակտիվ են, գործունյա, էներգիայով լի և կենսախինդ, բնորոշվում են գաղափարների և պլանների հեշտ առաջացմամբ, որոնք, սակայն, չեն իրականացվում կենտրոնացվածության բացակայության, սեփական հնարավորությունների գերազնահատման, հետաքրքրությունների բազմազանության և շփումների մակերեսայնության պատճառով: Կլինիկական դեպքերում առկա են վարքի ապահարմարում, հուզական գրգռում, նեղացկոտություն և ոչ բավարար զսպվածություն:

Սանդղակով ստացված ցածր արդյունքների դեպքում առկա է ակտիվության և շփումների նվազում [3]:

Սույն աշխատանքի շրջանակներում իրականացված հոգեբանական հետազոտությունը կարելի է տեսականորեն բաժանել երեք հիմնական մասերի՝ նախապատրաստական, բուն գործընթացային և արդյունքների վերլուծության:

Նախապատրաստական հատվածի էական բաղադրիչներն արդեն իսկ քննարկվել են նախորդ ենթագլուխներում. խոսքը գնում է հետազոտական ընտրանքի ձևավորման չափանիշների, ինչպես նաև՝ մեթոդիկաների ընտրության և դրանց հիմնավորման մասին:

Ընտրանքի ձևավորման չափանիշներին համապատասխանող հետազոտական խմբի ձևավորումը կապված էր մի շարք դժվարությունների հետ: Հաշվի առնելով հետազոտվողների կարգավիճակը, նրանց ֆիզիկական և հոգեբանական վիճակը, ինչպես նաև կոնֆիդենցիալությունը, որի ապահովումը այս հետազոտության էթիկայի հիմնաքարերից է՝ ավելի իրատեսական էր թվում ՀՀ-ում գտնվող մեկ կամ մի քանի բուժհաստատություններում վերականգնողական բուժում ստացող կամ ստացած անձանցից կազմված խմբի ձևավորումը, ինչը կմեծացներ նաև ՀՏԽ ախտանիշների

բարձր մակարդակ ունեցող անձանց համամասնությունը խմբում, քանի որ ֆիզիկական և հոգեբանական տրավմաների ուղիղ կորեկցիան բազմիցս ապացուցված է և անգամ ակնհայտ:

Բազմաթիվ բանակցություններից, բյուրոկրատական, և ոչ միայն, խոչընդոտների հաղթահարումից հետո հնարավորություն ստեղծվեց հետազոտությունն անցկացնել ՀՀ-ում գործող զինծառայողների վերականգնողական բուժում իրականացնող հաստատություններից մեկում, որի անունը, կոնֆիդենցիալությունից ելնելով, աշխատանքում չի հրապարակվի: Այդպիսով՝ ստեղծվեց նախնական 61 հետազոտվողից կազմված փորձարարական խումբ, որի բոլոր անդամները առաջնային հարցմամբ համապատասխանում էին ներառման չափանիշներին:

Հետազոտական ստուգիչ խմբի ձևավորման ընթացքում բազմազանության և այլ փոփոխականների ազդեցությունների նվազեցման նպատակով (դրանց ռենդոմիզացիայի միջոցով) օգտագործվել է առցանց հարցումը, որի տարածումը սոցցանցերում չի վերահսկվել որևէ միջոցով, և խումբը ձևավորվել է այն անձանցից, ովքեր համաձայնել են անցնել հարցումը, համապատասխանել են ներառման չափանիշներին և պատասխանել են նախատեսված բոլոր հարցերին:

Հետազոտության անցկացման համար ստեղծվել է հատուկ ձևաթուղթ, որում ներառվել են հետազոտության մասին համապարփակ տեղեկատվությունը և համաձայնության մասին կետերը, հետազոտական հրահանգները և բոլոր մեթոդիկաները: Առցանց հարցման համար ստեղծվել է նույն ձևաթղթի թվային տարբերակը, որում առկա են մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են հետազոտության ընթացքը վերահսկող անձի բացակայությամբ: Առցանց ձևաթղթում ստեղծվել են հատուկ անցումներ, որոնք պարունակում են ներառման չափանիշները, և միայն դրանց համապատասխանելու դեպքում հետազոտվողները կարող էին անցնել ձևաթղթի հաջորդ հատվածներին (Հավելված):

Հետազոտությունը անց է կացվել յուրաքանչյուր հետազոտվողի հետ անհատապես: Բուժհաստատությունում անցկացումը կատարվել է նաև բուժսպասարկող անձնակազմի մի քանի անդամների օգնությամբ, որոնց նախապես ներկայացվել են հետազոտության անցկացման բոլոր կանոնները:

Հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդիկաներից «Մինի մուլտի» մեջ ներառված են նաև ստի և հավաստիության սանդղակներ, ինչը թույլ է տալիս բացահայտել ստացված արդյունքների շեղումները, որոնք պայմանավորված են սոցիալական ցանկալիության, հարցարանները լրացնելու ցածր մոտիվացիայի, ինչպես նաև՝ ազդող այլ արտաքին փոփոխականների հետ: Փորձարարական խմբի անդամների հետ հետազոտությունն անց է կացվել բուժման ընթացքում նրանց տրամադրված սենյակներում և բուժհաստատության հանգստի դահլիճներում, ինչը ապահովել է հնարավորինս չպարտադրող պայմաններ, սակայն անհնար է դարձրել այլ փոփոխականների ազդեցության բացառումը և «ստերիլության» ապահովումը: Գրեթե նույնը կարելի է ասել նաև ստուգիչ հետազոտական խմբի անդամների մասին: Հնարավոր արտաքին ազդեցությունները չափվել են վերոնշյալ ստի և հավաստիության սանդղակներով, և տվյալների վերլուծության ընթացքում այն հետազոտվողների արդյունքները, ում մոտ այս սանդղակներով ստացված արդյունքները եղել են թույլատրելի ստանդարտի սահմաններից դուրս, չեն հաշվարկվել և չեն ներառվել հիմնական վերլուծությունների մեջ:



#### ԳԼՈՒԽ 4. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

##### 4.1 Մեթոդիկաներով ստացված տվյալների նախնական վերլուծությունը, փոխակերպումը համեմատելի միավորների

Հետազոտական տվյալների հավաքագրումն իրականացվել է ստանդարտիզացված ձևաթղթով, որի թղթային տարբերակները նույնպես անց են կացվել առցանց ձևաթղթերի մեջ: Սա հնարավորություն է տվել ստանալ բոլոր տվյալները «exel» ֆորմատով, և սանդղակների հետագա հաշվարկները, ինչպես նաև կորեյացիոն համեմատություններն անցկացնել «Microsoft Exel» ծրագրով: Իհարկե, կան տվյալների վերլուծության ավելի մեծ գործիքակազմով և հնարավորություններով ծրագրեր, ինչպիսիք են, օրինակ, SPSS-ը (Statistical Package for the Social Sciences) կամ SAS-ը (Statistical Analysis System), սակայն դրանք մեծ մասամբ հիմնվում են Microsoft Exel-ի վրա, իսկ տվյալների մշակման և վերլուծության այն խնդիրների լուծման համար, որոնք դրվել են այս հետազոտության ընթացքում, «Microsoft Exel»-ի գործիքակազմը բավարարում է ամբողջապես:

Այսպիսով՝ տվյալները մշակվել են «Microsoft Exel» ծրագրով, իսկ մշակման ուղեցույց են հանդիսացել օգտագործված մեթոդիկաներում արդյունքների վերծանման և վերլուծման ընթացակարգերը: Այսպիսով՝ հետազոտական երկու խմբերի մոտ էլ հնարավոր ՀՏՄԽ բացահայտման PC-PTSD-5 մեթոդիկայի արդյունքները հաշվարկվել են նախատեսված հարցերին «այո» պատասխանների պարզ գումարմամբ, իսկ տրավմատիկ փորձի առկայությունը փաստող հարցին տրված բացասական պատասխանի դեպքում հետազոտվողներին տրվել է սանդղակի «0-ից 5» միջակայքից «0» միավոր:

Ժամանակային հեռանկարների չափմանն ուղղված ZTPI հարցարանով ստացված տվյալները մշակվել են ըստ 5 սանդղակների և մեկ հավելյալ՝ տրանսցենդենտալ ապագայի սանդղակի: Յուրաքանչյուր սանդղակին համապատասխանում են որոշակի հարցեր, որոնց տրվում են պատասխաններ ըստ Լայկերտի սանդղակի [80]: Որոշ հարցերի ուղիղ համեմատականությամբ տրվում են 1-5 միջակայքից միավորներ,

սակայն որոշ հարցերի տրվում են միավորներ՝ ըստ հակադարձության սկզբունքի, այսինքն՝ «միանշանակ ճիշտ է» պատասխանի համար՝ 1 միավոր, իսկ «միանշանակ սխալ է» պատասխանի համար՝ 5 միավոր:

Յուրաքանչյուր սանդղակի ստացված միավորները գումարվում են իրար և բաժանվում դրանց ընդհանուր քանակին. այդպիսով ստացվում է հետազոտվողի արդյունքը տվյալ սանդղակում: Յուրաքանչյուր սանդղակի համար հաշվվում է նաև ստանդարտ շեղումը, որի ցածր արդյունքները խոսում են տվյալների առավել մեծ հավաստիության մասին:

«Մինի մուլտ» հարցարանում, ինչպես արդեն նշվել է, առկա են 3 գնահատող և 8 հիմնական սանդղակներ: Այս հարցարանում առկա պնդումներին պատասխանները տրվում են «ճիշտ է» և «սխալ է» տարբերակներով՝ կախված նրանից, թե տվյալ պնդումը բնորոշ և համապատասխան է որոշակի հետազոտվողին, թե՛ ոչ: Այս դեպքում էլ յուրաքանչյուր սանդղակ պայմանավորվում է որոշակի պնդումների համախմբով, որոնց մի մասին ուղիղ կերպով «ճիշտ է» պատասխանին տրվում է 1 միավոր, իսկ՝ «սխալ է» պատասխանին՝ 0 միավոր, իսկ որոշների դեպքում հակադարձությամբ «սխալ է» պատասխանին տրվում է 1 միավոր, իսկ «ճիշտ է» պատասխանին՝ 0 միավոր:

Գնահատող 3 սանդղակների՝ «ստի» (L), «հավաստիության» (F) և «շտկման» (K) դեպքերում հաշվարկվում են «հում» միավորները և վերածվում «T միավորի», որը համաչափ է դարձնում մեթոդիկայի բոլոր սանդղակներով ստացված տվյալները: T միավորների հաշվարկը արվում է հետևյալ բանաձևով՝

$$T = \frac{50 + 10X - M}{\delta}$$

Որտեղ X-ը «հում» միավորն է, իսկ M-ի և δ-ի նշանակությունները վերցված են ստորև բերված աղյուսակից (Աղյուսակ 1):

Մյուս 8 սանդղակներից դեպրեսիայի (D), հիստերիայի (Hy), պարանոյալության (Pa) համար «հում» միավորները և T միավորները հաշվարկվում են նույն կերպ, ինչպես գնահատող սանդղակների դեպքում, սակայն մնացած 5 սանդղակների՝ հիպոխոնդրիայի (Hs), հոգեպաթիայի (Pd), հոգեաթենիայի (Pt), շիզոֆրիայի (Sc) և

հիպոմանիայի (Ma) դեպքում «հում» միավորները հաշվվում են նույն կերպ, սակայն մինչև T միավորներ անցումը գումարվում է շտկման միավորը հետևյալ բանաձևերով՝

- Սանդղակ  $H_s = H_s + (0.5 * K)$
- Սանդղակ  $P_d = P_d + (0.4 * K)$
- Սանդղակ  $P_t = P_t + K$
- Սանդղակ  $S_c = S_c + K$
- Սանդղակ  $M_a = M_a + (0.2 * K)$

Որտեղ K-ն շտկման «հում» միավորն է, իսկ  $H_s$ -ն,  $P_d$ -ն,  $P_t$ -ն,  $S_c$ -ն և  $M_a$ -ն՝ տվյալ սանդղակներով ստացված «հում» միավորները որևէ հետազոտվողի մոտ:

Աղյուսակ 1. M-ի և  $\delta$ -ի նշանակությունները

Սեռ	Արական		Իգական	
	M	$\delta$	M	$\delta$
Վիճակագրական նշանակություն				
L	40,5	15,85	39,3	14,89
F	1,48	1,23	1,51	1,19
K	3,1	2,3	2,64	1,71
$H_s$	7,68	3,42	7,72	2,64
D	7,24	3	8,47	2,92
$H_y$	7,02	2,68	7,96	3
$P_d$	9,73	2,91	11,53	3,38
$P_a$	10,39	2,13	9,76	1,9
$P_t$	4,03	1,74	4,77	2
$S_c$	13,57	2,51	14,48	2,27
$M_a$	13,68	2,83	13,52	2,8

Վերոնշյալ սանդղակներով «հում» միավորներին շտկման միավորների գումարումից հետո կատարվում է դրանց անցում T միավորների՝ նույն բանաձևով, որը կիրառվում է մնացած սանդղակների համար: Հարկ է նշել, որ շտկման միավորների ավելացման դեպքում բանաձևից զատ ստանդարտ հաշվարկներում կատարվում են թվերի մոտարկումներ, որոնց դեպքում վերջնական գումարվող «շտկող» միավորները պետք է ունենան այն նշանակությունները, որոնք բերված են այստեղ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. «Շտկող» միավորների նշանակությունները

K	0,5K	0,4K	0,2K
16	8	6	3
15	8	6	3
14	7	6	3
13	7	5	3
12	6	5	2
11	6	4	2
10	5	4	2
9	5	4	2
8	4	3	2
7	4	3	1
6	3	2	1
5	3	2	1
4	2	2	1
3	2	2	1
2	1	1	0
1	1	1	0

«Մինի մուլտ» մեթոդիկայի բոլոր սանդղակների համար տվյալների վերջնական վերամշակումը հանդիսանում է դրանք T միավորների բերելը, ինչն արդեն թույլ է տալիս անցկացնել համեմատականներ և կորեյացիաներ ստացված այլ տվյալների հետ [3]:

#### 4.2 Ստացված արդյունքների վիճակագրական համեմատությունը և կորեյացիաների անցկացումը

Հետազոտության նախագիծը ի սկզբանե ենթադրում էր երկու մեծ հետազոտական խմբերի առկայություն, որոնցից մեկը փորձարարական խումբն է, որտեղ ներառված են մարտական գործողությունների մասնակցություն ունեցած անձինք, իսկ մյուս խմբում ներառված են նույն տարիքային միջակայքի և սեռի՝ երբևէ մարտական որևէ գործողության չմասնակցած անձինք, ինչն էլ իրենից ներկայացնում է ստուգիչ խումբը: Հետազոտական մեթոդների ընտրությունը, սակայն, թույլ է տալիս այս մեծ խմբերը բաժանել ենթախմբերի՝ ըստ ՀՏՄԽ ախտանիշները չափող մեթոդիկայով ստացված արդյունքների, ինչն իր հերթին հնարավորություն է ստեղծում հասկանալու հետազոտվող հոգեբանական երևույթների էական տարբերությունները և նմանությունները մարտական գործողությունների մասնակից ՀՏՄԽ մասին փաստող ախտանիշների բարձր մակարդակ ունեցող և ցածր մակարդակ ունեցող անձանց միջև: Այդպիսով՝ տեղեկատվություն է ստացվում ոչ միայն առկա կորեյացիաների մասին, այլ նաև հակադարձ համեմատականության սկզբունքով ստուգվում է ՀՏՄԽ չափանիշով խմբերի բաժանման ճշգրտությունը:

Ստացված արդյունքները համեմատվել են երկու մեծ խմբերի (փորձարարական և ստուգիչ), ինչպես նաև փորձարարական խմբի երկու ենթախմբերի միջև:

Հետազոտական տվյալներից հեռացվել են հավաստիության սանդղակներով նվազագույն պայմաններին չհամապատասխանող հետազոտվողների արդյունքները: Այդպիսիք ընդամենը թվով 3-ն էին, և բոլորն էլ՝ ստուգիչ խմբից:

Ըստ սանդղակների՝ համեմատվել են տարբեր խմբերում ստացված միջին արդյունքները, իսկ համեմատության հավաստիության համար յուրաքանչյուր համեմատության դեպքում հաշվարկվել է նաև «Սթյուդենտի t գործակիցը», և

վերջնական եզրակացություններում հաշվի են առնվել միայն  $t < 0.05$  գործակցով համեմատությունները:

Խմբերի ներսում անց են կացվել կորելյացիաներ ZTPI և «Մինի մուլտ» հարցարանների սանդղակների միջև: Կիրառվել է «Սպիրմենի ռանգային կորելյացիայի գործակիցը», որը լավագույնս է համապատասխանում տվյալների նման համակազմի համեմատությանը: Համեմատվող արդյունքները ստացվել են չափման «անընդհատ» սանդղակով, ինչպես նաև՝ դրանք «ոչ պարամետրիկ» են, այսինքն՝ չեն հիմնվում արդեն իսկ առկա վիճակագրական տվյալների վրա, այլ չափում են գլխավոր միտումները միջին նշանակությունների նկատմամբ: Նման վիճակագրական տվյալներ վերոնշյալ մեթոդիկաների համար առկա են, սակայն դրանք հաշվարկվել են այս աշխատանքում ներառված ընտրանքից էականորեն տարբերվող մշակութային, ժամանակագրական և սոցիալական պայմաններին համապատասխան և, բնականաբար, կիրառելի չեն այս հետազոտության համար:


Մինչ բուն համեմատություններին և կորելյացիաներին անցնելը հարկ է նշել, որ աղյուսակներում և գծապատկերներում տեղեկատվության ներկայացման հակիրճության նպատակով հետազոտական խմբերը և ենթախմբերը գրառվել են հետևյալ կերպ. փորձարարական խումբը, որը կազմված է մարտական գործողություններին մասնակցածներից, նշվել է՝ որպես Խումբ 1, իսկ ստուգիչ խումբը, որը կազմված է մարտական գործողությունների չմասնակցած անձանցից, գրառվել է՝ որպես Խումբ 2: Փորձարարական խմբի մեջ առանձնացվել են երկու ենթախմբեր. ՀՏՄԽ ախտանիշների ցածր մակարդակով մասնակիցների խումբը գրառվել է՝ որպես Ենթախումբ 1 (38 հետազոտվող), իսկ ՀՏՄԽ ախտանիշների բարձր մակարդակով խումբը նշվել է՝ որպես Ենթախումբ 2 (23 հետազոտվող): Տեքստի մեջ կիրառված են և ամբողջական, և հակիրճ անվանումները, ու դրանք կրում են միևնույն նշանակությունը:

Հետազոտական վարկածը ենթադրում է ԺՀ-ների արտահայտվածությունների տարբերություններ՝ կապված մարտական գործողության մասնակից լինելու կամ չլինելու փաստի հետ, այդ իսկ պատճառով համեմատվել են խմբային միջինները փորձարարական և ստուգիչ խմբերի համար: Ապագայի և տրանսցենդենտալ ապագայի սանդղակների համեմատությունները, որոնց դեպքում Սթյուդենտի  $t$  գործակիցը եղել է

ավելին, քան 0.05-ն է, այսինքն՝ արդյունքների տարբերության չափման սխալը եղել է մեծ, չեն ներառվել խմբերի այս համեմատության մեջ:

Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալներից կարելի է տեսնել, որ Խումբ 1-ի մոտ նեգատիվ անցյալի (ՆԱ) սանդղակով ստացված միջին արդյունքը բարձր է 0.34 միավորով Խումբ 2-ի միջին արդյունքից, այն պարագայում, երբ հնարավոր միավորները կարող են տատանվել 1-5 միավորի միջակայքում: Նմանատիպ է պատկերը նաև հեղոնիստական ներկայի (<Ն) և պոզիտիվ անցյալի (ՊԱ) սանդղակների դեպքում. Խումբ-2-ի միջին արդյունքը ավելին է Խումբ 2-ի միջին արդյունքից 0.33 միավորով առաջին դեպքում, և ավելին է 0.45 միավորով երկրորդ դեպքում: Եթե առաջին երկու դեպքերում վարկածով ենթադրված տարբերությունները հաստատվում են, ապա պոզիտիվ անցյալի դեպքում արդյունքը հակառակն է:

Գծապատկեր 2.



Առավել զգալի տարբերությունը նկատվում է ֆատալիստական ներկայի (ՖՆ) ժամանակային հեռանկարի դեպքում. Խումբ 1-ի միջինը ավելին է Խումբ 2-ի միջինից 0.88 միավորով: Վարկածը իր առավելագույն հաստատումը մինչ վերլուծության տվյալ դրվագը գտնում է հենց այս սանդղակում: Ի հակառակ սրան՝ որևէ օրինաչափ

տարբերությունն ապագայի (Ա) և տրանսցենդենտալ ապագայի (SU) սանդղակներում հետազոտությունը չի բացահայտում, թեև ենթադրվում էր, որ փորձարարական խմբի մոտ ապագայի սանդղակի արդյունքները պետք է լինեին ավելի ցածր, քան ստուգիչ խմբի մոտ: Տրանսցենդենտալ ապագայի սանդղակի վերաբերյալ վարկածի կետ առկա չէ, քանի որ, ինչպես արդեն նշվել է մեթոդիկայի նկարագրողական հատվածում, այն հավելյալ սանդղակ է, որը տալիս է մեզ հավելյալ ոչ քանակական տեղեկատվություն, այսինքն՝ ցածր և բարձր արդյունքները վկայում են միայն հետազոտվողների վերաբերմունքի բովանդակային կողմի մասին:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ մարտական գործողությունների մասնակից անձանց մոտ տրավմատիկ իրադարձությունների ազդեցությամբ ավելի արտահայտված են դառնում «բացասական» ժամանակային հեռանկարները, որոնք հանգեցնում են վարքային ոչ կառուցողական արձագանքների և ավելի բարդ են դարձնում սոցիալական վերահարմարման գործընթացը: «Բացասական» ԺՀ-երի միասին ավելի արտահայտված է դառնում պոզիտիվ անցյալի ԺՀ-ը, ինչը այն քիչ ռեսուրսներից է, որը կարող է նպաստել պատերազմի վետերանների հարմարման և հոգեբանական ապաքինման գործընթացին: Անցյալի նկատմամբ դրական վերաբերմունքը ունի մեծ պոտենցիալ այդ նույն անցյալում տեղի ունեցած բացասական իրադարձությունների հետևանքների չեզոքացման գործընթացում:

Մարտական գործողությունների մասնակից լինելու փաստը՝ որպես փոփոխական, իհարկե, իր «նկատառումներն» է մտցնում այս աշխատանքի շրջանակներում հետազոտվող հոգեկան երևույթների մեջ, սակայն ավելի զգալի փոփոխական է այդ նույն մարտական գործողությունների արդյունքում առաջացած ՀSUԽ-ը, ինչը էականորեն փոփոխում է տվյալ անհատի հոգեկան աշխարհը և կյանքը՝ դասակարգելով այն «նախկինում և հիմա»-ի, որտեղ ջրբաժանը տրավմատիկ իրադարձությունն է:


Այս փոփոխականի հնարավոր ազդեցության առավել ճշգրիտ դիտարկման համար հարկ է համեմատել մարտական գործողությունների մասնակից ՀSUԽ ախտանիշներով անձանց և մարտական գործողությունների մասնակից հանդիսացող



ՀՏՄԽ ախտանիշներ չունեցող անձանց արդյունքները՝ կապված ժամանակային հեռանկարի հետ:

Գծապատկեր 3-ում կարելի է տեսնել, որ նեգատիվ անցյալի (ՆԱ) ժամանակային հեռանկարի սանդղակով Ենթախումբ 2-ի (ՀՏՄԽ ախտանիշներ ունեցողներ) միջին արդյունքը 0.84 միավորով ավելին է, քան Ենթախումբ 1-ի (ՀՏՄԽ ախտանիշներ չունեցողներ) միջին արդյունքը: Գրեթե նման տարբերություն է ստացվել նաև հեղոնիստական ներկայի (ՀՆ) դեպքում, որտեղ Ենթախումբ 2-ի միջին արդյունքը 0.58-ով ավելին է, քան Ենթախումբ 1-ի միջին արդյունքը: Առավել զգալի տարբերություն գրանցվել է, ինչպես նախորդ դեպքում, ֆատալիստական ներկայի (ՖՆ) սանդղակում, որտեղ Ենթախումբ 2-ի միջին արդյունքը 1.04-ով ավելին է, քան Ենթախումբ 1-ի միջին արդյունքը: Ժամանակային հեռանկարների համեմատության այս դեպքում չի գրանցվել հավաստի տարբերություն պոզիտիվ անցյալի (ՊԱ) ԺՀ-ում:

Գծապատկեր 3.



Տրանսցենդենտալ ապագայի (SU) սանդղակով ստացված արդյունքները այս պարագայում ցույց են տալիս առկա տարբերություն, քանի որ Ենթախումբ 2-ի միջին արդյունքը 0.46-ով ավելին է, քան Ենթախումբ 1-ի միջին արդյունքը:

Ապագայի (Ա) սանդղակով ստացված արդյունքների համեմատությամբ կրկին որևէ հավաստի տարբերություն չի դիտարկվում:

Ելնելով ԺՀ ZTPI հարցարանի արդյունքներից՝ կարելի է ասել, որ մարտական գործողությունների մասնակից ՀՏԽ ախտանիշներով անձանցից և մարտական գործողությունների մասնակից հանդիսացող ՀՏԽ ախտանիշներ չունեցող անձանցից կազմված հետազոտական ենթախմբերում առկա են ավելի մեծ տարբերություններ՝ կապված նախնական վարկածում արված ենթադրությունների հետ, այն է՝ տրավմա ունեցող անձանց մոտ նեգատիվ անցյալի, հեղոնիստական և ֆատալիստական ներկաների ավելի բարձր մակարդակներ, քան տրավմա չունեցող անձանց մոտ: Սույն սանդղակներով ավելի նվազ տարբերություններ են առկա մարտական գործողությունների մասնակցած և չմասնակցած հետազոտական խմբերի արդյունքների միջև: Ապագայի սանդղակի հետ կապված վարկածը հաստատում չի գտնում, քանի որ հավաստի տարբերություններ չեն հայտնաբերվել:


Հետազոտական ենթախմբերում իրականացված այս համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՏԽ ախտանիշների անգամ ցածր մակարդակի դեպքում մարտական գործողությունների մասնակցությունը ազդում է ԺՀ-ների վրա, սակայն արտահայտված են միայն հեղոնիստական ներկայի և տրանսցենդենտալ ապագայի ԺՀ-ները, իսկ նեգատիվ և պոզիտիվ անցյալի ԺՀ-երը մոտ են ստուգիչ խմբի արդյունքներին: Սա ցույց է տալիս, որ ՀՏԽ-ը կարող է խեղել անցյալի մասին վերաբերմունքը և պատկերացումները, սակայն մարտական գործողությունների ՀՏԽ ախտանիշների ցածր մակարդակով մասնակիցները նույնպես հակված են վարքի ապակառուցողական դրսևորումների:

«Մինի մուլտ» հարցարանով ստացված անձնային գծերի սանդղակները դիտարկվել են նույն սկզբունքով, ինչպես ZTPI հարցարանի դեպքում: Այստեղ նույնպես առկա են փորձարարական և ստուգիչ խմբերը, ինչպես նաև՝ ՀՏԽ ախտանիշների առկայությամբ կամ բացակայությամբ պայամանավորված փորձարարական խմբում առանձնացված երկու ենթախմբերը:

Գծապատկեր 4-ում կարելի է տեսնել «Մինի մուլտ» հարցարանի Խումբ 2-ի և Խումբ 1-ի համեմատական արդյունքները: Հավաստիության Սթյուդենտի բարձր t

ցուցանիշով տարբերություններ առկա են միայն երկու սանդղակներում, որոնցից մեկը գնահատողական, և միայն մյուսն է հիմնական:

Գծապատկեր 4.



Գնահատողական սանդղակը, որը էականորեն տարբերվում է մարտական գործողությունների մասնակցած և չմասնակցած հետազոտվողներից կազմված խմբերում, բուն հավաստիության (F) սանդղակն է: Նրանով ստացված միջին արդյունքը 7.45 T միավորով ավելի բարձր է Խումբ 1-ի մոտ՝ ի համեմատ Խումբ 2-ի (T միավորները ենթադրում են 0-100 միջակայքում ընկած արժեքներ): Խումբ 1-ի միջին արդյունքը, սակայն, չի գտնվում նորմայի սահմաններից դուրս (նորմա՝ 40-ից մինչև 70 միավոր), և բարձր արդյունքները կարող են խոսել հետազոտվողների լարվածության, տագնապայնության ավելի բարձր մակարդակի, ինչպես նաև ուշադրության կենտրոնացման դժվարությունների մասին:

Հիմնական սանդղակներից էական տարբերություն է նկատվում պարանոյալության սանդղակով ստացված (Pa) արդյունքներում: Այստեղ գրանցված միջին արդյունքների համադրումը ցույց է տալիս, որ Խումբ 1-ի մոտ, ի համեմատ Խումբ


2-ի, միջինը բարձր է 6.56 միավորով, և այն բավական մոտ է գտնվում նորմայի առավելագույն ցուցանիշի շեմին, որն է՝ 70 T միավոր: Հետազոտական վարկածը այս ցուցանիշով իր հաստատումն է գտնում, քանի որ տազնապայնության բարձրացումը, որը բխում է սանդղակի բարձր արդյունքներից, հանդիսանում է վարկածում առկա ենթադրություններից մեկը, սակայն այն փաստը, որ միայն սանդղակներից մեկում է առկա էական տարբերություն, կասկածի տակ է դնում մարտական գործողություններին մասնակցելու փաստը՝ որպես փոփոխական այս պարագայում: Սրանից բխում է, որ մարտական գործողությունների մասնակցությունը չի առաջացնում անձնային գծերի էական փոփոխություններ:

Ինչպես և նախորդ հարցարանի դեպքում, առաջանում է անհրաժեշտություն՝ համեմատելու «Մինի մուլտ»-ի սանդղակները՝ ըստ ՀՏՄԽ ախտանիշների առկայության:

Գծապատկեր 5-ում կարելի է տեսնել, որ, ինչպես և նախորդ դեպքում, հավաստիության (F) սանդղակով Ենթախումբ 2-ի (ՀՏՄԽ ախտանիշներ ունեցողներ) միջին արդյունքը 9.31 T միավորով ավելին է, քան Ենթախումբ 1-ի (ՀՏՄԽ ախտանիշներ չունեցողներ) միջին արդյունքը: Այնուամենայնիվ, այս դեպքում էլ միջին արդյունքը ավելին չէ, քան նորման, և Ենթախումբ 2-ում ստացված տվյալները կարելի է համարել հավաստի: Ինչպես արդեն իսկ նշվել է, բարձր արդյունքները կարող են խոսել հետազոտվողների լարվածության, տազնապայնության ավելի բարձր մակարդակի, ուշադրության կենտրոնացման դժվարությունների մասին, և ավելի մեծ տարբերությունը կարող է փաստել ՀՏՄԽ ախտանիշների և վերոնշյալ երևույթների կապը:

Առկա են նաև տարբերություններ դեպրեսիայի (D), շիզոֆրոզիայի (Sc) և հիպոմանիայի (Ma) սանդղակներում. Ենթախումբ 2-ի արդյունքները ավելի են Ենթախումբ 1-ի արդյունքներից 6.54, 8.99 և 8.39 T միավորներով համապատասխանաբար: Հատկանշական է հիպոմանիայի և դեպրեսիայի սանդղակներով համաժամանակյա բարձր արդյունքների առկայությունը, քանի որ տեսականորեն այս երկու երևույթները ինչ-որ չափով հակառակ են միմյանց: Սա կարող է խոսել այն մասին, որ ՀՏՄԽ ախտանիշներով հետազոտվողների մոտ առկա է ոչ կայուն հուզական ֆոն, և շտապողական, ակտիվ գործողությունները արագորեն կարող են փոխարինվել ապատիայով, տրամադրության անկումով և մոտիվացիայի նվազմամբ:

## Գծապատկեր 5.



Զգալիորեն մեծ է պարանոյալուծայան (Pa) սանդղակում առկա տարբերությունը, ինչը համանման է փորձարարական և ստուգիչ խմբերում ստացված արդյունքներին, սակայն այս դեպքում տարբերությունն ավելի զգալի է. Ենթախումբ 2-ի միջին արդյունքը ավելի է Ենթախումբ 1-ի միջին արդյունքից 12.87 T միավորով: Բացի դրանից՝ միջին արդյունքը 2.07 T միավորով ավելին է նորմայի առավելագույն սահմանից: Սա կարևոր և մտահոգիչ ցուցանիշ է, որը ցույց է տալիս ՀՏՄԽ ախտանիշների դեպքում տազնապայնության, լարվածության և մշտական ֆրուստրացիայի առկայությունը:

Արդյունքները ցույց են տալիս, որ ՀՏՄԽ ախտանիշների բարձր մակարդակով հետազոտվողները գտնվում են աֆֆեկտիվ խանգարումների ռիսկի ներքո, քանի որ տրավմատիկ իրադարձության հետ կապված ապրումները հանգեցնում են ապատիկ ռեակցիաների կամ բարձրացնում են աժիտացիայի մակարդակը, ինչը գերփոխհատուցման դրսևորումներից է:

Հատկանշական է, որ և առաջին դեպքում, և սույն համեմատության ընթացքում չեն հայտնաբերվել տարբերություններ հիպոխոնդրիայի (Hs), հիստերիայի (Hy), հոգեպաթիայի (Pd) և հոգեաթենիայի (Pt) սանդղակների միջև: Առավել ճշգրիտ կլինի նշել, որ դրանք եղել են, սակայն մեծ են եղել ստանդարտ շեղումների ցուցանիշները,

որից էլ հավաստիության Սթյուդենտի t գործակիցը եղել է նույնպես մեծ, իսկ հավաստիությունը՝ հակառակ համեմատականորեն փոքր: Սա թույլ է տալիս ենթադրել ապագայում առավել մեծ ընտրանքով հետազոտությունների անցկացման և բազմազանության նպատակով նաև այլ մշակութային համատեքստից ընտրանքի ձևավորման անհրաժեշտությունը:

Հատկանշական է նաև, որ բոլոր դեպքերում, երբ եղել է հավաստիության բարձր տոկոս, ՀՏՄԽ ախտանիշների առկայությամբ խմբի արդյունքները եղել են բարձր՝ ի համեմատ ՀՏՄԽ ախտանիշներ չունեցողների: Ընդ որում՝ խոսքը գնում է առողջության պրիզմայով «բացասական» սանդղակների մասին, որտեղ ավելի ցածր արդյունքներն են ցույց տալիս նորման:

Բացի խմբային համեմատություններից՝ հետազոտությունը ենթադրում է նաև վիճակագրական կապերի բացահայտում, որոնք առկա են ժամանակային հեռանկարների և անձնային գծերի միջև: Այդ նպատակով յուրաքանչյուր խմբի համար հաշվարկվել են կորելյացիաներ՝ ըստ «Սպիրմենի ռանգային գործակցի»:

Կորելյացիոն գործակիցները թվայինից որակական նշանակությունների փոխակերպման համար օգտագործվել է «Չեդդոկի սանդղակը» (Աղյուսակ 3) [97]:

Աղյուսակ 3. «Չեդդոկի սանդղակ»


Կորելյացիայի քանակական չափում	Կորելյացիայի որակական չափում
0-0.1	կապ առկա չէ
0.1-0.3	թույլ
0.3-0.5	բավարար
0.5-0.7	տեսանելի
0.7-0.9	բարձր
0.9-0.99	բավականին բարձր

Գծապատկեր 6-ում ներկայացված են հետազոտվող հոգեբանական երևույթների վիճակագրական կապերը Խումբ 1-ի համար, որտեղ, ինչպես արդեն նշվել է, ներառված են մարտական գործողությունների մասնակցած անձինք: Գործակիցը կարող է

տատանվել  $-1$  ից  $+1$  միջակայքում, և որքան մոտ է այն բևեռներից մեկին, ապա այնքան ուժեղ է վիճակագրական կապը, իսկ «+» կամ «-» նշանները արտահայտում են ուղիղ և հակադարձ կապերը համապատասխանաբար:

Ինչպես երևում է գծապատկերից, նեգատիվ անցյալի (ՆԱ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում հիպոխոնդրիայի (Hs)՝  $r=0.329$ , դեպրեսիայի (D)՝  $r=0.421$ , հոգեասթենիայի (Pt)՝  $r=0.385$ , շիզոիդության (Sc)՝  $r=0.425$ , և հիպոմանիայի (Ma)՝  $r=0.474$ , սանդղակների հետ: Առկա է նաև տեսանելի ուղիղ կորելյացիա պարանոյալության (Pa) սանդղակի հետ՝  $r=0.551$ :

### Գծապատկեր 6.



Ֆատալիստական ներկայի (ՖՆ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում շիզոիդության (Sc)՝  $r=0.392$ , և հիպոմանիայի (Ma)՝  $r=0.346$ , սանդղակների հետ: Այս ժՀ-ը նույնպես ունի տեսանելի ուղիղ կորելյացիա պարանոյալության (Pa) սանդղակի հետ՝  $r=0.597$ , որն ավելի արտահայտված է, քան անգամ նեգատիվ անցյալի դեպքում:

Հեդոնիստական ներկայի (ՀՆ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում պարանոյալության (Pa)՝  $r=0.422$ , և հիպոմանիայի

(Ma)՝  $r=0.318$ , սանդղակների հետ: Խումբ 1-ում տրանսցենդենտալ ապագայի (SU) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում պարանոյալության (Pa) սանդղակի հետ՝  $r=0.378$ :

Որևէ սանդղակով կորելյացիոն գործակցի բավարար որակական չափանիշին համապատասխան հակադարձ համեմատական արդյունք Խումբ 1-ի դեպքում չի արձանագրվել:

Հարկ է նշել, որ գծապատկերներում առկա արդյունքների ներկայացումը առավել հակիրճ դարձնելու համար տեքստային ձևով ներկայացվել են միայն բավարար և ավելի բարձր կորելյացիոն կապերով դեպքերը, սակայն գծապատկերներում առկա սյունակները ցույց են տալիս որոշակի և ընդհանուր միտումները յուրաքանչյուր չափվող երևույթի համար:


Հետաքրքրական է տրանսցենդենտալ ապագայի ԺՀ-ը, որը իրենից ներկայացնում է ZTPI հարցարանից առանձին սանդղակ և ներառվել էր հետազոտության մեջ՝ հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Այս սանդղակով որևէ էական կապ առկա չէ ստուգիչ խմբի դեպքում, սակայն առկա է բավարար ( $r=0.378$ ) ուղիղ կապ պարանոյալության սանդղակի հետ փորձարարական խմբում: Սա անսպասելի արդյունք է, քանի որ տրանսցենդենտալ ապագայի սանդղակը ընդհանուր առմամբ չափում է «մահից հետո կյանքի» նկատմամբ վերաբերմունքը, և ուղիղ կապը պարանոյալության սանդղակի հետ դժվար բացատրելի է ԺՀ ներկայիս գիտական պատկերացումների տեսանկյունից: Այս բացահայտումը հետաքրքրական է հետագա հետազոտությունների համար:

Գծապատկեր 7-ում կարելի է տեսնել Խումբ 2-ի ԺՀ-ների և «Մինի մոլտ» անձնային հարցարանում առկա անձնային գծերի սանդղակների միջև փոխկապակցվածությունները:

Ինչպես երևում է գծապատկերից, նեգատիվ անցյալի (LU) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում դեպրեսիայի (D)՝  $r=0.447$ , հիստերիայի (Hy)՝  $r=0.312$ , պարանոյալության (Pa)՝  $r=0.363$ , հոգեաթենիայի (Pt)՝  $r=0.497$  և շիզոիդության (Sc)՝  $r=0.405$ , սանդղակների հետ: Առկա է նաև թույլ կորելյացիա հոգեաթենիայի (Pd) սանդղակի հետ՝  $r=0.276$ :



Գծապատկեր 7.



Ֆատալիստական ներկայի (ՖՆ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում դեպրեսիայի (D)՝  $r=0.331$ , հիստերիայի (Hy)՝  $r=0.375$ , և հոգեասթենիայի (Pt)՝  $r=0.361$ , սանդղակների հետ:

Ապագայի (Ա) ժամանակային հեռանկարը բավարար հակադարձ կորելյացիայի մեջ է գտնվում հիստերիայի (Hy)՝  $r=-0.456$ , հոգեպաթիայի (Pd)՝  $r=-0.337$ , հոգեասթենիայի (Pt)՝  $r=-0.380$ , և շիզոիդության (Sc)՝  $r=-0.320$ , սանդղակների հետ:

Պոզիտիվ անցյալի (ՊԱ) ժամանակային հեռանկարը բավարար հակադարձ կորելյացիայի մեջ է գտնվում դեպրեսիայի (D)՝  $r=-0.314$ , և հոգեպաթիայի (Pd)՝  $r=-0.353$ , սանդղակների հետ: Այստեղ հետաքրքրական է դեպրեսիայի սանդղակի հետ կապը, քանի որ նեգատիվ անցյալի դեպքում առկա էր ուղիղ վիճակագրական կապ դեպրեսիայի հետ, իսկ այս դեպքում այն հակադարձ համեմատական է:

Հեղոնիստական ներկայի (ՀՆ) ժամանակային հեռանկարը բավարար հակադարձ կորելյացիայի մեջ է գտնվում հոգեպաթիայի (Pd)՝  $r=-0.341$ , սանդղակի հետ:

Դիտարկելով փորձարարական և ստուգիչ խմբերում առկա վիճակագրական կորելյացիաները՝ կարող ենք նկատել մի շարք օրինաչափություններ և տարբերություններ: Մասնավորապես՝ նեգատիվ անցյալի և ֆատալիստական ներկայի

Ժամանակային հեռանկարները երկու խմբերի դեպքում էլ ուղիղ կերպով կապված են անձնային գծերի սանդղակների արդյունքների հետ, այսինքն՝ որքան բարձր են այս ԺՀ-ները, այնքան ավելանում են անձնային գծերի արտահայտվածությունները հետազոտվողների մոտ: Ընդ որում՝ փորձարարական խմբում, ի համեմատ ստուգիչ խմբի, ավելի բարձր են վիճակագրական կապի գործակիցները, հատկապես պարանոյալության և հիպոմանիայի սանդղակներում, ինչը կարող է խոսել տագնապայնության և նյարդային լարվածության բարձր մակարդակների մասին: Ավելի թույլ է կապը փորձարարական խմբի մոտ հիստերիայի սանդղակի պարագայում:


Պոզիտիվ անցյալի ԺՀ-ը երկու խմբում էլ հակադարձ կապի մեջ է անձնային սանդղակների մեծ մասում, սակայն այն ավելի ուժեղ է ստուգիչ խմբի դեպքում:

Ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ մարտական գործողությունների մասնակիցների մոտ «բացասական» ԺՀ-ների արտահայտվածության բարձր մակարդակները կապված լինելով պարանոյալության և հիպոմանիայի սանդղակների բարձր արդյունքների հետ խախտում են անձի բնականոն վարքային մարտավարությունները, բերում են նրա հոգեկանը սթրեսին արձագանքման մշտական պատրաստակամության վիճակի, այն ինչ նման սթրեսային իրավիճակի կրկնման օբյեկտիվ հավանականությունը տվյալ պահին բացակայում է: Նրանց մոտ ապագայի նկատմամբ վերաբերմունքի փոփոխության արդյունքում նաև նվազում են անձնային գծերի կապերը տվյալ ԺՀ հետ և անձը կորցնում է «դրական» ԺՀ-ների հնարավոր ռեսուրսային և կարգավորող ազդեցության հնարավորությունը:

Գծապատկեր 8-ում ներկայացված են հետազոտվող հոգեկան երևույթների կորելյացիաները ենթախումբ 1-ի համար, որտեղ ընդգրկված են մարտական գործողությունների մասնակից, սակայն ՀՏՄԽ ախտանիշների ցածր մակարդակ ունեցող հետազոտվողները փորձարարական խմբից՝ Խումբ 1-ից:

Ինչպես երևում է գծապատկերից, նեգատիվ անցյալի (ՆԱ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում հիպոխոնդրիայի (Hs)՝  $r=0.310$ , դեպրեսիայի (D)՝  $r=0.353$ , հոգեասթենիայի (Pt)՝  $r=0.33,1$  և շիզոֆրոզիայի (Sc)՝  $r=0.358$ , սանդղակների հետ: Առկա է նաև տեսանելի ուղիղ կորելյացիա պարանոյալության (Pa) սանդղակի հետ՝  $r=0.505$ :

### Գծապատկեր 8.



Ֆատալիստական ներկայի (ՖՆ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում հիպոխոնդրիայի (Hs)՝  $r=0.368$ , դեպրեսիայի (D)՝  $r=0.347$ , և շիզոիդության (Sc)՝  $r=0.335$ , սանդղակների հետ: Այս  $\sigma<$ -ը նույնպես ունի տեսանելի ուղիղ կորելյացիա պարանոյալության (Pa) սանդղակի հետ՝  $r=0.516$ , որն ավելի արտահայտված է, քան նեգատիվ անցյալի դեպքում:


Պոզիտիվ անցյալի (ՊԱ) ժամանակային հեռանկարը բավարար հակադարձ կորելյացիայի մեջ է գտնվում հոգեպաթիայի (Pd)՝  $r=-0.339$ , և շիզոիդության (Sc)՝  $r=-0.336$ , սանդղակների հետ:

Ենթախումբ 1-ում նույնպես առկա է տրանսցենդենտալ ապագայի ուղիղ կորելյացիա պարանոյալության սանդղակի հետ, սակայն այն թույլ է արտահայտված՝  $r=0.267$ :

Գծապատկեր 9-ում ներկայացված են հետազոտվող հոգեբանական երևույթների վիճակագրական կապերը Ենթախումբ 2-ի համար, որտեղ ընդգրկված են Խումբ 1-ի ՀՏԱ ախտանիշների բարձր մակարդակով հետազոտվողները:

Ինչպես երևում է գծապատկերից, նեգատիվ անցյալի (ՆԱ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում շիզոիդության (Sc)՝  $r=0.391$ , և պարանոյալության (Pa)՝  $r=0.393$ , սանդղակների հետ: Առկա է նաև տեսանելի ուղիղ կորելյացիա հիպոմանիայի (Ma)՝  $r=0.529$ , սանդղակի հետ:

Գծապատկեր 9.



Ֆատալիստական ներկայի (ՖՆ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում շիզոիդության (Sc)՝  $r=0.419$ , և հիպոմանիայի (Ma)՝  $r=0.377$ , սանդղակների հետ: Այս  $\sigma<$ -ը ունի տեսանելի ուղիղ կորելյացիա պարանոյալության (Pa) սանդղակի հետ՝  $r=0.556$ :

Հեդոնիստական ներկայի (ՀՆ) ժամանակային հեռանկարը բավարար ուղիղ կորելյացիայի մեջ է գտնվում պարանոյալության (Pa)՝  $r=0.460$ , շիզոիդության (Sc)՝  $r=0.384$ , սանդղակների հետ: Հեդոնիստական ներկայի  $\sigma<$ -ը ունի տեսանելի ուղիղ կորելյացիա հիպոմանիայի (Ma) սանդղակի հետ՝  $r=0.555$ :

Առկա է նաև վիճակագրական ուղիղ կապ ապագայի ( $U$ )  $\sigma <$  և հիպոմանիայի ( $Ma$ )՝  $r=0.411$ , տրանսցենդենտալ ապագայի ( $SU$ ) ու պարանոյալության ( $Pa$ )՝  $r=0.318$ , սանդղակների միջև:

Հետաքրքրական է, որ Ենթախումբ 2-ում դիտարկվող երևույթներից և ոչ մեկում չի նկատվում հակադարձ կորելյացիոն կապ:

Ենթախումբ 1-ի և Ենթախումբ 2-ի կորելյացիոն կապերի համեմատությամբ կարելի է նկատել, որ առկա են էական տարբերություններ, սակայն կան նաև օրինաչափություններ, որոնք ինչ-որ չափով բնորոշ էին նաև Խումբ 2-ի և Խումբ 1-ի կորելյացիաների համեմատությանը:

Այսպես՝ Ենթախումբ 2-ում նեգատիվ անցյալի ուղիղ կորելյացիան գրեթե բոլոր սանդղակների դեպքում շարունակվում է մոտավորապես նույն արժեքներով, ինչպես այն առկա է Ենթախումբ 1-ում, սակայն այն զգալիորեն ավելին է հիպոմանիայի սանդղակի պարագայում: Առհասարակ, Ենթախումբ 2-ում հիպոմանիայի սանդղակի հետ կորելյացիաներում բոլոր  $\sigma <$ -ները ունեն դրական գործակիցներ. նվազագույնը առկա է տրանսցենդենտալ ապագայի դեպքում՝  $r=0.182$ , իսկ առավելագույն կորելյացիան հեդոնիստական ներկայի նկատմամբ է՝  $r=0.555$ : Հիպոմանիայի սանդղակով ստացված արդյունքների միջինը առհասարակ բարձր է Ենթախումբ 2-ի դեպքում և մոտ է նորմայի առավելագույն շեմին, սակայն նույն ենթախմբում պարանոյալության սանդղակով ստացված միջինը անգամ ավելին է, քան նորմայի առավելագույն արժեքը, բայց կորելյացիաները  $\sigma <$ -ների հետ ավելի փոքր են:

Հիպոմանիայի նման բարձր արժեքները կարող են վկայել հետազոտվողների ակտուալ ֆիզիական և հոգեկան վիճակի գերփոխհատուցման մասին, սակայն նման ակտիվությունը հաճախ կարող է լինել խաբուսիկ և արագորեն փոխարինվել դեպրեսիվ միտումներով: Նման անձանց հետ հոգեթերապևտիկ աշխատանքում կարևոր է հաշվի առնել այս առանձնահատկությունը:

Ֆատալիստական ներկայի  $\sigma <$  դեպքում առկա է արտահայտված ուղիղ կորելյացիոն կապ Ենթախումբ 1-ի գրեթե բոլոր սանդղակներում՝ բացառությամբ հիստերիայի սանդղակի: Այստեղ կապը ամենաթույլն է արտահայտված, սակայն ուղիղ թույլ կորելյացիայի մասին, միևնույնն է, կարող ենք խոսել՝  $r=0.108$ : Իրավիճակը,

սակայն, հետաքրքիր կերպով տարբերվում է Ենթախումբ 2-ի պարագայում. այստեղ գրեթե հավասար ուղիղ կորեյացիաներ առկա են մնացած սանդղակներում՝ բացառությամբ հիպոխոնդրիայի, դեպրեսիայի և վերոնշյալ հիստերիայի սանդղակների, որտեղ առկա է հակադարձ կորեյացիոն կապ: Այս արդյունքները հատկանշական են նրանով, որ հետազոտական վարկածը ենթադրում է ուղիղ կապի առկայություն ֆատալիստական ներկայի և դեպրեսիայի ու հիպոխոնդրիայի սանդղակների միջև, քանի որ ֆատալիստական ներկայի ժամանակային կողմնորոշմանը բնորոշ հոգեկան երևույթների չափանիշները համանման են այս սանդղակներում առկա երևույթների չափանիշների մեծ մասին: Ընդ որում՝ այդ փոխկապակցվածությունը պետք է ուժեղանար ՀՏԽ առկայության դեպքում:

Ենթախումբ 2-ում էականորեն տարբերվում է նաև հեդոնիստական ներկայի արտահայտվածությունը հոգեպաթիայի, պարանոյալուրջյան, շիզոֆրոզիայի և հիպոմանիայի սանդղակների դեպքում. այն ուղիղ կորեյացիայի մեջ է նշված սանդղակների հետ, և կորեյացիոն գործակիցները էականորեն բարձր են նույն Ենթախումբ 1-ի համեմատ: Սա ընդհանրական կերպով համապատասխանում է հեդոնիստական ներկայի և անձնային գծերի կապի մասին ենթադրությանը: Մասնավորապես՝ պարանոյալուրջյան դեպքում ակնհայտ է ակտուալ տագնապայնության և ներկայի նկատմամբ «հաճույքակենտրոն» վերաբերմունքի փոխկապակցվածությունը, որն ուղղված է այդ տագնապի ժամանակավոր թուլացմանը:

Հետաքրքրության է արժանի նաև պոզիտիվ անցյալի հակադարձ կորեյացիայի թույլ արտահայտվածությունը Ենթախումբ 2-ի դեպքում՝ ի տարբերություն Ենթախումբ 1-ի: Սա կարևոր ազդակ է առ այն, որ տրավմաների դեպքում էականորեն աղճատվում են անձի կայունությունն ապահովող, առողջության տեսանկյունից «դրական» համատեքստով հոգեկան երևույթների կառույցները, ինչը խախտում է հավասարակշռությունը և հանգեցնում «հակառակ նշանով» երևույթների գերարտահայտման և գերազդեցության:

Հոգեթերապևտիկ գործընթացում ԺՀ-ների և անձնային առանձնահատկությունների փոխկապակցվածությունները օգնում են հասկանալ ժամանակային կոնտինուումի նկատմամբ բուժառուի վերաբերմունքից բխող հնարավոր

հուզական և վարքային դրսևորումները: Մարտական գործողությունների մասնակիցների մոտ հեղոնիստական ներկայի, ֆատալիստական ներկայի և նեգատիվ անցյալի ԺՀ-ների բարձր արդյունքների դեպքում պարանոյալ և հիպոմանիակալ դրսևորումների հաղթահարման նպատակով պետք է ակտիվացվեն պոզիտիվ անցյալը պայմանավորող հնարավոր ռեսուրսները, քանի որ այս հետազոտությունը ցույց է տալիս դրանց ազդեցության ցածր մակարդակ հատկապես ՀՏԽ ախտանիշներով անձանց մոտ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հոգեբանական գրականության մեջ առկա ՀՏՄԽ համատեքստում ժամանակային հեռանկարների, անձնային գծերի վերաբերյալ իրականացված հետազոտությունները կրում են ոչ ամբողջական և ոչ ընդգրկուն բնույթ, սակայն, միևնույն ժամանակ, առկա հետազոտական տվյալները ստեղծում են նոր հետազոտությունների անցկացման հիմքեր և ունեն գիտական ու կիրառական հետաքրքրություն:
2. ՀՏՄԽ և ժամանակային հեռանկարների կապի մասին փորձարարական հետազոտությունները մեծ մասամբ առնչվում են տրավմաների՝ պատերազմական իրավիճակով չպայմանավորված դեպքերին կամ բացահայտում են գիտական համատեքստից միայն տրամաբանորեն բխող օրինաչափություններ, ինչպիսին է՝ «բացասական» ԺՀ-ների փոխկապակցվածությունը տրավմատիկ իրադարձության հետ:
3. Փորձարարական խմբում ավելի բարձր են նեգատիվ անցյալի, հեղոնիստական ներկայի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարների ցուցանիշները, իսկ պոզիտիվ անցյալի արտահայտվածությունը ավելի բարձր է ստուգիչ խմբի մոտ: Սա ցույց է տալիս, որ անձի բարեկեցության համար «բացասական» հանդիսացող ժամանակային հեռանկարների արտահայտվածությունները զգալիորեն բարձր են մարտական գործողությունների մասնակցության պարագայում, իսկ դրական արտահայտվածությունները կամ նույն մակարդակի են, կամ ավելի ցածր:
4. ՀՏՄԽ ախտանիշների բարձր մակարդակով անձանց շրջանում նեգատիվ անցյալի, հեղոնիստական ներկայի և ֆատալիստական ներկայի ժամանակային հեռանկարների ցուցանիշները ավելի բարձր են: Սա նշանակում է, որ ՀՏՄԽ ախտանիշների բարձր մակարդակը ունի ավելի մեծ ազդեցություն անձի բարեկեցության համար «բացասական» ԺՀ-ների



արտահայտվածության աճի վրա, քան մարտական գործողությունների մասնակցության փաստը: Սա բացատրվում է տրավմատիկ իրադարձության առաջացրած հոգեկան փոփոխություններով, որոնցից առաջինը հենց ժամանակային կոնտինենումի խախտումն է անձի հոգեկան աշխարհում:

5. ՀՏՄԽ ախտանիշների բարձր մակարդակով անձանց մոտ բարձր են դեպրեսիայի, շիզոֆրենիայի, պարանոյալության և հիպոմանիայի ցուցանիշները: Այստեղ հատկանշական է հիպոմանիայի և դեպրեսիայի համաժամանակյա բարձր արդյունքների առկայությունը, իսկ պարանոյալության դեպքում միջին արդյունքը բարձր է նորմայի առավելագույն շեմից: Սա ցույց է տալիս, որ տրավմատիկ ազդեցությունն ու ՀՏՄԽ-ը էականորեն բարձրացնում են անձնային առանձնահատկությունների արտահայտվածության մակարդակը: Այս երևույթի հիմքում ընկած է տրավմատիկ իրադարձության կողմից օրգանիզմի մարմնական և հոգեկան ռեսուրսների ակտիվացումը, ինչը հանգեցնում է անձնային առանձնահատկությունների բևեռացման:
6. Ժամանակային հեռանկարների և անձնային գծերի միջև վիճակագրական համեմատությունները ցույց են տալիս, որ նեգատիվ անցյալի և ֆատալիստական ներկայի ԺՀ-ները ուղիղ կորելյացիայի մեջ են գտնվում հիպոխոնդրիայի, դեպրեսիայի, պարանոյալության, շիզոֆրենիայի և հիպոմանիայի ցուցանիշների հետ և՛ փորձարարական, և՛ ստուգիչ խմբերի մոտ, սակայն մասնակցած անձանց խմբում գործակիցները ավելի բարձր են: Սա բացահայտում է նոր կորելյացիաներ՝ կապված շիզոֆրենիայի և հիպոմանիայի հետ: Հիպոմանիայի բարձր արդյունքներից կարելի է ենթադրել, որ տրավմաների դեպքում ակտիվանում են հոգեբանական գերփոխհատուցման մեխանիզմները:
7. ՀՏՄԽ ախտանիշներ ունեցող անձանց շրջանում ֆատալիստական ներկան և նեգատիվ անցյալը ուղիղ կորելյացիայի մեջ են գտնվում պարանոյալության, շիզոֆրենիայի և հիպոմանիայի ցուցանիշների հետ: Այս կապը առկա է, սակայն ավելի թույլ է արտահայտված պատերազմին մասնակցած և ՀՏՄԽ

ախտանիշներ չունեցող անձանց շրջանում: Պոզիտիվ անցյալը պատերազմին մասնակցած անձանց շրջանում հակադարձ կորելյացիայի մեջ է գտնվում հոգեպաթիայի և շիզոֆրիդիայի ցուցանիշների հետ, սակայն ՀՏՄԽ ախտանիշներ ունեցողների շրջանում այս կապը առկա չէ: Սա ցույց է տալիս, որ առկա է ուղիղ փոխկապակցվածություն ժամանակային հեռանկարների արտահայտվածությունների աճի և անձնային գծերի արտահայտվածության մակարդակների բարձրացման միջև փորձարարական ողջ խմբի մոտ, սակայն այն չի պայմանավորվում միայն ՀՏՄԽ առկայությամբ: Այս բացահայտումը պայմանավորվում է այն փաստով, որ մարտական գործողությունների մասնակից անձը կարծես «դուրս է մնում ժամանակի բնականոն ընթացքից», և առաջանում է վարքային նոր քրիհինգների ստեղծման կարիք, որոնք կլինեն ավելի հարմարեցված առկա հոգեբանական վիճակի համար:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ելնելով ստացված արդյունքներից՝ մարտական գործողությունների մասնակից և ՀՏՄԽ ունեցող անձանց հետ աշխատող մասնագետ-հոգեթերապևտներին կարելի է առաջարկել հոգեթերապևտիկ աշխատանքում ավանդական տրավմա ուղղորդված թերապևտիկ մոտեցումներին զուգահեռ չափել և հասկանալ բուժառուների ժամանակային հեռանկարների արտահայտվածությունները: Դա թույլ կտա մշակել ավելի արդյունավետ թերապևտիկ մարտավարություններ և աշխատանքում հստակորեն տարանջատել տրավմային նախորդող և հաջորդող հոգեբանական և հոգեկան խնդիրների սպեկտրումը:
2. Հոգեթերապևտիկ մարտավարության մշակման ընթացքում կարող են կարևոր ցուցիչներ դառնալ ժամանակային հեռանկարների և անձնային գծերի փոխկապակցվածությունների՝ այս հետազոտության մեջ արված բացահայտումները. որոնք հնարավոր է օգտագործել ինչպես ախտորոշիչ, այնպես էլ բուն հոգեթերապևտիկ գործընթացում՝ նվազեցնելով հոգեթերապևտիկ կուրսի տևողությունը և բարձրացնելով դրա արդյունավետությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը «Զինվորական ծառայության եվ զինծառայողի կարգավիճակի մասին» ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին. URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633>
2. Մանուսյան Ա.Հ. , Գրիգորյան Ա.Կ. “Գործող անձը եվ նրա ժամանակային հեռանկարները. էմպիրիկ ուսումնասիրման փորձ” «Արդի հոգեբանություն» գիտական հանդես, 2018, #2, Երևան, 65-75
3. Березин Ф. Б., Мирошников М. П., Соколова Е. Д., Методика многостороннего исследования личности (ММИЛ): структура, основы интерпретации, некоторые области применения. 3-е издание. Издательство «Березин Феликс Борисович», 2011—320 с.
4. Мелёхин А.И. Восприятие и познание времени в пожилом и старческом возрасте: Обзор зарубежных исследований [Электронный ресурс] // Современная зарубежная психология. 2015. Т. 4. № 2. С. 11—19
5. Микаелян В.А. Психологическое время в норме и патологии личности, (2016) Ереван
6. Микеладзе Л.И. Восприятие времени при аффективных расстройствах в позднем возрасте: дисс. ... канд. психол. наук. М., 2016. 195 с.
7. Хасанов И.А.. Феномен времени. Часть II. Субъективное время. Вып. 2. – М., 2005, с. 35-47, 47-58.
8. Alderson, M. J. (1974). Effect of increased body temperature on the perception of time. *Nursing Research*, 23, 42–49.
9. Allan, L. G., & Gibbon, J. (1991). Human bisection at the geometric mean. *Learning and Motivation*, 22, 39–58.
10. Alvos L, Gregson RA, Ross MW. Future time perspective in current and previous injecting drug users. *Drug Alcohol Depend.* 1993 Jan;31(2):193-7. doi: 10.1016/0376-8716(93)90072-x. PMID: 8436064.

11. American Psychiatric Association. (2013). Diagnostic and statistical manual of mental disorders (5th ed.). <https://doi.org/10.1176/appi.books.9780890425596>
12. Angrilli, A., Cherubini, P., Pavese, A., & Manfredini, S. (1997). The influence of affective factors on time perception. *Perception and Psychophysics*, 59, 972–982.
13. Baddeley, A. (1966). Time-estimation at reduced body-temperature. *American Journal of Psychology*, 79, 475–479.
14. Bandura, A. (1997). *Self-efficacy: The exercise of control*. New York: Freeman.
15. Bausenhart, K. M., Dyjas, O., & Ulrich, R. (2014). Temporal reproductions are influenced by an internal reference: Explaining the Vierordt effect. *Acta Psychologica*, 147, 60–67.
16. Beigel, A., & Berren, M. R. (1985). Human-induced disasters. *Psychiatric Annals*, 15(2), 143–150; Horowitz, M. J. (1997). *Stress response syndromes: PTSD, grief, and adjustment disorders*. Lanham, MD: Jason Aronson.
17. Bell, C. R. (1965). Time estimation and increases in body temperature. *Journal of Experimental Psychology*, 70, 232–234.
18. Bell, C. R. (1966). Control of time estimation by a chemical clock. *Nature*, 210, 1189–1190.
19. Bell, C. R. (1975). Effects of lowered temperature on time estimation. *Quarterly Journal of Experimental Psychology*, 27, 531–538.
20. Bell, C. R., & Provins, K. A. (1963). Relation between physiological responses to environmental heat and time judgments. *Journal of Experimental Psychology*, 66, 572–579.
21. Birngruber, T., Schroter, H., & Ulrich, R. (2014). Duration perception of auditory and visual oddball stimuli: Does judgment task modulate the temporal oddball effect? *Attention, Perception, and Psychophysics*, 76, 814–828.
22. Block, R. A., & Reid, M. A. (1978). Remembered duration: Evidence for a contextual change hypothesis. *Journal of Experimental Psychology: Human Learning and Memory*, 4, 656–665.

23. Bond, M., & Feather, N. T. (1988). Some correlates of structure and purpose in the use of time. *Journal of Personality and Social Psychology*, 55, 321–329.
24. Brown, A. D., Root, J. C., Romano, T. A., Chang, L. J., Bryant, R. A., & Hirst, W. (2013). Overgeneralized autobiographical memory and future thinking in combat veterans with posttraumatic stress disorder. *Journal of Behavior Therapy and Experimental Psychiatry*, 44(1), 129–134. <https://doi.org/10.1016/j.jbtep.2011.11.004>
25. Brown, S. W. (1997). Attentional resources in timing: Interference effects in concurrent temporal and nontemporal working memory tasks. *Perception and Psychophysics*, 59, 1118–1140.
26. Carstensen, L. L., Isaacowitz, D. M., & Charles, S. T. (1999). Taking time seriously: A theory of socioemotional selectivity. *American Psychologist*, 54, 165–181.
27. Clark, L. F., & Collins, J. E. (1993). Remembering old flames: How the past affects assessments of the present. *Personality and Social Psychology Bulletin*, 19, 399–408.
28. Cohen, R. E., & Ahearn, F. L. (1980). *Handbook for mental health care of disaster victims*. Baltimore: Johns Hopkins University Press.
29. Cornelia Măirean, Loredana R. Diaconu-Gherasim, The relation between time perspective and posttraumatic stress symptoms: The mediating role of traffic locus of control, *Personality and Individual Differences*, Volume 192, 2022, 111586, ISSN 0191-8869, <https://doi.org/10.1016/j.paid.2022.111586>.
30. Cottle, T. J. (1968). *The location of experience: A manifest time orientation*. Cambridge, MA: Harvard University Press.
31. Cottle, T. J. (1976). *Perceiving time: A psychological investigation with men and women*. New York: Wiley.
32. Creelman, C. D. (1962). Human discrimination of auditory duration. *Journal of the Acoustical Society of America*, 34, 582–593.
33. Cunningham, K. F., Zhang, J. W., & Howell, R. T. (2015). Time perspectives and subjective well-being: A dual-pathway framework. In *Time perspective theory; Review, research and application* (pp. 403–415). Cham: Springer.

34. Dainton, B. (2014). The phenomenal continuum. In V. Arstila & D. Lloyd (Eds.), *Subjective time: The philosophy, psychology, and neuroscience of temporal-ity* (pp. 101–137). Cambridge, MA: The MIT Press.
35. DeVolder, M., & Lens, W. (1982). Academic achievement and future time perspective as a cognitive-motivational concept. *Journal of Personality and Social Psychology*, 42, 566–571.
36. Droit-Volet, S., & Wearden, J. (2002). Speeding up an internal clock in children? Effects of visual flicker on subjective duration. *Quarterly Journal of Experimental Psychology*, 55B, 193–211. References 237-238 *The Psychology of Time Perception*
37. Droit-Volet, S., & Wearden, J. H. (2001). Temporal bisection in children. *Journal of Experimental Child Psychology*, 80, 142–159.
38. Droit-Volet, S., & Wearden, J. H. (2015). Experience sampling methodology reveals similarities in the passage of time between young and elderly adults. *Acta Psychologica*, 156, 77–82.
39. Droit-Volet, S., & Zélanti, P. (2013a). Development of time sensitivity: Duration ratios in time bisection. *Quarterly Journal of Experimental Psychology*, 66, 271–286.
40. Droit-Volet, S., & Zélanti, P. (2013b). Development of time sensitivity and information-processing speed. *PLoS ONE*, 8(8), e71424.
41. Droit-Volet, S., Brunot, S., & Niedenthal, P. M. (2004). Perception of the duration of emotional events. *Cognition and Emotion*, 18, 849–858.
42. Droit-Volet, S., Turrett, S., & Wearden, J. (2004). Perception of the duration of auditory and visual stimuli in children and adults. *Quarterly Journal of Experimental Psychology*, 57, 797–818.
43. Droit-Volet, S., Wearden, J. H., & Zélanti, P. (2015). Cognitive abilities required in time judgement depending on the temporal task used: A comparison of children and adults. *Quarterly Journal of Experimental Psychology*, 68, 2216–2242.
44. Droit-Volet, S., Wearden, J., & Delgado-Yonger, M. (2007). Short-term memory for time in children and adults: A behavioral study and a model. *Journal of Experimental Child Psychology*, 97, 246–264.

45. Ehlers, A., & Clark, D. M. (2000). A cognitive model of posttraumatic stress disorder. *Behaviour Research and Therapy*, 38(4), 319–345.  
[https://doi.org/10.1016/s0005-7967\(99\)00123-0](https://doi.org/10.1016/s0005-7967(99)00123-0)
46. Fechner, T. G. (1860). *Elemente der Psychophysik*. Leipzig: Breitkopf & Haertel.
47. Fortin, C., & Breton, R. (1995). Temporal interval production and processing in working memory. *Perception and Psychophysics*, 57, 203–215.
48. Fortin, C., & Rousseau, R. (1987). Time estimation as an index of processing demand in memory search. *Perception and Psychophysics*, 42, 377–382.
49. Fortin, C., Duchet, M. L., & Rousseau, R. (1996). Tapping sensitivity to processing in short-term memory. *Canadian Journal of Experimental Psychology*, 50, 402–407
50. Fortin, C., Rousseau, R., Bourque, P., & Kirouac, E. (1993). Time estimation and concurrent nontemporal processing: Specific interference from short-term memory demands. *Perception and Psychophysics*, 53, 536–548.
51. Fraisse, P. (1963). *The psychology of time* (J. Leith, Trans.). Westport, CT: Greenwood Press.
52. François, M. (1927). Contributions à l'étude du sens du temps: La température interne comme facteur de variation de l'appréciation subjective des durées. *L'Année Psychologique*, 27, 186–204.
53. Freud, S., & Jones, E. (Ed.). (1922). *Beyond the pleasure principle*. (C. J. M. Hubback, Trans.). The International Psycho-Analytical Press.  
<https://doi.org/10.1037/11189-000>
